

3378

491-99-8

9-14

2010

1

491.99-8

Գ-14 ՅՈՎ. ԳՍԳՆՃՅԱՆ

Ծ Ի Ա Ծ Ա Ն

Գ. ԳԻՐՔ

Բ. ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ

*բարգմանած, հեռուդո. քերթ պատրաստած եւ ինկնուրյն
ուածներու արտասպուրեան իրաւունք վերապահուած է*

Կ. ՊՈԼԻՍ

ԳՐԱՏՈՒՆ Գ. ՊՍԼԵՆՑ

1922

2002

51507. ան

ՏՊԱՐԱՆ ԵՒ ԿԱԶՄԱՏՈՒՆ

Օ. ԱՐՁՈՒՄԱՆ

№ 318



38418-67

Handwritten signature or initials.

Ծ Ի Ա Ծ Ա Ն

Գ. ԳԻՐԲ



1. ՄԵԾ ՄԱՆՉԸ

Առջի արթնն ղեռ շահ փոքրիկ
 Մանկիկ մ'եի, բայց հիմա որ
 Իրերդ, կարդալ գիտեմ աղուոր,
 Մեծ մանկ մըն եմ, ա՛յ յեմ պզտիկ:

Մորս ծուռկերուն ըրած զիտիկ
 Կը տեսնեիմ գիտ շահ անգամ,
 Բայց հիմա եմ վեց արեկան,
 Ի՞նչ մանկ մըն եմ, ա՛յ յեմ պզտիկ:

Handwritten mark or signature.

Հիմա ամէն or հանդարտիկ
 Կերթում. կուգամ մանկապարտեզ,
 Օրինորդս անգամ կ'ըսես թէ ես
 Մէծ մանկ մըն եմ, ա՛յ չեմ պզտիկ :

Պայուսակիս մէջ այս կոկիկ
 Ունիմ մասիս, գիրք ու տեսակ,
 Կ'առնեմ դասեր տեսակ տեսակ,
 Մէծ մանկ մըն եմ, ա՛յ չեմ պզտիկ :

X

— Ի ու թ դեռ ինչեր ունիք ձեր պայուսակին մէջ :

ԱՌԱՄ.— Խօսքը մեծիկն, ջուրը՝ պզտիկին :

2. — ՅԻՍՈՒՍԻՆ ՆՈՒԷՐ

Մայրիկը նստած՝ Աւետարան կը կար-
 դար : Չապէլ, վեց տարեկան աղջիկը, անոր
 մօտ կը խաղար իր պուպրիկով :

Մայրը հասաւ, այնտեղ ուր Յիսուս
 կ'ըսէ. «Կենդանիները որջ ունին և երկինքի
 թռչունները՝ բոյն . իսկ Մարգու Որդին չու-
 նի տեղ մը՝ գլուխը հանգչեցընելու» :

Փոքրիկ Չապէլ որ լսած էր այս խօս-
 քերը, ըսաւ : ✓

6. — ԻՆՉՊԷՍ ԿԸ ԳՐԵՆ ԿԱՏՈՒՆ

Աշոտ, Վահէ և Արմենակ երեք եղբայր-
 ներ էին : Աշոտ և Վահէ մանկապարտեզ
 կ'երթային. Աշոտ ծաղիկ դասարանին մէջ
 էր, Վահէ՝ բողբոջ դասարանին մէջ . իսկ
 Արմենակ գեռ հինգ տարեկան չկար և տունը
 կը մնար :

Աշոտ սորվեր էր արդէն բաւական գրել
 ու շատ ուրախ էր : Իսկ Վահէ իր եղբոր
 հետեւելու համար կ'աշխատէր որ ինք ալ
 գրէ և մատիտը ձեռք առնելով՝ թուղթերու
 վրայ շէպէլէկներ կը գծէր, և անագին թուղթ
 ու մատիտ կ'սպառէր : *


Անգամ մը երբոր Աշոտ հպարտութեամբ
 կը պարծենար Վահէին թէ ինք գրել գիտէ,
 Վահէ բարկացած գոչեց :

— Է՛, ի՛նչ կը պարծենաս կը կենաս .
 գրելն ալ ի՛նչ է, ես ալ գիտեմ գրել : X

— Եթէ գրել գիտես, գոչեց Աշոտ աւելի
 բարկացած, եկուր հետոյ մրցումի ելլենք,
 մէյմէկ բան գրենք . տեսնենք, մեզմէ ո՞րը
 պիտի յաջողի :

Որոշեցին գրել կասու, և իրենց իրաւա-
 ղար կարգեցին պիտիկ եղբայրնին Արմենակը
 որ գեռ գրի վրայ բնաւ գաղափար չունէր :

Նախ Աշոտ մատիտը ձեռք առաւ և հատիկ հատիկ գրեց կասու, իսկ վահէ ալ իր մատիտովը կրցածին շափ կատուի նմանութիւն




մը գծեց, պոչով, աչքերով, ականջներով, չմոռնալով նաև պեխերը: Աշոտ խնդալէն կը մարէր տեսնելով

եղբօրը գծած շէպէլէկը. յաղթանակը ինք պիտի տանէր ապահովապէս:

Վերջապէս երկու գրուածները ներկայացուցին Արմենակին որ ուշազիր նայելէ յետոյ՝ վճռեց թէ վահէին գրածը աւելի կատուի կը նմանէր քան թէ Աշոտին գրածը...

— Ո՛րը կրցած էր ստուգիլ գրել կատու, Աշոտ թէ վահէ:

— Գրելուն և ծրագրելուն տարբերութիւնն ի՞նչ է գծագրելը գրել է:



7. — ԹԻԹԵՌՆԻԿՆ ՈՒ ՄԵՂՈՒՆ

Թիթեռնիկը կ'ըսէր մեղուին
Թեւերը բաց ու ցնծագին,
— Եթէ ըլլայ օդը պայծառ
Մէկտեղ խաղալ երթանք անտառ:
— Չէ, չէ, կ'ըսէր խելօք մեղուն
Ես չեմ սիրեր մինչև իրիկուն
Մնալ անհոգ ու թափառուն,
Այլ փեթակիս գործն անպատճառ
Պէտք է ընեմ ես անդադար,
Եթէ ըլլայ օդը պայծառ: †

— Ի՞նչ կ'ընէ մեղուն, ի՞նչ կ'ընէ թիթեռնիկը:

— Դուք ի՞նչ պարտիք ընել, դուք որո՞նք կ'ուզէք նմանիլ:

8. — ԱՐՈՒԹԻԿՆ ՈՒ ԻՐ ԿԱՊԱՆ

Արութիկ մէկ տարեկան երախայ էր .
արդէն սենեակին մէջ կը պըշէր ամէն կողմ .
մինակը մէնմէն կ'ընէր և մեծ փափաք ունէր
քայելու :

Մայրիկը ուրախ էր . հազար գովք կը
կարդար իր Արութիկին որ շուտով տատիս
ընէ : Կը խոստանար անոր կարել տալ հրա-
շալի կապայ մը , ու տեսէք , ինչեր կ'երգէր

Ելիր , կանգնէ ու քայլէ ,

Տեսնեմ պոյիդ ինչ վայլէ .

Պապան թող վարպետ բերէ ,

Արութիկիս կապայ կարէ .

Արեգակն երես ընէ ,

Լուսնկան աստառ ձեւէ .

Թուխ ամպեր բամպակ զնէ ✕


Աղեղնակ սրճէֆ քաշէ ,

Աստղներ կոճակ շարէ ,

Արութիկ հագնի , վայելէ . . . :

Շատ չանցաւ , Արութիկ սկսաւ տատիս
ընել : Մայրիկը կարել տուաւ անոր խատու-
տիկ կապայ մը ու հազցուց : ✕

ՀԱՆՆԵԼՈՒԿ 2. — Ձեր մօր գաւակն է , բայց ձեր
եղբայր չէ , ո՞վ է ան :



9. — ՊԱՌԱՒԻՆ ՍԱԳԵՐԸ

Սագերը գնացին գետին ափունքը կեր
գտնելու , ճճիներ որսալու : Իրիկունը պա-
ռաւն առաւ գաւազանը և գնաց որ տուն
բերէ գանոնք : Սագերը պառաւը տեսնել-
նուն պէս՝ ջուրը նետուեցան և սկսան լո-
ղալ : Պառաւը կանչեց գանոնք :

Ճո՛ւ , ճո՛ւ , ճո՛ւ , շատակեր

Սև ու սպիտակ իմ սագեր ,

Հերիք որչափ լողացիք ,

Հերիք որչափ գետին մօտ

Որդեր կերաք դուք տղմտ .

Երթանք , երթանք դէպի տուն

Ձեզի կեր տամ իրիկուն :

Չար սագերը չուզեցին ականջ տալ ,
վիզերնին երկնցուցին , կարմիր ոտքերնին



շարժեցին, լայն թեւերնին պարկին, կըրուկ-
նին բացին և դա՛, դա՛ գոռացին:

Բայց պառաւը ինչ ըրաւ՝ չըրաւ, սա-
գերը տուն գարձուց գաւազանովը:

- Դեռ ուրիշ ինչ ջրային թռչուն գիտէք:

10. — ՓՈՔՐԻԿ ՍՆԱՓԱՌԸ

Շընափառ մը կար փոքրիկ,
Հագի վեց էր իր սարիք.
Օր մը դսաւ իր միտէն.
«Քե՛ծ պարուն մ'եմ ես արդէն»:


Վեհ ֆայտերով գրնաց ան,
Առաւ պապուն գաւազան,
Եւ հօրը մե՛ծ գլխարկին
Մէջ թաղուեցաւ կիսովին:

Երբ դուրս ելաւ, փողոցին
Քարերն իր սակ դողացին.
Նա մե՛ծ մարդեր բարեւեց
Իր սարիքովն հագի վեց:

58918-67

Անցորդները փողոցին
Քահ քահ մըն է փրցուցին.
ՔԼսին. «Գլխա՛րկ պատռակաւ
«Ո՛ւր կը սանխս աշո՛ տղան»:

111111
20202



112
110
220

11. — ՍՔՐՂՍՂԻՆ ԸՆՏՔՆԻՔԸ

Քաղաղը լայն բակին մէջ կը ճեմէր,
Գլուխին վերև ոսկի կատարքը կը ճօճէր,
Կտուցին տակ կարմիր մօրուքը կը շարժէր:
Անոր կտուցը թուրի պէս էր, պոչը՝
ջքեղ, ոտքերը բետեր ունէին, թեւերը՝ սի-
րուն շերտեր: Ճանկերով հողը կը փորէր և
հաւերն ու ձագերը կը հրաւիրէր:



— ՃՈՆ, ճՈՆ, ճՈՆ, ճՈՆ, ճՈՆ, հաւիկ-
 ներ, հաւ-մայրիկներ, խատուտիկներ, սեւեր,
 ճերմակներ, գեղիններ ու գորշեր, հաւաք-
 ուեցէք ձեր քնքուշ ձագերուն հետ, ձեզի
 համար աղբը քրքրեցի, հատիկներ պատ-
 րաստեցի :




Հաւ ու ձագ հաւաքուեցան, կռկռացին,
 կռկռացին բայց փոխանակ ուտելու՝ իրարու
 հետ կռուրտեցան :

Աքաղաղը շտիրեց այս բանը. զանոնք
 պատժել ուզեց, մէկուն գլուխէն, միւսին
 գանկէն բռնեց, կտցեց, թեւերը թափե-
 թափ գարկաւ, ամէնքն ալ հեռացուց, հա-
 տիկներն ինք կերաւ. յետոյ տանիքին վրայ
 թռաւ, թեւերը շարժեց և գիլ ձայնով կան-
 չեց.

XX XX XX XX XX X

— ԿՈՆ-ԿՈՆ-ԻՆԿ-ԿՈՆ... :



12. — Հ Ա Ի - Մ Ա Յ Ր Ի Կ Ը

Կրօկրօս, կրօկրօ՛ս, կրօկրօսա՛ւք...
 Պարտեգիկ մէջ օղն է սաք.
 Հաւ-մայրիկին քերին սակ
 Վառեակներ կան ըսպիսակ :
 Թոյունի պէս նորաքեր
 ձրվրլուն, նորք ու քեքեր,
 Իրենց մօր շուրջն ու վրան
 Կը ճրջեն ու կը քրքրան... :

Կրօկրօ՛ս, կրօկրօ՛ս, կրօկրօսա՛ւք...
 Պարտեգիկ մէջ օղն է սաք.
 Եւ երկինքէն կապուսակ.

Լոյս կը տեղայ ջիւնջ , յստակ :
 Խոտիկ վրայ դաշարուն
 Խումբը նորեկ հաւերուն
 Գողթիկ , փափկիկ ու սիրուն
 Կը յածի մօտն ու հեռուն . . . :

Կրկնէ՛ս , կրկնէ՛ս , կրկնէ՛սա՛ւ . . .

Պարտեգիկ մեջ օղն է սա՛ւ .

Հաւ մայրիկն աչ գուարթագիկ ,

Իր ձագերուն տուած հոգիկն ,

Անոնց համար օրն ի բուն

Սիրտը սիրով սրտփուն

Անխոնջ , անդուշ , անվաստակ

Կընէ կրկնէ՛ս , կրկնէ՛սա՛ւ . . . :

13. — ԽԱՂԱՍԷՐ ԱՂՋԻԿՆԵՐԸ

Երկու փոքրիկ ու թուխ թռչուններ ,
 երկու հատ ալ փոքրիկ ու գորշ թռչուններ
 թառած էին ծառին վրայ : Չորս փոքրիկ
 թռչունները թուխ ու գորշ հոն կ'երգէին
 անուշ անուշ :

Երկու փոքրիկ ու սև բազեր , երկու
 հատ ալ փոքրիկ ու ճերմակ բազեր գետա-
 կին մէջ կը դառնային : Չորս փոքրիկ բա-

զերը ճերմակ ու սև հոն կը լողային արագ
 արագ :

Երկու փոքրիկ բամպակ , գառնուկներ ,
 երկու հատ ալ փոքրիկ նաշխուն գառնուկ-
 ներ մարգերուն վրայ կ'արածէին : Չորս
 փոքրիկ գառնուկները բամպակ ու նաշխուն
 հոն կը խայտային կայտառ , կայտառ : X X

Երկու փոքրիկ աղջիկներ կարմիր հա-
 գած , երկու հատ ալ կապոյտ հագած փոք-
 րիկ աղջիկներ կը պտրտէին գետակին եզեր-
 քը : Չորս փոքրիկ աղջիկները կարմիր ու
 կապոյտ հագած հոն կը խաղային ուրախ ,
 ուրախ :

Քիչ վերջ չորս փոքրիկ թուխ ու գորշ
 թռչունները յոգնեցան ու դադրեցան եր-
 գելէ . յետոյ չորս փոքրիկ ճերմակ ու սև
 բազերն ալ յոգնեցան ու դադրեցան լողալէ .
 Ի վերջոյ չորս փոքրիկ բամբակ ու նաշխուն
 գառնուկները յոգնեցան ու դադրեցան խայ-
 տալէ , բայց ան չորս պզտիկ կարմիր ու
 կապոյտ հագած աղջիկները չը յոգնեցան ու
 զեռ կը խաղային ուրախ ուրախ :


Անոնք շատ խաղասէր էին :



14. — ԽՈՒՍԱՓՈՒԿ ԼՈՒՍՆԿԱՆ

Քոյրէս լուսնակն ուղեցի ես
 Որ նա՛ շուրին մէջ կը խաղար ,
 Բայց քուրիկըս ծիծաղեցաւ ,
 Զիս ծաղրելով՝ կոչեց « յիմար » .
 Ես ալ կամաց մը բռնեցի
 Իոյին շուրը թափեցի վար :
 Մէյմն ալ տեսնեմ որ վերն՝ հեռուն
 Ամպին բովն է գացեր , կեցեր ,
 Քար մը առի և ծառերուն
 Շուքին տակէն
 Ուղիղ իրեն
 Նետեցի :
 Ան ալ՝ գիտեմ , ինձմէ վախէն
 Մուռ , ծուռ երեսըս նայեցաւ
 Գնաց , մտաւ մէջն ամպերուն ,
 Քարին ցաւէն . . . գուցէ լացաւ :

— Լուսինը գոյին մէջ կը մանէ . . . ուրեմն ի՞նչ պատահած էր , քուրիկը ի՞նչու կը ծիծաղէր :



15. — ՓՈՔՐՈՒԿ ՀԵՐՈՍԸ

Հայրիկը կազանդին շատ մը աղուոր
 խաղալիքներ առաւ վահանիկին համար :
 Ատոնց մէջ կար գորշ ձիակ մը , պզտիկ
 հրացան մը և գեղեցիկ թուր մը : Վահա-
 նիկին ուրախութիւնը չափ չունէր :

Իրացի տունէն Նուրհանն ու Արփին
 եկած էին վահանեց տունը և կը հիանային
 այդ սքանչելի խաղալիքներուն վրայ :

Վահանիկ հեծաւ ձիակը , կախեց հրա-
 ցանը ուսին , ձեռք առաւ թուրը , և սկսաւ
 հերոսական ձեւերով շրջանն ընել սենեակին :

— Ես կտրի՛ճ եմ , կտրի՛ճ , կը պոռար ,
 ո՞վ կընայ իմ գէմս ելլել , ես չեմ վախնար
 թշնամիէն , թող գայ որ մէկ հարուածով
 գետին փռեմ . . . :

Այդ պահուն յանկարծ սենեակին մէկ
 անկիւնէն պզտիկ մուկ մը դուրս ելաւ , և
 շուարած՝ իսկոյն փախաւ մտաւ իր ծակը :


Մեր փոքրիկ հերոսը՝ Վահանիկ, տեսաւ մուկը, ու տեսաւ թէ չէ, վախէն լեզին պատռեցաւ, մէկգի նետեց ձի, թուր, հրացան, և սենեակէն դուրս փախաւ, սարսափի աղաղակներ արձակելով:

Վահանիկի աղաղակներէն՝ մայրիկը վազեց եկաւ, մինչդեռ ասդին Նուրհանն ու Արփին խնդալէն կը ճաթէին:

Իէպօքին լուրը տարածուեցաւ թաղին տղոց մէջ, և շատ ծիծաղ պատճառեց:

Անկէ յետոյ հերոս անունը կախեցին մեր Վահանիկին և թաղին մէջ կամ դպրոցը՝ խաղի ատեն «Հերոս Վահան» կը կանչէին զինքը:

Ա.Ռ.Ա.Ծ. — Մե՛նծ կեր, մե՛նծ մի՛ խօսիր:



ՆՈՒՐՀԱՆՆ ու ԱՐՓԻՆ

16. — ՊՈՒՊՐԻԿԸ

Ծափիկ ծափիկ ծիրանի,
Կարմիր խնձոր կը նմանի,
Ոսկի դեղձան մազերն ալ
Հովը թէ՛լ թէ՛լ կը սսնի:

Լոյս լոյս աղուոր աղաւնի
Պայծառ արեւ կը նմանի,
Ծովէն կապոյտ այրուկն ալ
Իեպի երկինք կը նայի:

Ծաղիկ ծաղիկ ծիրանի,
Վառ վառ վարդի կը նմանի,
Զիւնէն ճերմակ քաթիկն ալ
Կ'ուզէ մարգրիտ մասսնի:

17. — ԼԵԶՈՒԻ ԽԱՂԵՐ

Սեպուհ, Խորէն և Լուսաբեր, երեք դրացի մանուկներ կը շաղակրատէին պարտեզին մէջ: Գիտօսիկները դարձեր էին և գիտութիւն կը ծախէին իրարու՝ հանելուկներ,

շուտասելուկներ և ուրիշ լեզուի խաղեր
առաջարկելով :

Քանի մը հանելուկներէ, շուտասելուկ-
ներէ վերջ՝ Սեպուհ ըսաւ :

— Գիտցէք նախիմ, Պոլիսին ճիշտ մէջ-
տեղը, որն է :

— Ղալաթիան է, պոռաց մէկէն Խորէն :

— Զգիտցար, ըսաւ Սեպուհ :

— Կէտիկ-Փաշան է, գոչեց Լուսաբեր :

— Դուռն ալ չգիտցար, Պոլիսին ճիշտ
մէջտեղը Լ գիրն է, ըսաւ Սեպուհ և աւել-
ցուց :

— Հիմա գիտցէք, նախիմ, մուխը ին-
չո՞վ կսկսի և ինչո՞վ կը վերջանայ :

Խորէն և Լուսաբեր այս անգամ շուտով
թափանցեցին խաղին հնարքին միաբերան
գոչեցին : Խ

— Մ ով կսկսի և Խ ով կը վերջանայ :

— Այս անգամ գիտցաք, ըսաւ Սեպուհ :

— Կեցէք ես ալ բան մը ըսեմ ձեզի,
սև մատիտով կրնա՞ք կարմիր, կանանչ, կա-
պոյտ գրել, պոռաց Լուսաբեր, ես կրնամ
սև մատիտով գրել ինչ գոյն որ կ'ուզէք :

Սեպուհ և Խորէն բաւական մտածեցին
և չկրցան խելք հասցնել :

— Այդ կարելի չէ, ըսաւ Խորէն :

— Այդ անհնարին բան է, յարեց Սեպուհ :

Լուսաբեր յաղթական խլեց գրպանէն
Սեպուհի սև մատիտը և թուղթի կտորի մը
վրայ սկսաւ գրել :

— Ահա սև մատիտով կարմիր, և գրեց
կարմիր :

— Ահա սև մատիտով կապոյտ, և գրեց
կապոյտ :

— Ահա սև մատիտով կանանչ, և գրեց
կանանչ :

Սեպուհ և Խորէն ամօթահար եղան որ
չկրցան հասկնալ այսքան պարզ բան մը :

— Դուք ալ գրեցէ՛ք սև մատիտով կապոյտ, կարմիր,
կանանչ, դեղին, ճերմակ բաւերը և ուրիշ ի՞նչ գոյներ որ
գիտէք :

ՀԱՆՅԵԼՈՒԿ 3. — Հեռուանց կուգայ կյո՞ր փաթոցիկ,

Իրաւ փաթոց՝ է, ի՞նչ է,

Վրան-գլուխն է խաւովիկ,

Քուրդի որդի՝ է, ինչ է.

Կարգալ չունի, գիր կը գրէ,

Աս ի՞նչ տեսակ գրագիր է :

Տունն որ այրի, խաղ կը կանչէ,

Թէ որ խեղդ չէ, հապա ի՞նչ է :

18. — ՏԵՐԵԻՆԵՐՈՒՆ ՄԱՀԸ

Աշունին վերջերը՝ բարակ, կճող քամի մը բարձր սարերէն կամաց, կամաց եկաւ, իջաւ դաշտերը, սուրաց. ամէն դի, մտաւ պարտէզներն ու այգիները. բոյսերուն ու ծառերուն ականջին մէյմէկ բան փսփսաց ու անցաւ, գնաց դէպի անտառը:

Քամին բարի չէր ու կ'երեւի թէ աղէկ լուրեր չփսփսաց անոնց ականջն ի վար, որովհետեւ խոտերը ահուղողով սրսրփացին, կանանչ տերեւներն իրենց վախէն սկսան դեղնիլ և անտառը սարսափէն դողաց:

Քանի մը օր վերջ՝ գիշեր մը պազ պազ եղեամբ իջաւ ամէն կողմ. իր թունաւոր փողին սրսկեց ծառերուն ու բոյսերուն վրայ. հիւանդացան բոլոր տերեւները և քիչ օրէն սքլեցան, չորցան, մեռան ցրտահար:

Շատ շանցաւ՝ չար քամին նորէն եկաւ, այս անգամ ուժգին թափով. իջաւ դաշտերը, մտաւ անտառը, վրճ, վրճ, սուրաց, արշաւեց ամէնդի, թափեց մեռած տերեւները, խլեց չորցած խոտերը, և փռեց աջ ու ձախ, ցրուեց սար ու ձոր:

Եւ ծառերը մնացին մերկ ու տկող, և դաշտերը դարձան անապատ:

— Ե՛րբ կը պատահին այս բաները

ԱՌԱՄ. — Այս օրուան եռշր, վաղուան փուշը:



19. — ՏՂԱՆ ՈՒ ԹՌՉՈՒՆԸ

Դէպ ո՛ւր կ'երթաս, նախտուն թռչուն, ո՛ւր կը թողուս քու բոյնդ ու տուն, կեցի՛ր, ինձի երգէ՛ երգեր, Ապրէ՛ իմ մօտ բոլոր ձրմեռ:

— Ձեր երկրին մէջ եկաւ աշուն, Տերև չմնաց վրայ ծառերուն, Չկայ արև, տաք տաք օրեր, Ի՞նչպէս երգեմ անուշ երգեր: Սիրուն մանուկ, մանուկ նախտուն, Ես չեմ մոռնար իմ բոյնն ու տուն երբ կրկին գայ տաքուկ դարուն. Կուգամ, կ'երգեմ քեզ օրն ի բուն:

— Ո՛ր թռչունները կը գաղթեն աշունին, ո՛ւր կ'երթան:

— Ե՛րբ կը վերադառնան գաղթող թռչունները:



20. — ԹԱՆԿԱԳԻՆ ԽՈՏԸ

Աննիկ և Լուսիա իրարու գրացի գեղ-
ջուկ աղջիկներ էին։ Օր մը՝ մէյմէկ կողով
լեցուն պտուղ առած, միասին քաղաք կեր-
թային։ Կողովները բաւական ծանր էին։

Ճամբուն վրայ Աննիկ շարունակ կը
խօսէր, կը խնդար և կատակներ կ'ընէր,
մինչդեռ Լուսիա անդադար կը մըմռար ու
կը գանգատէր։

— Ի՛նչպէս ալ կը խնդաս, ըսաւ Լու-
սիա իր ընկերուհիին, քու կողովդ ալ իմինիս
չափ ծանր է և դուն ինձմէ աւելի ուժով
չես, ի՛նչպէս ալ սիրտ ունիս խնդալու, կա-
տակելու։

Աննիկ պատասխան տուաւ և ըսաւ։

— Ես կողովիս մէջ տեսակ մը խոտ
դրեր եմ որ գայն կը թեթեւցնէ։

— Իբաւ որ, գոչեց Լուսիա, ատիկա
թանկագին և հրաշալի խոտ մը ըլլալու է.
ես ալ ունենայի և բեռս թեթեւար, ի՛նչ
աղէկ կ'ըլլար...։ Ըսէ, կ'աղաչեմ, այդ
խոտին անունն ի՛նչ է։

— Համբերութիւն է այն խոտին անունը,
պատասխանեց Աննիկ գուարթ ծիծաղով մը,
և աւելի ուրախ՝ շարունակեց իր ճամբան։

Ա.Ռ.Ա.Մ. — Համբերե՛ որ բերանդ համ գայ։

21. — ՓՈՔՐԻԿ ՀՐԵՇՏԱԿԸ

Ինձի կ'ըսեն՝ «Հրեշտակ մըն ես»,
Բայց ասկէ յեմ չըփանար ես.
Գովեստի մեր մ'է ասիկա
Որուն բընար տեղի չըկայ։

Թէեւ պզտիկ եմ տակաւին՝
Կը փափաքիմ ես արճովին
Այդ անունին՝ սուրբ ու աղուոր,
Ըլլալ իրօք արժանաւոր։




Քաղցրաբարոյ ըլլալ կ'ուզեմ .
Նստել զըսարք ու ժրպատեմ ,
Միշտ հրնազակն ու քարեկիրք
Աշխատաստե՛ր ու գրքասիրք :

Այսպէս կրնամ երկրիս վրաս
Հրեշտակներու ըլլալ նրման ,
Եւ անկէ ետք՝ երկինքն ալ
Իրաւցրնէ հրեշտակ դառնալ :



22. — ՀԱԼԱԾԱԿԱՆ ԳԱՅԼԸ

Գայլը սրսորդներէն և շուններէն հալածուելով՝ գիւղ մտաւ լեղապատառ : Այնտեղ հանդիպեցաւ կատուին և լալազին ըսաւ :



— Եղբայր կատու, կ'ազաչեմ, ինձի տեղ ցուցուր որ պատըս պարուիմ, անօրէն շուները ետեւէս ինկեր են . զիս պիտի բռնեն :
— Շատ լաւ , ինչո՞ւ չէ, ըսաւ կատուն մեղքնալով, և ցոյց տուաւ Մուռոյին տունը

— Օ՛ , այնտեղ չըլլար , ըսաւ գայլը , Մուռոյին հորթն եմ կերեր ժամանակին :

— Եթէ այդպէս է , Համբիկին տունը տանիմ քեզ :

— Այնտեղ ալ չըլլար , անոր ալ գառն եմ կերեր :

— Ուրեմն Փիլիկին տունը երթանք :

— Ո՛չ, ո՛չ , անոր ալ այժմ կերայ անցած աշունին :

— Երէցին տունը ինչպէս է .

— Վայ ինձի , դեռ երկու օր առաջ էր որ կերայ երէցին մաքին . . . :

— Դուն կրնո՞յ ուտէիր . մլաւեց կատուն բարկացած , ի՞նչ երեսով հապա գիւղ մտար , գիւղացին յիմար է որ իր թշնամին պատըս պարէ . փշրածդ զգալդ կուգայ . դուն արժանի ես կրելիք պատիժիդ :

ԱՌԱԾ . — Ինչ որ ցսկես, նոյնը կր հնձես :

23. — ԱՍՏՈՒԾՈՅ ԱԶՔԵՐԸ

Ո՛վ պայծառ աստղեր , գեղեցիկ աստղեր ,
Դուք Աստուած-Պապուն աչքերն էք եղեր ,
Որ վերէն ինձի կը նայիք շիտակ
Իբրև երկինքի պահապան հրեշտակ :

Ուստի հսկեցէ՛ք ինձի, կ'աղաչեմ,
 երբ սենեակիս մէջ լռելի կը ննջեմ.
 Այդ աչքերն աղուոր վերաս թող փայլին,
 Մինչև որ զարթնում երգով սոխակին:

ՀԱՆՆԵԼՈՒԿ 4.— Կաթիկ սանիք, մագե ցուիք:

24. — Գ Ի Ր Ք Ը

Չորս ու կէս տարու է Չարեհ: Շատ
 անգամ մօրը քով կը նստէր ու կ'ըսէր:

— Մայրիկ, կ'աղաչեմ, բան մը պատմէ
 ինձի:

Մայրիկն ալ շատ աղուոր բաներ կը
 պատմէր անոր:

Օր մը քաջ վարդանի պատմութիւնն
 ըրաւ. պատմեց թէ ինչ ազնիւ, քաջ, հայ-
 բենասէր մարդ էր, թէ ինչպէս Հայաստանը
 թշնամիներէն ազատելու համար նահատակ
 եղաւ: Չարեհ մօրը հարցուց:

— Մայրիկ, քաջ վարդանը տեսած ես:

— Չէ, տղաս, տեսած չեմ, պատաս-
 խանեց մայրը, վարդան շատ, շատ տարի
 կայ որ մեռած է:

— Ուրեմն ի՞նչպէս գիտես վարդանի
 ըրածները, նորէն հարցուց մանկիկը:

— Գիրքերու մէջ կարդացի, պատաս-
 խանեց մայրը:

Ուրիշ անգամ ալ մայրը Չարեհին
 պատմեց թէ Գոյումպոս անունով մարդ մը
 մեծ նաւերով ծովու վրայէն ամիսներ ճամ-
 բորդեր, անձանօթ երկիր մը գտեր է. այդ
 երկրին բնակիչները վայրենի էին, մորթե-
 ՚նին կարմիր էր, այնտեղ կային զարմանալի
 կենդանիներ, հրաշալի ծառեր անուշահամ
 պտուղներով: Մայրիկը ասանկ շատ բաներ
 պատմեց և Չարեհ բերանը բաց՝ մտիկ կ'ընէր:

Չարեհ նորէն հարցուց:

— Մայրիկ, միթէ այդ երկիրը գացած ես:

— Ո՛հ, չէ, պատասխանեց մայրը, շատ
 հեռու է այդ երկիրը:

— Այն ատեն ինչէ՞ն գիտես որ այդպիսի
 բաներ կան այնտեղ, նորէն հարցուց ման-
 կիկը:

— Գիրքերու մէջ կարդացի, պատաս-
 խանեց մայրը:

Օր մը Չարեհին մայրը դուրս ելեր էր:
 Չարեհ մինակ էր. սիրտը կը նեղանար.
 Ինքնիրեն ըսաւ:

— Որովհետեւ իմ մօրս պատմածները
 գիրքերու մէջ կը գտնուին, ես ալ կրնամ
 փնտռել ու գտնել:

Շուտով գնաց, գիրք մը առաւ սեղա-

նին վրայէն ու բացաւ . . . բայց անոր մէջ
ճերմակ թուղթի վրայ սև նշաններ միայն
տեսաւ :

Այդ գիրքը փակեց , ուրիշ մը բացաւ ,
բայց նորէն ճերմակ թուղթ ու սև գիծեր
տեսաւ :

Չարեհ բան մը չհասկնալով գիրքերը
սեղանին վրայ դրաւ , ձանձրոյթ զգաց և
մինչև մօրը գալը քնացաւ :

Երբոր մայրն եկաւ , Չարեհ արթնցաւ ,
աչքերը բացաւ և անոր վագեց ըսելով :

— Մայրիկ , ինչ պէտք է ընել որ գիր-
քերուդ մէջի պատմութիւնները հասկնամ :

— Տղաս , պատասխանեց մայրը , պէտք
է կարդալ սորվիլ :

ՀԱՆՆԵԼՈՒԿ 5. — Սարեն գլուցի՛ չկոսեցաւ ,
Չորեն գլուցի՛ չկոսեցաւ ,
Քարի տակ դրի՛ չկոսեցաւ ,
Ջուրը ձգեցի՛ փխտեցաւ :

25. — ՈՐԲԻՆ ՊԱՀԱՆՁԲԸ

Որք եւ , անտուն , անպաշտպան ,
Տրե՛ֆ , խնդրեւ , ապաստան ,
Տրե՛ֆ սընունդ եւ ուսում ,
Ես մարդ դառնալ եւմ ուզում :

Չեւ փափափիր շրջիլ գուր ,
Անգործ ընկնիլ դունե դուռ ,
Չրի մուտալ ու ապրիլ ,
Ողորմութեան սովորիլ :

Առե՛ֆ ձեր մօտ որդեգիր ,
Տրե՛ֆ ձեռքս արհեստ , գիր ,
Լինիմ խելոք ու ազնիւ ,
Վայելեւմ միշտ սէր , պատիւ :

— Ո՛վ է որբը , ինչպէս կ'ըլլայ , ինչպէս պէտք է
վարուի որբին հետ :

ԱՌԱՄ. — Որբին հաց տուող չ'ըլլար , խրատ տուող
շատ կ'ըլլայ :

26. — ԿԱՐ ԿՏԱՆԸ

— Ի՞նչ գէշ պատուեցաւ, ի՞նչ գէշ պատուեցաւ, նոր լաթ ալ չունիմ որ հագնիմ, կ'ըսէր Լուսիկը լալագին որ կապոյտ պարեգօտ մը հագած էր, ասանկ ինչպէս դպրոց երթամ:

Լուսիկ իրիկունը բացաւ մօրը կարկտանի ծրարը, կտորները քրքրեց, քրքրեց, մի կապոյտ կտոր գտաւ, և ուրախ ուրախ՝ սկսաւ կարկտել հագուստին պատուած մասը:

— Ի՞նչ կ'ընես կոր, Լուսիկ, հագուստդ պատուե՞ր ես, հարցուց մայրիկը:

— Այո՛, մայրիկ, և հիմա պիտի կտրկրտեմ, պատասխանեց Լուսիկ:

— Բայց կապոյտ կտոր չկայ որ կարկրտես:

— Մայրիկ, այս մէկ կտորը գտայ:

— Ես կը կարծէի թէ կապոյտ կտոր չկայ բնաւ:

Առտուն Լուսիկը լալով կանչեց:

— Մայրիկ, մայրիկ, այս ի՞նչ գէշ բան եմ բրեր, կապոյտ հագուստս կանանչ կրտորով կարկտեր եմ, ասանկ ի՞նչպէս դըպրոց երթամ:

— Խեղճ աղջիկս, միտքս չեկաւ որ

ճրագին լոյսին տակ կանանչ կտորը կապոյտ կ'երեւնայ, բայց հիմա ի՞նչ կրնամ ընել. ցամաք հացի փարս հազիւ կը վաստկիմ. մի լար, աղջիկս. կարկտանը գոգնոցովդ ծածկէ ու գնն դպրոց:

Լուսիկ մօրը ըսածին պէս ըրաւ: Զքօսանքի ատեն իր ընկերներուն հետ կը խաղար, յանկարծ տեսաւ որ Մարին իրեն կը նայի ու կը ծիծաղի: Լուսիկ ամչցաւ, և արցունքը աչքերուն՝ մէկդի քաշուեցաւ:

Սիրանոյշ տեսաւ պատահածը, յանդիմանեց Մարին և ըսաւ:

— Մարի, ինչո՞ւ կը ծիծաղիս, Լուսիկը աղքատ է, մայրը լուացարար է, ի՞նչ ընէ խեղճը, նոր լաթ չունի որ հագնի:

Մարի մտածեց, ամօթ զգաց իր ըրածէն. և քիչ յետոյ վազեց տուն, առաւ իր կապոյտ նոր պարեգօտը, բերաւ, տուաւ Լուսիկին:

ՀԱՆՆԼՈՒԿ. 6. — Ծակեմ, ծակեմ, ծակը ձգեմ:

27. — ՄԱՆԿԱԿԱՆ ՆՈՒԱԳԱՀԱՆԴԵՍ

Մն , տղա՛ք , առնենք
Մեր նուագարաններ ,
Ու կարգաւ զարնենք
Գեղեցիկ երգեր :

Իմբուկ ունինք մենք
Բողբոսակ ու լայն ,
Քանի կը զարնենք ,
Կը հանէ բամբ ձայն :
Թըմ , թըմ , թըմ , թըմ , թըմ ,
Թըմ , թըմ , թըմ , թըմ , թըմ :

Փոքրիկ շութակնիս
Շատ լաւ լարած ենք ,
Առնենք ճպրտնիս
Երգենք ու ածենք :
Ճըզ , ճըզ , ճըզ , ճըզ , ճըզ :
Ճըզ , ճըզ , ճըզ , ճըզ , ճըզ :

Մեր շիք տախիզներ
Կը հնչեն անուշ ,
Կը զարնենք զայն մեր
Մատերով քնքուշ :
Տին , տին , տին , տին , տին ,
Տին , տին , տին , տին , տին :

Տեսէ՛ք մեր սրբինդ
Որ լուռ չի մընար ,
Մենք զանի առինք
Սուլեւու համար :

Տիւ , տիւ , տիւ , տիւ , տիւ ,
Տիւ , տիւ , տիւ , տիւ , տիւ :

Մնծղան ցնծալով
Կ'առնենք ձեռքերնիս ,
Ուժով զարնելով
Կ'երգենք ամէնքնիս :

Ծին , ծին , ծին , ծին , ծին ,
Ծին , ծին , ծին , ծին , ծին :

Փողերնուս գոռ ձայն
Խանդ կուտայ մեզի ,
Մենք կը փրչենք զայն
Առանց ձանձրոյթի :

Թուու , թուու , թուու , թուու , թուու ,
Թուու , թուու , թուու , թուու , թուու :

Եկէ՛ք , ընկերներ ,
Դաշնակին վրայ ,
Շարժենք մեր մատներ ,
Թո՛ղ լաւ ը գոռայ :

Տօ , տօ , տօ , ըէ , մի ,
Փա , սօլ , լա , սի , մի :

— Իսչ նուագարաններ գիտէ՛ք , ըսէ՛ք անունները :

28. — ԽԵԼԱՑԻ ՀԱՄԲԻԿ

Համբիկ մինչև յետինք անդադար հերկեց արտը . ինք յոգնեցաւ և տեսաւ որ եզերն ալ յոգներ են ու ալ չպիտի կրնան աշխատիլ :

Համբիկ դադրեցուց աշխատութիւնը , արձակեց եզերը արօրը կապեց իշուն , ինք ալ վրան հեծաւ ու եզերն ետելը ձգած՝ ճամբայ ելաւ դէպի գիւղ :

Այս ծանր բեռին տաք կքած , խեղճ աւանակը կը տքար ու շատ դժուար կը քաշէր :

Համբիկ ատենելով որ էջը մինչև գիւղ չպիտի կրնայ երթալ այդպէս , վար իջաւ վրայէն , քակեց արօրը անոր կունակէն և իր ուսը զարկաւ , յետոյ նորէն ելաւ , նստաւ իշուն վրայ :

— Ա՛յ հիմա հանգիստ կրնաս քալել , կ'ըսէր , արօրը իմ շալակս առի :

- Համբիկն ըբածը խելացութիւնն էր թէ...
 - Ինչ կ'ընեն արօրով... գութանով...
 - Ինչո՞ւ համար կը հերկեն արտը :
- ԱՌԱՄ. — Արօրը մենձ եզեն կը ծոխի :



29. — ԾՍՈՒԵՐՈՒՆ ԳԱՆԳԱՏԸ

Մարդիկ մեր փայտէն
 Միշտ ամեն ասէն
 Կրակ կը վառեն
 Տուն կը սափցընեն ,
 Կ'եփեն կերակուր ,
 Կ'ուտեն կուշ ու կուռ .
 Բայց մեզ չեն յիշեր ,
 Մեզ չեն պահպաներ ,
 Այն ակորթօրէն
 Մեզ կը կոտորեն ,
 Մեզ կը փճացընեն
 Կ'ոչնչացընեն

Մեր գերաններով
 Կը շինեն տուներ
 Գուտեր , մսրափներ
 Ժամեր ու վանքեր ,
 Մեր սախակներով
 Յասուկ , սոսաւսաղ ,
 Աթոռ , պահարան ,
 Սեղան , նստարան ,
 Դուռ ու պատուհան ,

եւ այլ շատ տեսակ
 Կահ ու կարասիք :
 Բայց մեզ չեն յիշեր
 Մեզ չեն պահպաններ
 Այլ անգրքօրէն
 Մեզ կը կոտորեն
 Մեզ կը փճացրնեն
 Կ'ոյնչացրնեն :

Ո՞վ չէ կերեր սունձ ,
 Կամ կարմիր խնձոր ,
 Եւ ուռ ու սերկերիչ ,
 Կհոռա կամ սաշոր ,
 Ծիրան անուշիկ ,
 Դեղձ կարմրաթուշիկ ,
 Հապա խաղո՞ղղ ,
 եւ ֆա՞նի տեսակ ,
 Կարմիր ու դեղիւն ,
 Թուխ կամ ըսպիտակ : :
 եւ այդ ամենէն
 Մարդիկ միշտ կ'ուտեն ,
 Բայց մեզ չեն յիշեր ,
 Մեզ չեն պահպաններ ,
 Այլ անգրքօրէն
 Մեզ կը կոտորեն ,
 Մեզ կը փճացրնեն ,
 Կ'ոյնչացրնեն :

Խեղճ փախուցներ ,
 Դուք երբոր մեծնախ՝
 Մեզ խնայեցէք ,
 Մեզ պահպանեցէք ,
 Ձեր պարտեզներուն ,
 Այգիներուն մէջ
 Ծառեր տնկեցէք :

— Ի՞նչ օգուտներ ունին ծառերը :
 ՀԱՆՆԸՆՈՒԿ . 7 . Խալի ունիւմ , քափ սալ չի լինիր ,
 Ոսկի ունիւմ համբել չի լինիր :

30. — ՔԱՂԱՔԱՎԱՐ ՏՂԱՆ

Երէկ պտտելու ելած էի երբոր հանդի-
 պեցայ ձեր պատիկ ընկերներէն Արամին :
 Այս տղան յարգանքով հանեց գլխարկը և
 բարեւեց իր քովէն անցնող
 տարիքոտ մարդ մը :
 Ինքնիրենս ըսի. «Աղէկ ,
 աղէկ , պատիկ Արամ կը
 պահէ իրեն տուած խրատ-
 ներս , տեսնենք սա եկող
 կնոջ հանդէպ ալ նոյն ըն-
 թացքը պիտի ունենայ» :
 Հաճոյքով տեսայ որ ան դարձեալ իր



գլխարկը հանեց և բարեւեց կինը որ իրենց ծանօթն էր : Ես ալ գովեցի իր ընթացքը :

Պատիկ բարեկամներս , պէտք է որ դուք ալ անոր նմանիք , որովհետեւ քաղաքավար տղայէն աւելի սիրուն բան չկայ :

Չեզմէ մեծերը բարեւեցէ՛ք յարգանքով : Եթէ բան մը առնէք , մի՛ մոռնաք երբեք ըսել . «Շնորհակալ եմ» : Իսկ երբոր բան մը տաք և ձեզի շնորհակալ ըլլան , պատասխանեցէք . «Չարժեք , բան մը չէ» :

Երբոր գիրք մը , պտուղ մը , կամ ուրիշ բան մը ուզէք մէկէ մը , մի՛ մոռնաք աւելցրնելու . «Տուէք եթէ կը հաճիք» :

Քաղաքավարութիւնը աղէկ կրթութեան մը նշանն է : Եւ դուք հոգ տանելու էք որ աղէկ կրթուած տղաք ըլլաք :

31. — ԹԻԹԵՌՆԻԿԻՆ ՆԱՐՍԵՆԻՔԸ

Պարոն թիթեռնիկը մինակ էր , կը ձանձրանար : Բարեկամները խորհուրդ տուին իրեն որ ամուսնանայ , ընկեր մը ճարէ :

— Աւանդ , գիւրին բան չէ , ըսաւ թիթեռնիկը , քանի որ տուն տեղ չունիմ :

— Դուն մի՛ վախնար այդ բանէն , գո-

չեց անդիէն խղունջը , իմ խեցիէ տունս կուտամ քեզի :

— Ափսոս , գիւրին բան չէ , ըսաւ նորէն թիթեռնիկը , անկողինս սաւան չունի , ո՛չ ալ բարձերս՝ երես :

— Ատոր համար հոգ մի՛ ըներ , պոռաց սարգը իր ոստայնին մէջէն , քեզի պէտք եղած կտաւը ես կը գործեմ :

— Չէ , չէ , նորէն գիւրին չէ , կրկնեց թիթեռնիկը յուսահատ , հանցը ուրկէ ճարեմ ես :

— Հացը ինձմէ՛ գիտցիր դուն , մրմնջեց մըջիւնը վեհանձնօրէն , ես առատ պարէն ունիմ :

— Բայց ի՞նչ բնեմ միայն հացը , աւելցուց թիթեռնիկը . ցամաք հացը համ հոտ չունի :

— Այդ ալ հոգ մի՛ բներ , ճգաց մուկը իր ծակէն , ես խոհանոց մը ունիմ ձեռքիս տակ :

— Աւանդ , շաքար ալ չունիմ , կրկնեց թիթեռնիկը տխրօրէն :

— Դուն խօսք մտիկ ըրէ , ամուսնացիր , բզզաց մեղուն իր փեթակէն , ուզածիդ շափ կուտամ քեզի մեղրէս :

Բայց պարոն թիթեռնիկը չէր ուզեր համոզուիլ և ըսաւ :

— Ափսոս . Ղահի ալ պէտք ունիմ, ուրկէ գտնեմ ես Ղահը :

— Փռճ խօսք , ճայնեց անդիէն փո սուռան , իմ յուսաւոր Ղահս պատրաստ է քեզի համար :


— Բայց առանց երգի , նուագի հարսնիք կ'ըլլայ , ուր էք տեսեր սուս-փուս հարսնիք , առարկեց նորէն թիթեռնիկը :

— Մենք կ'երգենք ու կը նուագենք քու հարսնիքիդ , հոճոացին անդիէն ճպուռները միաբերան :

Պարոն թիթեռնիկին խօսքը հատաւ , համոզուեցաւ որ ամուսնանայ և գտաւ իրեն յարմար ընկերուհի մը : +

Խղունջը տուաւ իր խեցիէ տունը , սարդը տուաւ իր գործած կտաւները , մըրջիւնը տուաւ հաց՝ իր ամբարէն , մուկը տուաւ կերակուր՝ իր խոհանոցէն , մեղուն տուաւ մեղր՝ իր փեթակէն , փոսուռան վառեց իր յուսաւոր Ղահը , և ճպուռները եօթն օր , եօթը զիշեր երգեցին , նուագեցին միաբերան :

Պարոն թիթեռնիկին և օրիորդ թիթեռնուհիին հարսնիքը շատ փառաւոր եղաւ , շատ փառաւոր :



32 — ԿԱԶԱՂԱԿՆ ՈՒ ԱԳՈՍԻԸ

Կաշաղակը կզկըզալով
կը թռչրտէր ծառէ ծառ ,
Իսկ ագռաւը՝ նստած մէկ քով
Մտիկ կ'ընէր անբարբառ :

— Ի՞նչ ես նստեր , կ'ընես մտիկ
Լուռ ու անխօս , սիրելիս .
Զե՞ս հաւատար արդեօք , քուրիկ ,
Ըսածներուս , պատմածիս :

— Միտքս ինչ ծածկեմ, ըսեմ քեզի,
 Հաւատարմս չի գար դեռ.
 Ո՛վ որ քեզ պէս շատ կը խօսի,
 Դուրս կուտայ միշտ շատ սուտեր:

ՀԱՆՆԵԼՈՒԿ. 8 — Ասդին դար, անդին դար,
 Մեզը կայ անգաղար:

33. — ՊՁՏԻԿ ԳԻՏՈՒՆԸ

Պօղոսիկ իրիկուան տուն կը դառնար
 դպրոցէն: Ճամբան քթին տակէն անդադար
 կը կրկնէր առած վերջին դասը:

— Խնձորը խնձորենիին պտուղն է,
 տանձը՝ տանձենիին պտուղն է, բայր՝ բա-
 լենիին պտուղն է:

Պօղոսիկ հասաւ տուն, վաղեց խոհա-
 նոցը ուր մայրիկը իրիկուան կերակուրը կը
 պատրաստէր, բարեւեց գանի և գոհունակ
 դէմքով մը գոչեց:

— Մամա, ես գիտուն եմ, ես հիմա
 շատ բան գիտեմ. ես սորվեցայ թէ ո՛ւրկէ
 կը քաղեն խնձորը, տանձը, բայր, նարինջը,
 կեռասը. ես գիտեմ բոլոր ծառերուն անուն-
 ները. անա՛ ըսեմ, մտիկ ըրէ. խնձորը խըն-

ձորենիին պտուղն է, կեռասը կեռասենիին
 պտուղն է, նարինջը նարնջենիին պտուղն է:

— Ապրիս, տղաս, ըսաւ մայրիկը և
 գորովագին համբուրեց գանի:

Այդ պահուն մայրիկին աչքին զարկաւ
 սեղանին վրայ դրուած աման մը խաղողը և
 ըսաւ:

— Պօղոսիկ, գիտցիր նայիմ, խաղողը
 ինչ ծառի պտուղ է:

— Խաղողը խաղողենիին պտուղն է,
 ըսաւ Պօղոսիկ յաղթական շարժումով մը:

Մայրիկը ծիծաղեցաւ: Իսկ Վերգինէ,
 Պօղոսիկին քոյրը որ խոհանոցին մէջ մայրի-
 կին կ'օգնէր, խնդալէն կը մարէր:

Վերգինէ այդ պահուն խոշոր կաղամբ
 մը կը մանրէր:

— Է՛հ, պարոն գիտուն, ըսէ նայիմ,
 կաղամբն ինչբանի պտուղ է, գոչեց անդիէն:

— Կաղամբը կաղամբենիին պտուղն է,
 ըսաւ Պօղոսիկ, այս անգամ քիչ մը կակա-
 զելով:

Մայրիկն ու Վերգինէ կրկին սկսան
 քրքշալիւ ծիծաղիլ: Պօղոսիկ շուարած՝

անոնց կը նայէր զգարմանքով, և չէր հասկը-
նար թէ ինչո՞ւ կը ծիծաղին :

— Պօղոսիկին պատասխանները ուղի՞ղ էին. խաղողն
ի՞նչ բանի պտուղ է. կողամբը պտուղ է թէ բանջարեղէն.

— Պողատու ի՞նչ ծառեր գիտէք. ի՞նչ բանջարե-
ղէններ գիտէք :

34. — Ի Շ Ո Ւ Կ Ս

Պզտիկ միևիեմիկ իշու՛կս ահա ,
Առտուն շաս կանուխ ելեր. կը գրոսայ .
Ան զիս կը կանչէ որ իր ֆովն երթամ ,
Ցասֆեմ , ցասֆրեմ , իր վրայ հեծնամ :



Կը սիրեմ ես զիևի, վասընզի անի
Խելոջ կը կեանայ, իսկնդ բսւներ չուևի .
Թէեւ պիևդ գրչուխ, իիջ մըն աչ յամաւ ,
Բայց երբ մ՛սրակեմ, կը վագէ վեր վար :

+

Գիտե՞՞ք թէ ինչո՞ւ այս իմ իշուկին
Ականջներն երկար են ու ահագին .
Կեցե՞՞ք որ պասմեմ պասճաւն ես անոր ,
Պասմուքիւնն հիև է , բայց շա՛՛ս աչ աղուոր :

Կըսեն թէ Աստուած ըսաւ Ադամիև .
«Բոչոր կեևդանեաց անունն առաջիև
«Իի՛ր ինչ ո՞ր կ'ուզես» : Աւ անուի կարգով
Ադամիև աոչեւ եկան ֆովն ֆովն :

Աւ երբ կարգն եկաւ ամեևեև վերջիև
Դանդաղ ֆաշուածֆով այս կեևդանիիև ,
Էր դրաւ անոր անունը Ադամ .
Անուն մը որ չէր անյարմար, անհամ :

Հագիւ հեռացած՝ էշը մոոցեր էր
Թէ իր անունը ինչ էիև դրեր :
Դարճաւ, աղայեց , ըսաւ Ադամիև ,
«Մոոցայ անունըս, ո՞հ, ըսե՛ կրկիև» :

Ադամը բունեց անոր ականջէև ,
Պիևդ պիևդ ֆաշելով ըսաւ պոռաչէև .
«Է՛շ է անունըդ , է՛շ է , հասկըցա՞ր» :
Այն օրէև ականջներն մընացիև երկար :

ՀԱՆՆԵԼՈՒԿ 9. — Խորունկ հոր մը կայ, աշխարհ ինչ
որ կայ, մէջը կ'ընկնի :

+

35. — ՄԱՏՆԵՄԱՏՐ

Անգամ մը մատնեմատը շատ թանկագին մի մատանի դրուեցաւ : Մատանին արեւի պէս կը փայլէր, ցոլացնելով կարմիր ու կանանչ, դեղին ու կապոյտ երանգներ : Ամէն մարդ կը հիանար մատանիին վրայ :

Մատնեմատը հպարտացաւ, խորհեցաւ թէ ինք բոլոր միւս մատերէն լաւագոյնն է և յոխորտանքով ըսաւ իր ընկերներուն :

— Չեմ հասկնար թէ դուք ինչո՞ւ համար իմ քովս էք շարուած . ի՞նչ բանի պէտք էք . տեսէք ես ի՞նչպէս կը փայլիմ . մարդիկ ինձի նայելով կը հիանան :

— Եթէ այդպէս է, հպարտ բուրիկ, ալ մենք քեզի ընկեր չենք ըլլար, գնա՛ ապրէ ինչպէս որ կ'ուզես, ըսաւ բութը :

Բոլոր մատերը համաձայնեցան բութին և որոշեցին չօգնել մատնեմատին :

Երկու օր յետոյ մատնեմատը շատ գեղեցիկ վարդ մը տեսաւ և ուզեց քաղել : Ո՛չ մի մատ ուզեց անոր օգնել : Որչափ ալ աշխատեցաւ, չարչարուեցաւ, չկրցաւ վարդը քաղել :

— Մենք քեզի չենք օգներ, ըսաւ միջնամատը :

+

Երկու օր ալ անցաւ և մատնեմատը ուզեց այս անգամ բալ քաղել : Միւս մատերը նորէն չօգնեցին : Մատնեմատը ուզեց դէս ու դէն ինկաւ, շատ չարչարուեցաւ, չկրցաւ բալը քաղել :

— Մենք քեզի չենք օգներ, ըսաւ ցուցամատը :

Օր մըն ալ մատնեմատը ուզեց տիկնիկը զարդարել որ հետը խաղայ : Որչափ ալ աշխատեցաւ, չարչարուեցաւ, չկրցաւ զարդարել :

Մատնեմատը հասկցաւ այն ատեն որ ինք մինակ բանի մը չի ծառայեր : Դիմեց միւս մատերուն որ իրեն օգնեն :

— Մենք քեզի չենք օգներ, ըսին բոլոր մատերը միաբերան :

Մատնեմատը գլուխը կախեց, մտածեց և ճանչցաւ իր սխալը : Այն ատեն նորէն դիմեց իր ընկերներուն և խնդրեց որ ներեն իրեն, և առաջուան պէս ընկեր լինին :

Մատերը ներեցին անոր : Այն օրէն ի վեր ձեռքի մատերը սիրով ապրեցան միասին և միշտ իրարու օգնեցին :

ԱՌԱՅ. — Մեկ ձեռքը ծափ չի տար :

—

36. — ԶՈՒՐԻՆ ԵՐԳԸ

Կեցցէ ջուր, կեցցէ ջուր,
Որ կ'ընէ մեզ մաքուր:

Ջուրին շնորհուն է որ կ'ունենանք
Ոյժ, առողջութիւն և պատուական կեանք.
Մեր օրիորդը միշտ կը յորդորէ որ
Ջուրն ու մաքրութիւն սիրենք ամէն օր:

Կեցցէ ջուր, կեցցէ ջուր,
Որ կ'ընէ մեզ մաքուր:

Պզտիկ տըղայ մը՝ ուշիմ, իմաստուն,
Պէտք է որ լըայ աստըծու առտուն
Ձեռքը, մարմինը ու դէմքը զըւարթ
Որպէս զի սիրէ զինքը ամէն մարդ:

Կեցցէ ջուր, կեցցէ ջուր,
Որ կ'ընէ մեզ մաքուր:

37. — ՀՈՃԱՆ ԵՒ ԻՐ ԷՇԸ

Նասրէտտին հոճան օր մը էշը հեծած
գիւղ կ'երթար. տղան ալ ետեւէն քայելով
իրեն կը հետեւէր: Ճամբան անցորդներ
հանդիպեցան հոճային. անոնցմէ մին ըսաւ:

— Հոճա, ամօթ չէ՞ որ դուն, մեծ և
ուժեղ մարդ, հեծնես էշը, սա պզտիկ
տղան ետեւէդ քայեցնես:

— Իրաւունք ունիս, ըսաւ հոճան, և
հանդարտօրէն վար իջնելով էշէն, հեծցուց
իր տղան. և ինք սկսաւ ետեւէն քայել:

Հագիւ թէ քիչ մը առաջ գնացին. և ահա
հանդիպեցան խուժը մը գեղջուկ պառաւ-
ներու որ շատախօսելով կ'երթային: Պա-
ռաւները հոճային նայեցան և ըսին:

— Հոճա, դուն՝ ծերունի մարդ, մեղք
չէս որ քայես և առանձին տղադ հեծցնես
էշը:

Հոճան մտածեց և իրաւացի գտաւ պա-
ռաւներուն ըսածը. ուստի ինքն ալ հեծաւ
էշը. և հայր ու տղայ իշուն վրայ՝ սկսան
յառաջանալ: Խեղճ կենդանին տքալով հա-
զիւ թէ կը քայէր:

Քիչ մը անդին՝ քաղաքացի ազնուական-
ներ քաղաք կը դառնային. տեսան ու ճանչ-

ցան հոճան , — արդէն ո՞վ չէր ճանչնար այս
զարմանալի հոճան — , և խոժոռ դէմքով մը
յանդիմանեցին զինք ու ըսին :

— Հոճա , մե՞ղք որ կարդացող ես , դուն
խիղճ չունի՞ս . պիտի սպաննե՞ս կենդանին .
երկու հոգի կրնայ տանիլ այդ խեղճ անա-
սունը :

Հոճան ամօթահար վար իջաւ էշէն ,
վար իջեցուց նաև իր տղան , և երկուքը
մէկ սկսան քայել , էշն ալ իրենց առջեւէն :

Քիչ մըն ալ այսպէս գնացին թէ չէ ,
հանդիպեցան քանի մը գիւղացիներու որոնք
փայտ կը տանէին բաղաք : Գեղացիները
սկսան ծաղրել հոճան և ըսել :

— Սա յիմարներուն նայեցէք , էշը պա-
բապ թողուցեր են , երկուքը մէկ ետեւէն
կը քայեն . մարդ Աստուծոյ , թէ որ այդ
չափ կը մեղքնաս իշուկիդ , շալակդ առ օր
չյոգնի . . . :

Եւ գիւղացիներն սկսան միաձայն ծի-
ծաղիլ :

Հոճան մտածեց թէ ասոնք ալ իրաւունք
ունին : Ուրիշ ճար չկար , այս անգամ պէտք
էր էշը շալկել : Հոճան այդ ալ պիտի ընէր ,
բայց արդէն զիւրը հասեր էին :

— Հոճան ինչ պէտք է ընէր , ամէնուն խօսքին
ալ հետեւելու էր . . . :

Ա.Ռ.ԱՄ. — Հոգը՝ բաշտոյին, ըսքը՝ մաշտոյին :

38. — ԹՈՄՊՈՒԼ ՄԻՆԷ



Տեսէ՛ք փխսկը թումպուլ . պիտիտիկ ,
Պեխերը սուր . սուր , կուրծք ստուշիկ
Գեշին դնելով գըշուխը ֆնիւշ .
Ստուերին ներքեւ կը նիրհէ մուշ մուշ :

Ե՛ր , թումպո՛ւլ փխսկ ,
Հերի՛ք , ֆունդ հերի՛ք ,
Քեզ իր մօտ կ'ուզէ
Բու սիրուն ֆուրիկ :

Մի՛նեն չի լըսեր , կը նիրհէ սիրով .
Զի տեսնէր ֆոյրն որ կը շրջի իր ֆով .
Իր ֆունը մուշ մուշ , իր ֆունը գողտրիկ
Կը սիրէ եւել , ո՛չ թէ ուտելի՛ք :

Ե՛ր, քումպո՛ւղ փիսիկ,
 Հերի՛ք ֆուսից, հերի՛ք,
 Քեզ իր մօտ կ'ուզե
 Քու սիրուն ֆուսիկ:

— Դիտեցէ՛ք թէ այս ոտանաւորին մէջ ո՛ր գիրը
 բնաւ չկայ:

39. — ԲԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԳԵՂԵՑՅՈՒԹԻՒՆ

Յուլիանէ և Մարիամ երկու քոյրեր
 էին: Յուլիանէ այնքան գեղեցիկ էր որ
 զինք առաջին անգամ տեսնողը կը հիանար
 իր գեղեցկութեանը վրայ և անմիջապէս կը
 համակրէր իրեն: Իսկ Մարիամ ընդհակա-
 ռակը տգեղ էր և այս բանը ցաւ կը պատ-
 ճառէր իրեն:

Օր մը Մարիամ երբոր իր մօրը հայե-
 լիին մէջ ինքզինք կը դիտէր, ըսաւ տխրա-
 գին:

— Քանի որ գեղեցիկ չեմ, կ'ուզեմ
 այնքան բարի ըլլալ, այնքան բարի որ բոլոր
 աշխարհ զիս սիրէ հակառակ իմ տգեղու-
 թեանս:

Այսպէս ըրաւ, և իրաւ ալ ամենէն սիր-

ուեցաւ: Իր դէմքը էն սիրուն արարածէն
 աւելի գեղեցիկ երեւցաւ, որովհետեւ իր
 աչքերուն մէջ կը փայլէր բարութիւնը:
 Բարութիւնը գեղեցկութենէն աւելի
 հաճելի է:

ԱՌԱՄ. — Անուշ շեզուն օձը ծակէն կը հանէ:
 ՀԱՆՆԵՆՈՒՆ 10. — Չորս եղբայր կայ, իրարու ետեւ կը
 վազեն, իրարու չեն հասնիր:

40. — ՉՄԵՌՈՒԱՆ ԳԱԼԸ



Չմեռն եկաւ, ձիւն էր հագեր,
 Չեռքն ու ոտքը՝ սառ ու սառոյց.
 Կանանչ խոտերն ու ծաղիկներ,
 Հազա՛ր ափսոս, ծածկեց, չորցուց:

— Ինչո՞ւ եկար , ա՛յ ծեր ձրմեռ ,
Ու ծածկեցիր դաշտ ու անտառ ,
Չըլլա՞յ արդեօք բան ես բերեր ,
Բան ես բերեր մեզի համար :

— Միթէ չգիտէ՞ք , ա՛յ մանուկներ ,
Ի՛նչ եմ բերեր ձեզի համար .

Տաք հագուստներ ու նոր տարի ,
Միրգ ու պտուղ տեսակ տեսակ ,
Եւ փափուկ ձիւն որ ձիւնէ մարդ-
կամ ձիւնագունտ չինէք , խաղաք :

— Թէ այդպէս է , բարո՞վ եկար ,
Սիրուն ձմեռ , հաղա՞ր բարով ,
Ծերո՞ւկ ձմեռ , մեզի համար
Բարո՞վ եկար , հաղար բարով :

41. — ԱՔԱՂԱՂԸ, ԷՇԸ ԵՒ ԱՌԻԻԾԸ

Էջն ու առիւծը իրարու հանդիպեցան
դաշտի մը մէջ ուր արդէն աքաղաղ մը գրա-
ղած էր ցորենի հատիկներ փնտռելու :

Էջը կը յուսար հոն աղուոր խոտ գտնել
ճարակելու համար . առիւծն ալ որսի ետեւէ
էր : Առիւծին համար , իրաւ , էջը շատ հա-

մով որս մը չէր , բայց լաւագոյն չգտնելով ,
պատրաստուեցաւ յարձակիլ հէք աւանակին
վրայ որ արդէն վախէն կը
դողդղար : Այդ պահուն
աքաղաղը մէկէն հնչեցուց
սուր կուկուլիկու մը :
Առիւծը այս անսովոր ձա-
նէն սարսափած՝ սկսաւ
փախչիլ :



Էջը տեսնելով առիւծին
փախուստը , կարծեց թէ
առիւծն իրմէ՛ վախցաւ ու կը փախչի : Ինք-
զինք երեւակայեց ահաւոր կենդանի մը ,
առիւծին ետեւէն ինկաւ
և սկսաւ պոռալ :



— Վախկոտ , վատ , ին-
չո՞ւ կը փախչիս :

Առիւծը որ ալ աքաղա-
ղին ձայնը չէր լսեր , յան
կարծ կեցաւ , գլուխը դար-
ձուց , և զարմացաւ տես-
նելով ինքզինք խեղճ իշուկէ մը հալածուած :
Իսկոյն նետուեցաւ մեր անխելք աւանակին
վրայ , զանի գիշատեց և փառաւորապէս
լափեց :

42. — ԿՕՇԿԱԿԱՐԸ

Փողոցէ մը մի օր անգայ,
 Խանութէ մը ներս նայեցայ.
 Կօշկահարը ասեղն աներ
 Հա՛ կը կարեր, կօշիկ կարեր.
 Թափաքափթիփ, քիփաքափթիփ
 Անա՛ աշապէս շիներ կօշիկ:

Հերիւններով ծակեր բանար
 Ներքանի վրայ մէկ վեր, մէկ վար
 Ապա փայտէ գամեր կ'առներ.
 Անա՛ աշապէս զանոնք գամեր.
 Թափաքափթիփ, քիփաքափթիփ,
 Անա՛ աշապէս շիներ կօշիկ:

Կաղապարին վրայ կը շարեր
 Կաշեայ փոփր ու մեծ կտրուներ,
 Ու մեծ քելովն ասեղն աներ
 Հա՛ կը կարեր, կօշիկ կարեր.
 Թափաքափթիփ, քիփաքափթիփ,
 Անա՛ աշապէս շիներ կօշիկ:

43. — ՓՈՔՐԻԿ ԱՂԶԻԿՆ ՈՒ ՀԱՅԵԼԻՆ

Սուրբիկ օր մը հայելիին մէջ ինքզինք
 կը գիտէր: Հայելին այնքան գեղեցիկ, այն-
 քան փայլուն էր որ Սուրբիկ սկսաւ ձեռ-
 քովը շոյել զայն ու ժպտիլ: Անմիջապէս իր
 պատկերն ալ սկսաւ ժպտիլ հայելիին մէջէն:
 Սուրբիկ զարմանքէն բերանը բացաւ, պատ-
 կերն ալ բերանը բացաւ: Փոքրիկ աղջիկը
 կարծեց թէ հայելիին մէջ երեւցած աղջիկը
 զինք կը ծաղրէ ու զէմքը կախեց: Պատկերն
 ալ զէմքը կախեց:

Այն ատեն Սուրբիկ լսեց որ հայելին
 լեզու կ'ելլէր ու կը խօսէր: Մտիկ ըրաւ:
 Տեսէք, հայելիին պատկերն ինչ կ'ըսէր:

— «Ես քու պատկերդ եմ և ամէն ատեն
 ինքզինքդ քեզ կը ցուցնեմ ինչպէս որ ես,
 առանց շողօքորթելու և առանց խաբելու:

«Եթէ բարկանաս, սրդողիս կամ լաս,
 հայելիին մէջ նայէ, և ես պիտի ըսեմ քեզի
 թէ տղեզ ես, շուտ մը արցունքներդ սրբէ»

«Եթէ առտուն մոռցար լուացուիլ կամ
 մազերդ սանտրել, պիտի ըսեմ քեզի թէ
 աղտոտ ես, շուտ մը լուացուէ, սանտրուէ:

«Ասկէ զատ՝ գիտցիր թէ ինչպէս որ
 ինձի ժպտած ատենդ կը ժպտիմ, սրդողած

ատենդ՝ կը սրդողիմ, ծաղրած ատենդ կը
 ծաղրեմ, այնպէս ալ աշխարհի վրայ մարդ
 միշտ ինչ որ ընէ, փոխարէն նոյնը կը գտնէ.
 եթէ բարիք ընէ՝ բարիք կը գտնէ. եթէ չա-
 րիք ընէ՝ չարիք կը գտնէ»:

Սուրբիկ խորունկ մտածեց հայելիին
 տուած այս դասին վրայ:

44. — ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՂԱՆԴ

Ահա՛ եկաւ նոր տարի,
 Բերաւ իր հետ բիր բարի.
 Բերաւ կաղանդ ցանկալի,
 Պըտուղներով լիւլի:

Տեսէ՛ք ահա ճոխ սեղան
 Մեր կաղանդին հայկական,
 Ուր քով քովի շարուած կան,
 Համով միրգեր պատուական:

Ահա՛ մոմեր գոյնզգոյն
 Շուրջ սեղանին բոլորուն,
 Բոլորուն ու փափրլուն,
 Զերդ աստղներ պլպլուն:

Ահա՛ կաղինը անոյշ,
 Խնձորն ու տանձ, թուղն ու նուշ,
 Եկէ՛ք, ուտե՛նք մենք թուշ թուշ,
 Ըլլայ մեզի թո՛ղ անուշ:

Ահա նարինջն ու արմաւ,
 Սերկեւիւներ, չամիչ լաւ,
 Ընկոյզ, պաստեխ խաւ ի խաւ.
 Ուտե՛նք, ուտե՛նք, չըսե՛նք բա՛ւ . . . :

Ուտե՛նք, սակայն չմոռնա՛նք,
 Խեղճ մանուկները տընանկ,
 Բարի՛ ըլլա՛նք, ա՛ղբբտանք,
 Ու անոնց ալ բաժին տանք . . . :

— Կաղանդը ինչպէս կը կատարեն ձեր տունը,
 Նկարագրեցէ՛ք:

45. — ՉԱՐԽՕՍԻԿ ՊԱՂՏՕՆ

Պաղտօ աղբար գեղին մէջ ազէկ անուն
 մը համած չէր: Բերնէն բարի խօսք չէր
 ելլեր բնաւ, և ամէն անգամ որ բերանը
 բանար, կամ գէշ լուր մը պիտի տար կամ
 չար գէպք մը պիտի գուշակէր գիւղացիներ-

րուն : Ասոր համար գիւղին մէջ Չարխօսիկ
զրած էին անունը :

Անգամ մը պատահեցաւ որ մեր Չար-
խօսիկը Պոլիս երթայ : Այնտեղ հանդիպեցաւ
իրենց գիւղէն վարդան աղբօր որ քանի մը
տարիէ ի վեր Պոլիս էր : Չիրար կարօտով
համբուրելէ յետոյ՝ վարդան հարցուց Պաղ-
տոյին :

— Է, մեր տունէն ի՞նչ լուր . . . :

— Ի՞նչ պիտի ըլլայ, ըսաւ Պաղտօ, չի-
մացամ, ձեր պղտիկ շունը մեռաւ :

— Ադ բան մը չէ . . . ի՞նչ բանէ մեռա-
լսեղճ շունը :

— Չեր մեծ գոմէշներուն միտը կերած
ատեն՝ ոսկորը կոկորդը մնաց ու մեռաւ :

— Գէմէշներն ալ մեռան . . . :

— Այո, լուսահոգի հօրդ գերեզմանին
քարը բերելու ատեն՝ ձորը գլորեցան ու
մեռան :

— Ինչէ՞ր կ'ըսես, Պաղտօ, համբա ալ
մեռաւ :

— Գլուխդ ողջ ըլլայ, վարդան աղբար,
մօրմէդ ճիշտ տասնըհինգ օր վերջ մեռաւ :

— Հէյ վախ, ըսել է՝ մայրս ալ մեռաւ :

— Այո, խեղճ կինը ողորմած հոգի
քոյրերուդ մահուան ցաւին չզիմանալով
մեռաւ :

— Վախ, վախ, վախ, ըսել է՝ քոյրերս
ալ մեռան և հիմա դուռներնիս փակ մնաց :

— Դուռ չմնաց որ փակ մնայ, ձեր
պարտատէրները երբոր ուրիշ բան չգտան,
դուռը քակեցին տարին :

Խեղճ վարդան աղբար կարծես շանթա-
հար եղաւ լսելով Չարխօսիկին իրարու ետէ
շարած այս մէկ մէկէ աւելի սև լուրերը, և
լալագին հարցուց Պաղտոյին :

— Վերջապէս հիմա ի՞նչ եղաւ մեր
տունը . . . :

— Ի՞նչ պիտի ըլլայ, իմ եկած ատենս
երկու գոյգ եզով կը հերկէին կոր ձեր տու-
նին տեղը. դրացիները արտ պիտի շինէին
կարծեմ :

ՀԱՆՆԵՂՈՒԿ 11. — Օձ՝ ի մէջ ծովուն,
Գլուխը՝ պսպղուն :

46. — Լ ի ն է ի . . .

Սըլաթեր թոյնակ շինէի,
Թոյնի ուր որ կամէի,
Գէպի աշխարհն իմ սիրելի
Փշող ֆամիս շինէի :

Թեթևիկ ամպեր շինէի,
 Հովերուն առջեւն իյնայի:
 Ախ, իմ երկիր, ախ, իմ աշխարհ
 Առնէր սաւնէր քամին զիս,
 Դեպի այգին իմ քաղձաշի,
 Փշեր, սաւնէր հովը զիս:

47. — ԺԻՐ ԶԱՊԷԼԸ



Զապէլենց տունը օր մը լուացք կար՛
 Մայրիկը այնչափ զբաղած էր որ աչք բա՛

նայու ժամանակ չունէր: Որովհետև արձա-
 կուրդի օրեր էին, Զապէլ դպրոց գնացած չէր:
 Զապէլ կը մտածէ թէ ինչպէս օգնէ
 մայրիկին: Կէսօրուան ճաշի ժամանակը կը
 ժօտենար: Զապէլ լռիկ մնչիկ սեղանը պատ-
 ըրաստեց, պնակները, անձեռոցները, դը-
 փախներն ու պատառաքաղները կարգով կա-
 նոնով շարեց, յետոյ պարտէզ իջնելով՝ ծա-
 դիկներ քաղեց, փունջ մը շինեց և գաւաթ
 մը ջուրի մէջ սեղանին մէջտեղը դրաւ:

Մէյմնալ մայրիկը շտապով ներս մտաւ
 և ո՛րչափ զարմացաւ երբոր տեսաւ թէ սե-
 ղանը շտկուած է և Զապէլ մէկ կողմ քաշ-
 ուած, իրեն կը նայի անուշ ժպիտով մը:

Մայրիկը շատ ուրախ եղաւ, իսկ փոք-
 րիկ Զապէլ աւելի ուրախ եղաւ որ կըրցած
 էր մօրը օգտակար ըլլալ:

— Դուք ալ օգնութիւն կ'ընէ՞ք ձեր մայրիկին:

Ե

48.—ՓՈՔՐԻԿ ԶԻՆՈՒՈՐԸ



Երբոր ես մեծնամ
Ունենամ պեխեր,
Պիտի դառնամ ես
Զինուոր անվեհեր:

Հրացանն ուսիս՝
Մէջքըս թուր կապած,
Ես պիտի զինուոր
Ըլլամ անկասկած:

Պեխերս ոլորած
Ու կանգնած խրոխտ,
Յառաջ պիտի երթամ
Քայլով անյողդողդ,

Յառաջ, օ՛ն, յառաջ...
Մէկ, երկու, ա՛յ, ձա՛խ...
Այսպէ՛ս ես մարզանք
Պիտի ընեմ անվախ:

Ես պիտի կռուիմ
Թշնամիին դէմ,
Եւ հայրենիքըս
Պիտի պաշտպանեմ:

49. — ԾՍՂԻԿՆԵՐՈՒՆ ԵՐՍՁԸ

Զիւնի համասփիւռ սաւանը ծածկեր է
ամէն դի ճերմակ ճերմակ, և ամէն ինչ
քնացած է անոր տակ: Քնացած են նաև
ծաղիկները հողին մէջ և խոտերուն արմա-
տիկները: Շատ խորունկ քնացած են և
երազներ կը տեսնեն:

Սքանչելի են անոնց երազները:

Մանիշակը կը զգայ գարնանային արևի
առաջին շողերուն գաղջաւէտ ջերմութիւնը
և ուրախութեամբ արցունքներով լեցուն իր
կապոյտ աչուկները կը բանայ, արթննալով
իր խոր քունէն: Ան կը լսէ տաք երկիրնե-
րէն վերադարձող թռչուններու մեղմանուշ

դալլայլը, կը ժպտի կենդանարար արփիին
երեսն ի վեր, և մեղմիկ՝ կը սօսափէ քնքոյշ
գեփիւռի շունչին տակ:

— Միթէ գարունը եկա՞ւ... ան, այս
ինչպէս շուտ, ան, այս ի՞նչ լաւ է...:

Շուշանը կը տեսնէ թէ ինչպէս կը բաց-
ուի գարնանային առաւօտը: Արեւը կամաց
կամաց կը բարձրանայ սարերու ետեւէն և
իր շողիկները փունջ փունջ կը ցօղէ կա-
նանչով ու ծաղիկներով գարգարուն երկրի
վրայ: Ան իր ճերմակ ու նուրբ պսակը դուրս
կը ցցէ կանանչ խոտերու մէջէն և կը յառէ
կապոյտ երկինքին:

— Ի՞նչ խոր է երկինքը... հեռո՞ւ, հե-
ռո՞ւ, անսահման... , կը մրմնջէ ան:

Նարգիսը կը տեսնէ թէ ինչպէս կը վեր-
ջանայ գարնանային օրը, արևը մարը կը
մտնէ ու շուրջն ամէն ինչ խաղաղիկ կը
ննջէ: Ան իր բիւր աչուկները կը դարձնէ
դէպի առուակը. կը նայի անոր յստակ հա-
յելիին մէջ ցոլացող իր դմալելի պատկերին
ու կը շնչէ:

— Ի՞նչքան սիրուն եմ ես, ի՞նչքան
սիրուն...:

Իսկ վարդը երազին մէջ կը տեսնէ մա-
յիսեան լուսնկայ գիշերը: Ան կուլայ սոխա-
կին կարօտովը: Բայց ան արեւելքը կը

ներկուի կարմիրի, արեւին ճառագայթները
քնքուշութեամբ կը սրբեն անոր հոտաւէտ
թերթիկներէն արցունքի ցօղերը Ահա թըռ-
չելով կուգայ սոխակը. ան և կը հնչէ անոր
եղեմական գեղգեղը...:

Եւ այսպէս... երազներ կը տեսնեն
ծաղիկները:

Սքանչելի են անոնց երազները. սակայն
մթազնած երկինքը կախուած է անոնց վրայ
և ձիւնէ պաղ վերմակը կը ծածկէ գանոնք...:

— Ե՛րբ կ'իրականանան ծաղիկներուն երազները:
ՀԱՆՆԵԼՈՒԿ 12. Ծուռ ու մուռ ո՛ւր կերթաս,
Ծա՛կ-գլուխ, քեզի ի՛նչ...:

50. — ԾՆՈՒՆԴԻ ԵՐԳ

Մըսուրին մեջ ցուրտ ու անշուք,
Մերկ, անծածկոյթ, յարդին վրայ,
Փոփրիկ Յիսուսը անշրշուկ
Տեսե՛ք, ի՛նչպէս կը դողդղղայ:

Բարի Յովսէփն ու իր մայրիկ
Քովը կեցեր են շրարած
Գորովով չի, անուշ, գողտրիկ
Այ՛եւրն Անոր վրայ յառած:

Այրիև վերեւ յո՛չս է ծագած,
երկինք երկի՛րք կ'ողջունեն.



Հովիւ, հրեշտակ գիրար գրկած՝
«Փա՛նֆ ի բարձունս» կը նըշագեն:

- Դիտէ՞ք Յիսուսի Մնունդին պատմութիւնը:
- Ե՛րբ կուգայ Մնունդի տօնը:

51. — ԶՈՎ ԸՆՏՐԵՅ ՇՈՒՆԸ

Տխուր էր շունը. չէր գիտեր թէ որո՞ւ
հետ բարեկամանար, որո՞ւ հետ ապրէր: Ան
տրտում, տխուր կը թափառէր անտառին
մէջ: Անգամ մը հանդիպեցաւ շնագայլին և
միասին ճամբայ ինկան: Տեղ մը նշմարեցին
գայլին հետքը:

— Այս որսն հետքն է, հարցուց շունը:
— Ահեղ գազանի հետքն է, պատաս-
խանեց շնագայլը, Աստուած մի՛ արասցէ,
եթէ անոր հանդիպինք, երկուքս ալ կը լափէ:
Շունը թողուց շնագայլը, բռնեց գայլին
հետքը ու հասաւ անոր:

— Ո՞վ ես դուն, հարցուց գայլը:
— Քու խոնարհ ծառադ, պատասխանեց
շունը:

— Ուրեմն հետեւէ ինձի, ըսաւ գայլը և
երկուքը միասին գնացին որսի:

Ճամբան տեսան արջուն հետքը:

— Այս որսն հետքն է, հարցուց շունը:

— Օհօ, այնպիսի գազանի մը հետքն է
որ եթէ ուզէ, երկուքս ալ հողի հաւասար
կ'ընէ:

Շունը թողուց գայլը և բռնեց արջուն
հետքը ու հասաւ անոր:

— Ո՞վ ես դուն, հարցուց արջը:

— Քու խոնարհ ծառադ, պատասխանեց
շունը:

— Ուրեմն հետեւէ ինձի, ըսաւ արջը և
երկուքը միասին գնացին անտառը:

Ճամբան նշմարեցին մարդուն հետքը:

— Այս որսն հետքն է, հարցուց շունը:

— Օհօ... այս այնպիսի խելօք գազանի

մը հետքն է որ անկէ աւելի ուժեղ ոչ ոք
կայ այս աշխարհի մէջ :

Շունը թողուց արջը , մարդուն հետքը
ընենց , հասաւ անոր , և անկէ ի վեր անոր
հետ կ'ապրի :

— Դեռ ուրիշ ինչ կենդանիներ գիտէք մարդուն
հետ ապրող :

52. — Շ Ո Ւ Ն Ը

Իմ աղու՛՛ր չընիկ , իմ չընիկ սիրուն ,
Կայտառ ու աշխոյժ կենդանի մ'ես դուն .
Գիշեր թէ ցորեկ , առտու թէ իրիկուն ,
Կը հըսկես հօտին , կը պահես մեր տուն :

Վա՛յ , եթէ օտար մարդ կամ անասուն
Մօտենայ մեզի չար նպատակով ,
Վրբան կը վազես անմիջապէս դուն ,
« Հասէ՛ք » կը գոչես , հա՛ւ , հա՛ւ հաչելով :

Կամ եթէ աղուէսն ուզէ խորա՛նակ
Գողնալու համար հաւ , բադ կամ վառեակ
Սնցիլ գիշերանց մեր պարտեղին ցանկ ,
Կը հասնիս ու զայն կ'ընես ահաբեկ :

Իմ աղուորիկ չուն , իմ գեղեցիկ չուն ,
Ունիս թաւ մազեր , աչքեր վառվրուուն ,
Վընաս չես իտար քեզ սիրողներուն ,
Մեր հաւատարիմ պահապանն ես դուն :



Փորրիկ մանուկներ քեզ շատ կը սիրեն ,
Իրենց ձեռքովը քեզի կուտան կեր .
Կը շոյեն զըլլիսդ ու կը փայփայեն ,
Արթո՛ւն պահապան , խորտօի կ ընկեր :

Ա.Ռ.Ս.Ծ. Շունը յիշէ , փայտը փաշէ :

53.— ՄԱՆՈՒԿՆ ՈՒ ԱՐՁԱԳԱՆԳԸ

Պզտիկ Մուշեղ ուրախ գուարթի կը խաղար մարգագետնին վրայ: Մէկէն սկսաւ պոռայ. — Հօ, հօ, հօ . . . :

Մօտակայ թաւուտին մէջէն ձայն մը կրկնեց. — Հօ, հօ, հօ:

Մուշեղ զարմացած՝ գոչեց:

— Ո՞վ ես դուն:

Ձայնը պատասխանեց:

— Ո՞վ ես դուն:

Տղան բարկացած աղաղակեց:

— Դուն ապուշ մըն ես:

Ձայնը խելոյն կրկնեց:

— Դուն ապուշ մըն ես: X

Մուշեղ կարծեց թէ թաւուտին մէջ մէկը պահուրտեր, զինք կը ծաղրէ, ու բարկութենէն կրակ կտորած՝ վազեց մօրը գանգատելու:

Մայրը հասկցաւ խնդիրը և ըսաւ:

— Տղաս, եթէ ազնիւ ու քաղաքավար ըլլայիր ու գէշ խօսքերու տեղ՝ աղէկ խօսքեր խօսէիր, թաւուտն ալ քաղաքավարութեամբ պիտի պատասխանէր ու քու աղէկ խօսքերդ պիտի կրկնէր: Գիտցիր որ ուրիշներու հան-

դէպ ինչ վարմունք որ ունենաս, նոյն վարմունքը կ'ունենան ուրիշներն ալ քեզի հանդէպ:

— Ո՞վ էր Մուշեղին խօսքերը կրկնողը. գիտէք թէ ինչ է արձագանքը:

ՀԱՆՆԵԼՈՒԿ 13. — Ի՞նչ է ան որ կայ ու մարմին չունի, կը լսէ ու ահանջ չունի, Կը խօսի ու բերան չունի:



54. — ԿՆՆԴԱՆԻ ՊՈՒՊՐԻԿԸ

Հայրիկը մեզի Ծնունդին համար Պուպրիկ, խաղալիք: գիրք, միրգ ու շաքար, Սիրուն պասկերներ գնեց գունաւոր. Ի՞նչ կար թէ ծնունդ ըլլար՝ ամէն օր:

Հասպա ինչ նուէր հայրիկը, Վե'րգին,
Բերած է, գիտե՞ս, անուշ մայրիկին,
Ծնունդի օրուան վայելույ, յարմար
Պարգեւ մը գողտրիկ մեզի աչ համար:

Այսօր հայրիկը շուկայէն՝ առտուն
Պէպէ՛ք մ'ե բերե՛ր թուպուղ ու ժպտուն,
Որ չի նըմանիր ինձ համար գնուած
Սա պուպրիկներուն անձայն ու անշաց:

Ան կը շարժէ իր թաթիկն ու տոնիկ,
Եւ այռկներն աչ կ'ընէ չքացիւրփիկ,
Կաթ աչ կը ծրծէ ու շա՛ս շա՛ս կուշայ...:
Կ'ըսեն թէ մեզի ֆուրիկ պի՛ս' ըլլայ:

55. — ՇՈՂԻԿՆ ՈՒ ՓԱՅԼԻԿԸ

Չմեռուան ցուրտ իրիկուն էր: Ձիւն
կուգար և ճերմակ փաթիլները կ'իյնային
մու՛թ գետնի վրայ և կը քնանային:

Բոլոր փաթիլները ամպերէն իջան և ա-
նուշ քնացան տաք գետնի վրայ. միայն եր-
կու փաթիլ ուշացեր էին. անոնք ալ օո՛ր՝
մէջ պարելով ցած կուգային: Երկու քո

2

էին. մէկուն անունը Շողիկ էր, միւսին
անունը՝ Փայլիկ:

Օդին մէջ դառնայու ատեն՝ պատուհան
մը տեսան որմէ պայծառ լոյս կը ցայտէր:

— Ա՛յ, ինչ լաւ լոյս է, ըսաւ Շողիկը
ու թուաւ դէպի լոյսը, գնաց, թառեցաւ
պատուհանի երկաթին վրայ: ✕

— Իրաւ, ինչ լաւ լոյս է, ըսաւ Փայլիկը
ու ինքն ալ մօտեցաւ որ թառի երկաթին
վրայ, բայց ոտքը սահեցաւ, ինկաւ ցած
թաց բարի մը վրայ:

— Շողիկ, ինկալ, ըսաւ Փայլիկը:

— Դէ՛հ, վեր բարձրացիր, ձայնեց Շո-
ղիկը վերէն:

Փայլիկ ճիգ ըրաւ վեր թռչելու, բայց
կարող չեղաւ:

— Չեմ կարող, ըսաւ, մօտս եկուր,
Շողիկ: ✕

— Հիմա կուգամ, սպասէ մի քիչ, տես-
նեմ ինչ կ'ընեն, պատասխանեց Շողիկը ու
նայեցաւ պատուհանէն ներս:

Ներսը մի սիրուն տօնածառ կար, կա-
նանչ ճիւղերը փառած մոմերով ու նաշխուն
խաղալիքներով զարդարուած: Մոմերուն
փայլուն բոցերը ուրախ ուրախ կը շարժէին
դէս ու դէն: Սենեակը մանուկներով լեցուն
էր: Ամէնքը՝ ուրախ գուարթ, ծառին բո-

+

լորտիբը պար բռնած, կը դառնային ու կ'երգէին: Երբոր իրենց ժպտուն աչքերը կը հանդիպէին ծառէն կախուած ձիակներուն, գառնուկներուն, արջերուն ու ոսկեգօծ ընկոյզներուն, ալ աւելի կ'ուրախանային, ծափ կը զարնէին, կը թռչտէին:

Շողիկը շացաւ երբոր նայեցաւ տօնածառին:

— Ի՞նչ չքեղ տօնածառ է, մրմնջեց:

— Ե՛ս ալ կ'ուզեմ տեսնել, ձայն տուաւ Փայլիկը, և նորէն փորձեց վեր ելլել, բայց կարող չեղաւ:

— Շողիկ, շուտ ըրէ, եկ՛ուր:

— Հիմա կուգամ, Փայլիկ ջան, հիմա:

— Դէ, շուտ ըրէ:

— Հիմա, հիմա, կ'ըսէր Շողիկը ու կը նայէր ներս:

Փայլիկը թաց, մութ քարին վրայ կը դողար ու կ'սպասէր քրոջը:

Բայց Շողիկը այնքան տարուած էր տօնածառով որ ալ մոռցեր էր Փայլիկը: — «Ի՞նչ լաւ բան է տօնածառը», կը մտածէր ան:

Այդ միջոցին մանուկները երգեցին նոր տարուան երգը: Շողիկ հիացած՝ մտիկ ըրաւ:

— Շողիկ, դէհ, շուտ ըրէ, նորէն ձայն տուաւ Փայլիկը վարէն, անհամբեր ու լալազին:

Բայց Շողիկը ալ չէր լսեր:

Շուտով մանուկներուն միբոց բաժնեցին, և վերջն ալ վիճակ ձգեցին. տօնածառին ձիակները, արջերը, գառները, նապաստակները, շաքարներն ու ոսկեգօծ ընկոյզները տուին ազոց:

— Մխ, Օխ, կը գոչէին մանուկները և ուրախ ուրախ՝ ծափ կը զարնէին ցատքըրտելով:

Տօնածառը վերջացաւ և մանուկները իրենց խաղալիքներուն հետ ցրուեցան իրենց տունները: Յանկարծ Շողիկը յիշեց Փայլիկը:

— Փայլիկ, ձայն տուաւ անհանգիստ:

Բայց Փայլիկը ալ չկար: Թաց քարին վրայ այնքան լացեր, լացեր էր որ հալեր, հատեր էր:

— Վա՛յ, ըրաւ Շողիկը, և տխրեցաւ, մնաց պատուհանի երկաթին վրայ մինակ նստած: Տխրեցաւ, տրտմեցաւ, վերջն ալ աչքերէն արցունք վազեց, ու ան ալ հալեցաւ, ինկաւ թաց քարին վրայ և կորաւ:

ՇՈՒՏԱՍԵՆՈՒԿ. — Բնօր, առած ալիւրդ աղէկ եր, ալ առ ան ալիւրեմ:



56. — ԶԻՒՆԷՄԱՐԴԸ

Տեսէք, տղաք, զիւուկ ու ծեր †
 Զիւնէմարդ մը հոն է կեցեր
 Իր գաւազանն ո՞րչափ մեծ է .
 Զինք մի՛ ծաղրէք, ձեզ կը ծեծէ .
 Բայց չի շարժիր կանգնած տեղէն
 Իիթն ու բերանն ինչ տղեզ են .

Սև ամպերէն ցաթեց արև ,
 Զիւնէմարդուն տըւաւ բարև ,
 Բայց ձիւնէմարդն իսկոյն լացաւ ,
 Կարծեմ բունեց իր փորին ցաւ .
 Հա՛, հա՛, հիմա հասկըցայ ես
 Դուն արեւէն վախցող մէկն ես .

Բարի՛ արև, թուխ ամպերուն
 Ներքև պահէ գլուխդ սիրուն ,
 Որ կարագի պէս չհալի
 Մեր ձիւնէմարդն հիանալի :
 Գընաց արեւ , փըչեց ցուրտ հով ,
 Զիւնէմարդը գոհ էր սրտով :

57. — ԶԻՒՆԱԳՈՒՆՏԸ

Զիւնը փաթիլ փաթիլ իջաւ երկինքէն և
 չորս դին պատեց ճերմակ սաւանով, դաշտ,
 սար ու ձոր ձիւնով ծածկուեցան :

Դասէն վերջ՝ դադարի ատեն, դպրոցին
 տղաքը ջերմոցին շուրջ հաւաքուեցան, բայց
 Նշանիկ ու Պետիկ իրենց քոյրերուն հետ
 դուրս վազեցին, դպրոցի բակին մէջ զիզ-
 ուած ձիւնով գնտակ շինեցին ու սկսան գը-
 լորել: Գնտակը հետզհետէ կը մեծնար ու
 տղաքը կը հրէին, ուժով ուժով կը դարձը-
 նէին մինչև որ խոշոր գունտ մը եղաւ :

Շատ ուրախ էին ու բնաւ չէին մտեր .
 անոնք գիտէին թէ ազատ օդի մէջ խաղալը
 օգտակար է առողջութեան. իրենց պզտիկ
 թեւերով շարժումներ կ'ընէին ու ջերմոցին

քով տաքցող , փոշոտ ու աղտոտ օդ շնչող
տղոցմէն աւելի ուրախ , կայտառ և աւելի
տաք էին , իրենց թուշերը խնձորի պէս կար-
մըրած էին :

Երբոր դասի զանգակը հնչեց , անոնք
թողուցին ձիւնագունտը և զուարթօրէն վա-
զեցին դասարան :

ՀԱՆԵԼՈՒԿ 14. — Կահուղ ներմակ,
Կայ մեծ վերմակ
Ձե բուրդ, փետուր,
Ո՛չ ալ բամբակ :



58. — ԲԱՐԵԿԵՆԴԱՆ

Ահա՛ հասաւ Բարեկենդան ,
Տօն ցնծութեան , ուրախութեան :

Արձակուրդ է , օ՛ն , ընկերներ ,
Մոռնա՛նք դպրոց , գիրք ու դասեր ,
Կախե՛նք օրրան եւ օրօրուինք ,
Երգե՛նք , կանչե՛նք ու ծիծաղինք :

Ահա՛ հասաւ Բարեկենդան ,
Տօն ծիծաղի ու խնդութեան :

Դրուի՛նք մէջմէկ դիմակ պոռոս ,
Հագուի՛նք շաքեր խորոս-մորոս ,
Խաղա՛նք , խնդանք ու բռնե՛նք պա՛ր ,
Եւ ցա՛սֆրե՛նք յիմարաբար :

Ահա՛ հասաւ Բարեկենդան ,
Տօն խաղ-պարի , յիմարութեան :

— Ինչե՛ր կընեն Մեծ Բարեկենդանին :

59 — ԳԱՐՈՒՆԻՆ ՀՐԱԻԷՐԸ

— Խոտեր , բոյսեր , ծառեր , ծաղիկ-
ներ , բաւական է որչափ քնացաք , ձայնեց
Արեգակը , գարուն է , օդերը տաքցան , շու-
տով արթնցէք , երկիրը զարդարեցէք :
Խոտերն ու բոյսերը , ծառերն ու ծա-

դիկները լսեցին Սրեգակին տաքուկ կոչը և սթափեցան իրենց խոր քունէն :

— Բարեւ քեզի բարեւ, սիրելի գարուն, ըսին խոտերը և կանանչ գլուխնին դուրս տնկեցին հողին մէջէն :



— Մենք շատ ուրախ ենք, սիրուն գարուն, մենք շատ կարօտեցանք քեզ, մեր պտուկները հազիւ տաքցան, շուտով կը ծաղկինք և քեզ կը գովենք, կանչեցին ծառերը ամէն կողմերէ :

— Տը՛գ, տը՛գ, տը՛գ ըսին մեղունները, շնորհակալ ենք, նաշխուն գարուն, հազիւ աղատեցանք ծանր ձմեռէն, ամբողջ ձմեռը թմրած մնացած էինք :

Ու մեղունները երամ երամ թռան, գրնացին խնձորենիին մօտ և այսպէս ըսին :

— Կարմիր ծաղիկ խնձորենի, բոլոր ձրմեռը անօթի ենք, ուժէ, թափէ ինկած ենք,

ծաղիկներդ բաց ու մեզի տեղ ըրէ. մենք կ'ուզենք քու անուշ հիւթէդ ծծել, ուտել, կշտանալ :

— Ափսոս, շատ ափսոս, ըսաւ խնձորենին, ծաղիկներս դեռ դուրս չեն եկեր, թէ չէ՝ ձեզի պէս հիւրերը ես շատ սիրով կ'ընդունէի. գնացէք բալենիին մօտ, ան խնձմէ շուտ կը ծաղկի :

Մեղունները թռան, գնացին բալենիին մօտ և ըսին :

— Ճերմակ ծաղիկ բալենի, բոլոր ձրմեռը անօթի ենք, ուժէ, թափէ ինկած ենք, ծաղիկներդ բաց ու մեզի տեղ ըրէ. մենք կ'ուզենք քու հիւթէդ ծծել, ուտել, կշտանալ :

— Ափսոս, հազար ափսոս, ըսաւ բալենին, ծաղիկներս դեռ դուրս չեկան, թէ չէ՝ ձեզի պէս հիւրերը ես շատ սիրով կ'ընդունէի. գնացէք նշենիի մօտ, ան արդէն ծաղկած ըլլալու է :

Մեղունները թռան, գնացին նշենիին մօտ և ըսին :

— Բէմպէ ծաղիկ նշենի, բոլոր ձմեռը անօթի ենք, ուժէ, թափէ ինկած ենք, ծաղիկներդ բաց ու մեզի տեղ ըրէ, մենք կ'ուզենք քու հիւթէդ ծծել, ուտել, կշտանալ :

— Բարնով եկաք , ժիր մեղուներ , ըսաւ նշենին , հրամեցէք , իմ ծաղիկներս ձեզի համար պատրաստ են :

Մեղուները՝ անհամբեր , նշենիին ծաղիկներուն վրայ թափեցան , գլուխնին խօթեցին անոնց մէջ , ծծեցին հիւթերը , կըշտացան , և ուրախ գուարթ տոտոտալով՝ փեթակ վերադարձան :

— Գարունին ո՞ր ծառը ամէնէն աւաջ կը ծաղկի , ո՞ր ծաղիկը ամէնէն շուտ կը բացուի :

60. — ԱՆ ԻՆՉ Կ՝ՈՒՉԵՆՔ

Գարունն եկաւ , զըւարթ դէմքով .
Լեցուն դաշտերն հաշար բերքով .
Գարի , վարսակ , ցորեն ունինք ,
Այ ի՛նչ կ՛ուզենք , պէտք է հրճուինք :

Այժ ու ոչխար , հաւ , սագ ու բագ ,
Գիրուկ կովեր տան մեզի կաթ .
Մեր տարեկան պարէնն ունինք ,
Այ ի՛նչ կ՛ուզենք , պէտք է հրճուինք :

Չմրան համար տաք հանդերձանք
Կ՛ըլլան մեզի բուրդն ու բամպակ .
Քթան , մուշտակ , մետաքս ունինք .
Այ ի՛նչ կ՛ուզենք , պէտք է հրճուինք :

Ահա՛ պատրաստ ճաշ գեղջկական ,
Ուտենք համով մեր հացն ու թան .
Կարագ , մածուն , հաւկիթ ունինք ,
Այ ի՛նչ կ՛ուզենք , պէտք է հրճուինք :

ՀԱՆՆԼՈՒԿ 15. Յոռեկին աչեքնիս երբոր բանակ ,
չեմ սեսեք , երբոր փակեմք , կը սեսեմք , ի՛նչ է այն :

61. — ՄԱՐԳԱՐԻՏԻՆ ՍԵՐՄԸ

— Ո՞ւր կը տանիս գիս , հարցուց մարգարիտին սերմը :

— Քեզ կը տանիմ , պահելու , ձմեռուան ցուրտէն ազատելու , ըսաւ քամին և քշեց սերմիկը , տարաւ աղբիւրի մը մօտ Գցեց :

Սերմիկը կամաց կամաց հողին մէջ թաղուեցաւ և քնացաւ մշիկ մշիկ :

Գարունին՝ սերմիկը տաքցաւ , հողէն շուր ծծեց , իր հագուստը քիչ քիչ նեղցաւ ,

ճեղքուեցաւ և անոր մէջէն բարակ ծիլ մը դուրս եկաւ :

— Քունդ անո՛ւշ, մատաղ ծիլ, բարո՞վ եկար լոյս աշխարհք, ըսաւ քամին և ծիլը շոյեց, փայփայեց :

— Շատ ուրախ եմ, դրանցի, ըսաւ կապոյտ անմոռուկը :

— Մենք միասին ուրախ կ'ըլլանք, ըսին ճերմակ ձնծաղիկները :

— Ես ալ ուրախ եմ, ըսաւ կակաչը, գիտէ՞ք, ընկերներ, մարգարիտին ծնողքը ես կը ճանչնամ, անոնք դեղին միջուկով, ճերմակ թերթիկներով ծաղիկներ են :

Մարգարիտին ծիլը շատ ուրախ էր որ այդ տեսակ բարի ընկերներ ունէր : Ան աճեցաւ, մեծցաւ, շատ կոկոններ դուրս տուաւ : Շատ չանցաւ, կոկոնները բացուեցան և ծաղիկներ դարձան :

Քանէ մը օր վերջ էր. փոքրիկ աղջիկ մը ազբիւրին մօտ եկած էր :

— Հայրիկ, հայրիկ, եկո՛ւր տես, ի՜նչ գեղեցիկ մարգարիտ մը գտայ, կանչեց փոքրիկ աղջիկը. ճճ, ի՜նչքան սիրուն են, ի՜նչքան նաշխուն են, ես կ'ուզեմ տուն տանիլ գայն :

Երբ հայրիկը հաւանեցաւ, աղջիկը արագ

արագ փորեց բոյսին չորս կողմերը, գգուշութեամբ հանեց հողէն և դրաւ կողովը :

Փոքրիկ աղջիկը տարաւ մարգարիտն իր պարտէզը և տնկեց վարդենիի մը տակ : Մարգարիտին արմատները ջուր խմեցին, յոգնած ծաղիկներն ալ կուկուզ ըրին ու բնացան :

Առտուն կանուխ փոքրիկ մարգարիտները արթնցան ու զարմացած չորս կողմը կը նայէին : x

— Բարի գալուստ, դաշտի սիրուն ծաղիկներ, ըսաւ ճերմակ վարդը :

— Ես ալ երէկ կ'ուզէի ձեզ բարեւել, ըսաւ դեղին վարդը, բայց դուք շատ յոգնած էիք, հիմա ի՞նչպէս էք, լա՛ւ էք :

— Շնորհակալ ենք, ըսին մարգարիտները :

— Իսկ ես ձեզի ծանօթացնեմ մեր պարտէզի ծաղիկներուն հետ, ըսաւ կարմիր վարդը : Ձեր աջ կողմի մեծ, սպիտակ ծաղիկները շուշաններ են, այն փոքրիկ պահուրտածները հինգ թերթեան մանուշակներ են, սա խուճբն ալ մեխակ է և անոնց քովի փոքրիկը՝ յափրուկն է :

Բոլոր ծաղիկները գլուխնին ծռելով՝ բարեւեցին մարգարիտները, անոնք ալ խո-

նարհութիւն ըրին , ամէնքը իրարու հետ
խօսեցան , գրոյցներ ըրին :

Մարգարիտները մեծցան , գեղեցկացան
և ամբողջ ամառը ծաղիկներ բացին :

— Յիշուածներէն զատ ուրիշ ի՞նչ ծաղիկներ կը
ճանչնաք :

ԱՌԱՄ. — Մեկ ծաղիկով գարուն չի գար :

62. — ՀԱՅԿԱԿԱՆ ԶԱՏԻԿ

Ծաղկազարդ է , ծառն կաննչեց .

Տախտն եկան , կկուն կաննչեց .

Նուշի ծառը ծաղկեց ձերմակ ,

Խնձոր , սաչոր կապեց կոճակ :

Եօթն օր վերջը եկար Զատիկ ,

Նաեւ խթում , նաւակասիֆ .

Հաւկիթ ածեց հաւն ու կախար ,

Հարս ու աղջիկ կարմիր հագար :

Կարմիր հաւկիթ , ոսկի արեւ ,

Տէ՛ս , իրարու կոսան բարեւ .

Նորունկ կօշիկ , նաշխուն հաշար ,

Է՛յ , ա՛ղբրսիֆ , քրիստոս յարեար :

— Ի՞նչ կ'ընեն Ծաղկազարդին , ի՞նչ կ'ընեն Զատիկն :

63. — ՊՈԶԱՒՈՐ ՍՈՒՏԵՐ

Երեք բարեկամներ անգամ մը միասին
կ'անցնէին փողոցէ մը երբ գետինէն ոսկեայ
գեղեցիկ մատանի մը գտան :

Իւրաքանչիւրը մատանին կ'ուզէր ինք
առնել , պնդելով թէ առաջին անգամ ինք
տեսած է զայն գետնի վրայ : Բաւական վի-
ճելէ յետոյ , վերջապէս անոնցմէ մին ըսաւ :

— Մեր երեքէն ո՛վ որ կարող ըլլայ
ամէնէն մեծ սուտը խօսիլ , թող անորն ըլլայ
մատանին :

Միւսները հաւանութիւն յայտնեցին
այս պայմանին : Այդ պահուն մզկիթի մը
մօտէն կ'անցնէին :

— Նայեցէք , նայեցէք , ըսաւ մին , մի-
նարէին գազաթը պզտիկ ճանճ մը թառեր
է , կը տեսնէք :

— Ի՞նչպէս չէ, յարեց երկրորդը, անձ
թեւերն ալ սկսաւ զողողացնել :

■ ■ — Բայց դուք կարեւորը չէք տեսներ
կոր, վրայ բերաւ երրորդը, աչքին մէկն ալ
կոյր է . . . :

■ ■ Այս անգամ ալ սկսան վիճիլ թէ իրենց
խօսած սուտերէն որն է ամէնէն մեծը : Իւ-
րաբանչիւրն իր խօսած սուտը գերազանց
կը նկատէր որով վէճը վերստին տաքնալու
վրայ էր երբ անցորդ մը մօտեցաւ իրենց :

— Ահա, գոչեց մին, թող այս մարդը
իրաւարար ըլլայ մեզի :

Մարդը խնդիրը հասկնալէ յետոյ՝ ըսաւ :

— Ես չեմ կրնար ձեր սուտերուն ար-
ժէքը գնահատել, ես կեանքիս մէջ երբեք
սուտ չեմ խօսած :

— Իրեն տանք մատանին, իրեն, գո-
չեցին երեքը միաբերան :

Եւ այն մարդուն տուին ոսկեայ մատա-
նին :



64. — ՄԱՆՈՒԿԻՆ ԻՂՁԸ

— «Մայրիկ, պատմէ՛, ի՞նչպէս Յիսուս
ինձ պէս պղտիկ մանուկներ
Առնելով իր Գիրկերուն մէջ
կը պագնէր ու միշտ կ'օրհնէր :

«Մայրիկ, ըսէ՛, Յիսուս զիս ալ
կը սիրէ՞ այն մանկանց պէս,
Գիրկերուն մէջ առնելով զիս
Համբոյր կ'առնէ՞ թուշերէս :

«Մայրիկ, խօսէ՛ ե՞րբ պիտի դայ,
Կուզեմ տեսնել զինք ես ալ.
Մայրիկ, ըսէ՛, չուզե՞ր արդեօք
Զիս օրհնելու մեզի գալ » :

— «Սիրուն տղաս, Յիսուս կ'օրհնէր
Այն մանուկներն հեզ, հլու,
Որ կուգային իր քով հոյլ հոյլ
Իր սուրբ խօսքեր լսելու :

«Երբոր դուն ալ, տղաս, նոյնպէս
Ըլլաս խելօք և հլու,
Եւ երբ ամէն օր աղօթես,
Կուգայ քեզ ալ օրհնելու » :

ԱՌԱՏ. — Հեռուի սուրբը գորաւոր կ'ըլլայ :

65. — ԲԵՐՆԷ ԲԵՐԱՆ

Աքիս մը հանդարտօրէն կը քնանար կաղնիի մը տակ երբոր վերէն, կաղնիին վրայէն խոզկաղին մը ինկաւ իր գլուխին: Աքիսը յանկարծ արթննալով՝ վեր ցատքեց և սարսափահար սկսաւ փախչիլ: Ճամբան հանդիպեցաւ դաշտամուկի մը:

— Ի՞նչ կայ, ինչո՞ւ կը փախչիս, հարցուց դաշտամուկը զարմացած:

— Մի՛ հարցնէր, կաղնիի ահագին ճիւղ մը ինկաւ վրաս և քիչ մնաց որ շախջախուէի, պատասխանեց աքիսը շնչասպառ:

Դաշտամուկը քիչ մը առաջ գնաց և հանդիպեցաւ սկիւռի մը:

— Իմացա՞ր աքիսին պատահածը, հարցուց անոր:

— Չէ, ի՞նչ է պատահեր, ըսաւ սկիւռը հետաքրքիր դէմքով:

— Ի՞նչ պիտի ըլլայ, վիթխարի կաղնի մը ինկեր է վրան և քիչ մնացեր է որ շախջախուի:

Սկիւռը քիչ մը առաջ գնաց և հանդիպեցաւ երկու ճագարներու:

— Իմացա՞ք աքիսին պատահածը, հարցուց անոնց:

— Չէ, ի՞նչ է պատահեր, ըսին ճագարները դողդղալով:

— Ի՞նչ պիտի ըլլայ, ահուելի կայծակ մը զարկեր է վիթխարի կաղնի մը, կաղնին շախջախուեր, ինկեր է աքիսին վրայ և քիչ մնացեր է որ աքիսն ալ շախջախուի:

Ճագարները քիչ մը առաջ գնացին և հանդիպեցան խուճը մը եղնիկներու:

— Իմացա՞ք աքիսին պատահածը, հարցուցին անոնց:

— Չէ, ի՞նչ է պատահեր, ըսին եղնիկները մտահոգ կերպարանքով:


— Ի՞նչ պիտի ըլլայ, սաստիկ երկրաշարժ տեղի ունեցեր է, որուն յաջորդեր է սոսկալի փոթորիկ մը, ահուելի կայծակ մը զարկեր է վիթխարի կաղնի մը, կաղնին շախջախուեր ինկեր է աքիսին վրայ և քիչ մնացեր է որ աքիսն ալ շախջախուի:

Եղնիկները քիչ մը առաջ գնացին և օրուան մեծ դէպքը հաղորդեցին ուրիշ կենդանիներու: Անոնք ալ իրենց կարգին նոյն պատմութիւնը կրկնեցին իրենց հանդիպողներուն, նորանոր յաւելուածներով:

Օր մը վերջ ահաւոր լուրը տարածուած էր անտառին մեծ ու պզտիկ բոլոր կենդանիներուն մէջ որոնք զարհուրանքով համակուած՝ կարծեցին թէ աշխարհի վախճանը կը մօտենայ :

ԱՌԱՄ.— Բերնէ բերան, ստեղը կ'ըլլայ գերան:

66. — ՄԵՂՈՒՆ ՈՒ ՃԱՆՃԸ



— Գարուն, ամառ ամէն օր
ես կ'երթամ յեն, դաշտ ու ձոր,
Կ'աշխատիմ ես միշտ անվերջ,
Մեղր փնտնել ծաղկանց մէջ,

Եւ գրեթէ շիփ-շիսակ
Կը սանիւմ ես մեր փերակ.
Ու երբ փչէ ցուրտ խամիւն,
Եւ ծաղիկներն ալ թռումին,
Ես ձմեռը պաշարով
Կ'ըլլամ իսպառ ապահով:

— Փոքրիկ ճանճ եմ զուարճասեր,
Միշտ կը թռչիմ վար ու վեր,
Խռչոր սան մը բակին մէջ
Շրջան կ'ընեմ ես անվերջ.
Իսկ խոհանոցը նոյն սան
Իմ կայանն է սիրական.
Կերուխումէ, խաղէ զաւս
Ուրիշ բանի չեմ ասակ
Եւ ներկայով բաւական.
Մի՞տք չեմ բերեր ուրիշ բան:

— Ի ու ք որո՞նն կ'ուզէք Նմանիլ, ճանճի՞ն թէ մե-
ղուին ...



67: — ՏԱՆՁԵՆԻՆ ԵՒ ԴԴՈՒՄԸ

Անգամ մը տանձի ծառին քով դդում մը բուսաւ: Քիչ ժամանակի մէջ դդմենին այնպէս աճեցաւ, զօրացաւ որ տանձենիին պլլուելով սկսաւ վեր բարձրանալ: Բարձրացաւ, բարձրացաւ, ծառին մինչև կատարը հասաւ:

Առտու մը տանձենին երբ քունէն արթընցաւ, շատ զարմացաւ տեսնելով դդմենին իր վրայ ելած: Զարմացաւ, զարմացաւ ու հարցուց անոր:

— Ո՞վ ես՞ դուն, ուրկէ եկար, ի՞նչպէս ասանկ շուտով գլուխս ելար:

— Իմ անունս դդում է, պատասխանեց դդմենին յոխորտալով, զեռ երկու ամիս չկայ որ քովդ տնկուած էի, շուտ մը աճեցայ, զօրացայ, վեր ելայ, ու ահա տես, քու բարձրութեանդ հասեր եմ:


Տանձենին ըսաւ: |

— Հոս հասնելու համար ես քսան տարի յոգներ եմ, ինչ հովերու, ինչ ցուրտերու

բաջութեամբ դիմացեր եմ. բայց գիտցիր, դուն որ շուտով մինչև երկինք ելեր ես, այնպէս ալ շուտով կը չորնաս ու լաւ օրեր չես տեսներ:

ՀԱՆՆԵԼՈՒԿ 16. — Կակուղիկ կաշի,
Ո՛չ կը հալի, ո՛չ կը մաշի:

68. — ԱՌՈՒԱԿԸ



ԳԼԳԸԼ, ԳԼԳԸԼ սահելով՝
Առուակը հեզիկ
Դալարաւէտ օփն ի վար
Կը մղէ իր ալիք:

Ծաղկին , խոտին համբոյրներ

Կուտայ ըշտապով .

Անուշ գեղգեղ կը լսուի

Իր ավերուն քով .

Գլգըլ . գլգըլ կը սուրայ

Ձուրը պաղպաղուն ,

Եզերքներուն , խոտին վրայ

Տղաք կը գրօնուն :

Խիա ոստերն են ծառերուն

Անոնց հովանի

Եւ ձայնակից երգերուն

Ձովաշունչ քամի :

Ձունին անոնք ո՛չ նախանձ ,

Ո՛չ հոգը կեանքին .

Վայրկեանները ոսկեղօծ

Ձրարթ կը սահին :

Ձինջ վրտակին արիքներ

Անոնց կեանքին հետ

Որագ , արագ կը փախչին

Ու չեն դառնար ետ :

Ձրարթ ու խօլ քրքիչներ

Տըղոց են բաժին ,

Եւ միմունջներ հեղասահ ,

Երգն են առուակին :

ՀԱՆՆԵԼՈՒԿ 17. — Ի՞նչ է այն որ գեղասեղ մը չի
կրնար սանիլ, գեղան մը կը սանի :

69. — ԹԻԹԵՌՆԻԿԻՆ ՉՐՈՅՅԸ

Դալարագեղ սարին կողերուն վրայ
բուսած էին հոյլ մը ծաղիկներ , գեղեցիկ
ու նաշխուն ծաղիկներ , և այնտեղ կ'սպա-
սէին ու կը ձանձրանային :

Օր մը իրենցմէ մէկն ըսաւ .

— Օ՛հ , ի՞նչ տխուր է այս մեր կեանքը ,
տեսէք , մեր գլխուն վերև թռչունները
արագօրէն կը սուրան օդին մէջ , ազատ ու
համարձակ , դիտեցէք , թեւաւոր միջատներ
մեր շուրջ պար կը բռնեն ուրախ , զուարթ ,
մինչ մենք մեր ցօղուններուն պիտոյ կպած ,
զրեթէ հողին փակած , ստիպուած ենք ան-
շարժ կանգնիլ ու ձանձրանալ :

— Իրաւունք ունիս , քնրիկ , ըսաւ
անդիէն ուրիշ ծաղիկ մը , ո՞ւր թողունք
հապա այն փորձանքները՝ որոնց շարունակ
ենթակայ ենք . հովիւն ու ոչխարները մեզ
ամէն օր կը կոխկրտեն , չարաճճի մանուկ-
ները մեզ անխնայ կը փետրտեն փունջեր
շինելու համար , և մենք որ և է միջոց չու-
նինք խուսափելու այս ամէն աւերիչ հար-
ուածներէն :


— Իրաւ , ամէնքս ալ թշուառ կալա-
նաւորներ ենք , ձայնեցին բոլոր ծաղիկները

միաբերան, ինչքան կը ցանկայինք օդին
 մէջ սուրացող թռչուններուն, մեր շուրջ
 պար դարձող թևաւոր միջատներուն պէս
 մենք ալ արձակ ըլլալ, թևեր ունենալ և
 ամէն կողմ թևածել ազատօրէն :

Եւ խարին բոլոր ծաղիկները՝ ազատ
 կեանքի տենչովը ոգեւորուած, սկսան ըմ-
 բոստ շարժումներ ընել, և օր մըն ալ բուռն
 թափով մը փրթան իրենց ցօղուններէն,
 թև առին ու թռան օդին մէջ :

Այսպէս՝ այն գեղեցիկ ու նաշխուն ծա-
 ղիկները եղան ազատ թիթեռնիկներ :

70. — ԻՄ ԳԱՌՆՈՒԿՍ



Աղուոր գառնո՛ւկս իմ սիրուն,
 եկո՛ւր, ցասե՛՛ք՝ փոյս ի վեր,


Ըսուերիև սակ ծառերուն
 Ուր կը փրչեկ մեղմ հոյտեր :


Փափուկ խոտերը դաշին
 Բեզի բազմոց թո՛ղ ըլլան,
 Լիճիև ջուրերը հեշին :
 Տոսիկներդ թո՛ղ լըռան :

Բեզի շունէկն ու ձորէկն
 Բաղեմ տերեւ ու ծաղիկ,
 Արեկն քերեմ ֆեզ ցորեկն,
 Տունէկն շափար եւ հաւսիկ :

Ծունկըս ֆեզի անկողիկն,
 Կուրծքս բարձ, քե՛ւքս վերմակ,
 Չը դպչի պո՛չըդ հողիկն,
 Չաղսոսի բո՛ւրդըդ ձերմակ :

ԱՌՍԾ. — Չըսոյ տղուն կար չեկն սար :





71. — ԵՐԵՔ ԸՆԿԵՐՆԵՐ

Ամպոտ օր մըն էր. բարակ անձրև մը կը մաղուէր: Երեք թիթեռնիկներ անձրևին տակ մնացած էին: Անոնցմէ մին կարմիր էր, միւսը՝ ճերմակ, միւսը՝ դեղին: Թիթեռնիկները պատասպարան փնտռելու համար հոս ու հոն ինկան ու տեսան կակաչ մը. մօտեցան անոր և այսպէս խնդրեցին:

— Կակաչ, այ կակաչ, թերթիկներդ բաց, յոգնած ընկերներուս տեղ ըրէ. տես, անձրեւը մեզ թրջեր է, մենք կը մսինք, կը դողանք, տեղ մը չունինք մտնելու, դէհ, շուտ ըրէ, կարմիր կակաչ, թերթիկներդ բաց:

— Լաւ, կարմիր թիթեռնիկին տեղ կուտամ, բայց ճերմակ և դեղին թիթեռ-

ներուն տեղ չեմ տար, պատասխանեց կակաչը:

— Իմ ընկերներէս ես չեմ բաժնուիր, ըսաւ կարմիր թիթեռնիկը, աւելի լաւ է մէկտեղ մնանք, մէկտեղ թրջինք, մէկտեղ մեռնինք քան թէ ես մինակ անընկեր ապրիմ:

Երեք թիթեռները հեռացան և քիչ մը անդին տեսան շուշան մը, մօտեցան անոր և այսպէս խնդրեցին:

— Շուշան, այ շուշան, թերթիկներդ բաց, յոգնած ընկերներուս տեղ ըրէ. տես, անձրեւը մեզ թրջեր է. մենք կը մսինք կը դողանք. տեղ մը չունինք մտնելու. դէհ, շուտ ըրէ, ճերմակ շուշան, թերթիկներդ բաց:

— Լաւ, ճերմակ թիթեռնիկին տեղ կուտամ, բայց կարմիր և դեղին թիթեռներուն տեղ չեմ տար, պատասխանեց շուշանը:

— Իմ ընկերներէս ես չեմ բաժնուիր, ըսաւ ճերմակ թիթեռնիկը, աւելի լաւ է մեզի որ մէկտեղ մնանք, մէկտեղ թրջինք, մէկտեղ մեռնինք, քան թէ ես մինակ անընկեր ապրիմ:

Երեք թիթեռները նորէն հեռացան և

այս անգամ անոնք տեսան նարգիս մը. մօ-
տեցան անոր և այսպէս խնդրեցին :

— Նարգիս, այ նարգիս, թերթիկներդ
բաց, յոգնած ընկերներուս տեղ ըրէ. տես,
անձրեւը մեզ թրջեր է. մենք կը մսինք,
կը դողանք. տեղ մը չունինք մտնելու.
դէհ, շո՛ւտ ըրէ, դեղին նարգիս, թերթիկ-
ներդ բաց :

— Լաւ, դեղին թիթեռնիկին տեղ կու-
տամ, բայց կարմիր և ճերմակ թիթեռնե-
րուն տեղ չեմ տար, պատասխանեց նար-
գիսը :

— Իմ ընկերներէս ես չեմ բաժնուիր,
ըսաւ դեղին թիթեռնիկը, աւելի լաւ է որ
մէկտեղ մնանք, մէկտեղ թրջինք, մէկտեղ
մեռնինք քան թէ ես մինակ անընկեր ապրիմ :

Արեւը վերէն տեսաւ ամէն բան, տե-
սաւ ու լսեց երեք ընկերներու սէրը. ճեղ-
քեց ամպերը, ցրուեց անձրեւը և իր ջերմ
շողերով տաքցուց ու չորցուց երեք սիրա-
սուն թիթեռնիկ-ընկերները :

ՀԱՆՆԵԼՈՒԿ 18. — Ո՞վ է այն որ ծովուն վրայ կը
կենայ առանց քրջելու :

72. — ՉՈՐՍ ՆՈՒՆԵՐՆԵՐ

Վարդ մը պարտէզէն, այտիս պէս աղուոր,
Գարուն երբոր գայ, հայրիկիս համար
Պիտի փրցընեմ, ու երբ տամ՝ այն օր
Իրպանս լեցուն կ'ունենամ շաքար :

Անմեռուկ մըն ալ կապոյտ աչքիս պէս,
Քեզի պիտի տամ, քուրիկըս Վերժին,
Իուն ինձի կապոյտ գուլպայ կը հիւսես
Որ իմ թոմպուլիկ ոտքերս չմըսին :

Ու մազերուս պէս դեղին ծաղիկ մ'ալ
Հողին տակ պառկող անուշ աղբարին,
Որ չը նախանձի Վերժինին, չըլայ .
Ան ալ կ'աղօթէ Աստուած՝ պապային :

Ձիւնին պէս անբիծ, սրտիս պէս ճերմակ
Ճերմակ շուշան մ'ալ՝ մայրիկիս անուշ,
Անոր տեղ, գիտե՛մ, մայրիկս ալ հիմակ
Համբոյր պիտի տայ այտերուս քնքոյշ :



6542342

73. — ԱՆՆՄԱՆ ԳՈՐԾԱԿԻՅՆԵՐ

Օր մը խեցգետինը, ձուկն ու կարապը
գետակին եզերքը գտան անտէր սայլ մը,
մէջը լեցուն պարէնով:

— Օ՛հ, ինչ լաւ գիւտ, ինչ ազու՛որ
բախտ, գոչեցին երեքը միաբերան, եկէք,
քաշենք, քշենք սա սայլը, տանինք անկիւն
մը, մէջի պարէնները փայ բաժին ընենք,
ուտենք, խմենք, քէյֆ ընենք:

Այսպէս ըսին ու անմիջապէս ձեռնարկեցին գործի:

Կարապն՝ առջեւէն, ձուկը՝ ետեւէն, և խեցգետինը՝ մէկ կուշտէն պինդ փական սայլին ու սկսան քաշել բոլոր ուժով, բայց սայլը տեղէն չէր շարժեր:

— Հա՛, աղբբտիք, կը ձայնէին իրարու, քիչ մըն ալ ուժով, քիչ մըն ալ ուժով...

Ու տքալով, Փշալով կը քաշէին սայլը, բայց բանն այն է որ կարապը կը քաշէր դէպի վեր, դէպի օդը, ձուկը կը քաշէր դէպի վար, դէպի գետը և խեցգետինը՝ դէպի ներս, դէպի ցամաք:

Ժամերով աշխատեցան, արիւն քրտինք մտան, դիրք փոխեցին, ձև փոխեցին, առաջ


անցան, ետև դարձան, քովէն քշեցին, կուշտէն քաշեցին, բայց ի գնւր...: Սայլը տեղէն մատ մը խսկ քալած չէր:

Վերջապէս սայլին տէրը վրայ հասաւ, լծեց ձին սայլին ու առաւ տարաւ:

Ու մեր երեք բարեկամները մնացին բերանաբաց...:

— Ինչո՞ւ համար չկրցան սայլը շարժել, ինչ ուղղութեամբ քաշելու էին որպէսզի սայլը շարժէր:

74. — ՄԱՆՈՒԿԸ ԺԱՄԱՅՈՅՑԻՆ



Համիխա պես կը սրբաս,
Սրբաբներդ կը դառնան.
Քիչ մը կեցիր, ի՛նչ կ'ըլլայ,
Չե՛ս մեղիքնար սա գարնան:

Թի՛ք բա՛ք, թի՛ք բա՛ք՝ ականջիս
 երբ մայրիկը բռնէ՛ քեզ,
 Կ'ըսէ՛ թէ միշտ կը՛ սանիս՝
 Վարդի՛ քերթերն իմ կեանքէս :

Օրոր՝ ըսեմ, հընացիր,
 Շաբար, ղնկոյզ, հաց, պանիր,
 Ողածներդ սամ քեզի,
 Կեանքս մ'աններ; մի՛ սանիր :

Ես քուն ղրարմ, թէ արթուն,
 Դուն չես կենար, կը՛ քաշես,
 Ըսել է՛ չես հասկնար
 Իմ ժայտըս ու շաշես :

Վաղը՝ երբոր մեծ ղրարմ,
 Քեզ կը՛ կախեմ իմ վիզեն,
 Վախցի՛ր ինձմէ՛, ու մի՛ քիչ
 Ժամերդ կամաց թող վազեն :

ՀԱՆՆԵԼՈՒԿ 19. — Յուսիկ յուսիկ կը քալե
 Գիշեր՝ ցերեկ, փոյրը չէ .
 Թեև նոյն տեղ միտս ման գայ
 Բայց ո՛չ գլուխը կը դառնայ
 Ո՛չ քալելի կը յողմի՛,
 Ոչ ուտելու պէտք ունի,
 Բայց ինք է որ քեզ կ'ըսէ
 «Ն՛, կե՛ր, պառկե՛, ախաւսկ՛»:

75. — ՄԻՈՒԹԵԱՆ ՈՅԺԸ

Փոքրիկ մըջիւն մը հոս ու հոն կը թա-
 փառէր հատիկներ փնտռելով որպէս զի
 բոյնը տանի :

Ասդին դարձաւ, անդին դարձաւ և ահա՛
 գտաւ վարսակի ծղօտ մը զոր ուզեց իր
 բոյնը փոխադրել, բայց ինչպէս տանիլ,
 քանի որ վարսակը այնքան խոշոր էր և ինք
 այնքան տկար :

Այն ատեն փոքրիկ մըջիւնը խիճի մը
 վրայ ելաւ, և անոր գագաթէն սկսաւ դի-
 տել իր շուրջը, իբրև թէ աշտարակի մը
 վրայ ըլլար :

Նայեցաւ, նայեցաւ և վերջապէս նըշ-
 մարեց իր ընկերներէն երկու մըջիւններ որ
 մօտէն կ'անցնէին : Շուտով վար իջաւ խի-
 ճէն, վազեց իր ընկերներուն քով, քիթը
 քսեց անոնց քիթերուն իբրև թէ ըսելու
 համար :

— Ընկերներ, ետեւէս եկէք, աղուոր
 բան մը կայ սատեղ, միասին մեր բոյնը
 տանինք :

Երեք մըջիւնները շտապով վազեցին
 դէպի վարսակին ծղօտը, երեք կողմերէն

պինդ խածին և քաշելով քաշքշելով՝ տարին
մինչև իրենց բոյնը :

Ինչ որ մէկ մըջիւնը առանձին չկրցաւ
ընել, երեքը միասին դիւրաւ կատարեցին :

Ա.Ռ.Ա.Ծ. - Ամեն մտոսիտ մագ սը, կ'ըրայ մտոսիտ մը :



76. — ՄՐՋԻԻՆՆ ՈՒ ՏՂԱՆ

Պշտիկ ու սև մըջիւններ
Իրենց կտր ծակին քով
Սըկէ, նըկէ փըշուրներ
Բերին դեղին արեւով :

Օրն ամառուան արեւոտ
Կ'երթան հեռո՞ւ, հեռու տեղ,
Հատիկ, հունտեր ու ծըղօտ
Կըտցեն, կըրեն միատեղ :

Ես կը սիրեմ մըջիւնին
Երթալ դիտել տընակը,
Կը սիրեմ միշտ օրն օրին
Գտնել իրենց քարբակը :

Մըջիւն, մըջիւն, սեւուրիկ,
Ես ա՛լ ահա՛ քեզի պէս
Գործ մը կ'ընեմ պզտըրիկ,
Կը մարդ դառնամ իրապէս :

— Ինչ կ'ընէ մըջիւնը ամառն ի բուն :



77. — ԳԵՂԱՑԻՆ ՈՒ ՍԱՏԱՆԱՆ

Անգամ մը գեղացիին մէկը սատանա-
յին հետ ընկեր եղաւ ու ընկերովի արտ մը
սոխ ցանեցին :

Երբոր սոխերը բուսան և քաղելու ա-
տենն եկաւ, գեղացին ըսաւ :

— Ընկեր, ի՞նչպէս պիտի բաժնենք
սոխը, հիմակուց որոշենք որ կուի չըլլայ :

— Շատ աղէկ, ես վրան կ'առնեմ,
դուն ալ տակը առ, ըսաւ սատանան, տես-
նելով սոխին խոշոր ցողունները :

Գեղացին հաւանեցաւ և սոխը քաղեցին :
Սատանան առաւ սոխին հողէն վեր ելած
ցողունները և արմատները թողուց գեղա-
ցիին : Բայց քիչ վերջ հասկցաւ որ ինք
խաբուեր է և իր առածները բանի մը չեն
ծառայեր :

Այն ատեն դարձաւ, գեղացիին ըսաւ :
— Ընկեր, եկ՛ուր ընկերովի ցորեն մըն
այ ցանենք, բայց ես ուզած դիս պիտի
առնեմ :

Շատ աղէկ, ըսաւ գիւղացին և ցա-
նեցին ցորենը :

Հունձքի ատեն սատանան գեղացիին
ըսաւ :

— Այս անգամ ես ներքեւը պիտի
առնեմ, դուն վրան առ :

Գեղացիին ուզածն այ այդ էր. հաւա-
նեցաւ սատանային առաջարկին, ինք ցո-
րենին հասկերը առաւ և ծղօտներն ու ար-
մատները տուաւ սատանային :

Սատանան այս անգամ այ խարուեցաւ
և միտքը դրաւ անգամ մըն այ մարդ-արա-
րածին հետ ընկերութիւն չընել :

— Յորենը ցորենարոյսին ո՞ր մասէն կ'եզլէ, հասկէն
թէ ծղօտէն :

Ա.Ռ.ԱՄ. — Մարդ մարդու քահանայ,
Մարդ մարդու սասանայ :



78. — Ը Ն Կ Ո Յ Ձ Ը

Կոկիկ, կոկիկ, կըշորիկ
Ունիմ ընկոյզ աղուորիկ .
Վըրաւ ունի կանանց փուր
Տակի կճեպն է ամուր :
Կանանց փուրը վար կուսաւ
Որ միջուկէն առնեմ համ .
Դեղին մաշկ մ'ալ կայ բարակ,
Ներսը՝ ընկոյզ ձեպ-ձերմակ .
Կեղուեմ, կճպեմ կամացուկ
Որ ճաշակեմ իր միջուկ :

Ընկուզեմիս է մեծ ծառ,
Տեսիք շէտ, մեծափառ,
Լի եմ ճիւղերն ընկուզով
Որոնց մեջէն կը փյէ հոյ :
Երբ սաք կ'ընէ արեւը,
Երթաւի մասիւնի մերժելը .
Բարեւ մեռեմի դեպի վեր,
Դեռիս քափեմի ընկոյզներ .
Ժողովե՛մ, փրբե՛մ, սանիւնի սուռ,
Բաժին հանեմի ամէնուն :

ՀԱՆՆԵԼՈՒԿ 20. — Թոնիր մը ունիմ, չորս հաց
կ'առնե :


79. - ՄԿՐԱՏՈՎ ԿԸ ՀՆՁԵՆ

Քաղբըցի Մարտիկն ու իր կինը Աննա միասին գեղ կ'երթային: Երբոր կամուրջէ մը կ'անցնէին, հեռուէն տեսան ցորենի ոսկեգոյն արտերը: Մարտիկ ըսաւ իր կնոջը:

— Աննա, նայէ, արտերուն ցորենները հասեր են, քանի մը օրէն պէտք է որ հնձեն. գիտե՞ս, ինչո՞վ կը հնձեն . . . :

— Ի հարկէ մկրատով, ըսաւ Աննա:


— Ի՞նչ կ'ըսես, մկրատով ցորեն կը հնձուի՞, ցորենը մանգաղով կը հնձեն:



— Մանգաղով, չէ, չէ, մկրատով կը հնձեն, պնդեց Աննա որ իր տգիտութեանը չափ ալ յամառ էր:

— Կնիկ, դուն խե՞նդ ես, ի՞նչ ես, ցորենը մանգաղով կը հնձեն:

— Չէ', մկրատով կը հնձեն: Էրիկ-կնիկ այսպէս երկար ատեն վիճաբանեցան: Աննա չէր ուզեր համոզուիլ և



յամառօրէն կը կրկնէր թէ մկրատով կը հնձեն:

Վիճաբանութիւնը տաքնալով կռիւի փոխուեցաւ, և Մարտիկ բարկանալով բռնեց կնիկը, կամուրջէն վար նետեց գետը: Յամառ կնիկը սկսաւ տարուիլ գետին հոսանքէն. բայց ջուրին մէջէն մէկ ձեռքը վեր բարձրացուց և երկու մատերը մկրատի ձեւով սկսաւ շարժել հասկցնելու համար թէ մկրատով կը հնձեն ցորենը:

— Մանգաղը, գերանդին ի՞նչ բանի գործիք է, իսկ մկրատը . . . :

80. — Լ Ե Ի Ո Ն Ի Կ Ը

Աչքն է սեւուկ, դէմքը սիրուն
Դեռափըթիթ իմ Լեւոնիս,
Փափկիկ ու վարդ իր այտերուն
Չես դիմանար թէ սիրտ ունիս:

Շուշան մարմինն ամբողջ ճապուկ
Բոյնն է անուշ համբոյրներու,
Ծիծաղներուն ձայնը փափուկ
Կը ցրուեն ցաւն հոգւոյդ հեռու:

ձերմակ թեւերն երբ կը բացուին
Կարծես հրեշտակ մ'է մարմնացեալ,
Մազերն ոսկի թոյլ թոյլ հովին
Որ կ'ուզէ վեր թռչիլ դարձեալ:

Թարմ ու ժպտուն՝ ինչպէս Մայիս,
Հոտն անուշիկ, գոյնը կաթի,
Երբ աչքերուն մէջ կը նայիս
Հոգին հողուոյդ մէջ կը կաթի:

Արցունքներու մարգրիտ հատեր
Երբ թարթիչներն իր կ'ողողեն,
Դուն կը կարծես վարդի թերթեր
Թրջած այգուն ոսկի ցօղէն:

Սն ի՛նչ շնորհ, ան ի՛նչ հրապոյր,
Կը լեցունին աչքդ արցունքներով
Երբ իր բոյնին մէջ քաղցրաբոյր
Կը դիտես քունն իր անխըռով:

Ալ մի՛ նայիր դուն վարդերուն.
Ամբողջ հրեշտակ, ամբողջ հոգի՝
Ամենապահն Վարդը սիրուն
Հոն, հոն օրօրոցին մէջ կը պառկի:

81. — ԱՊՐԻԼԻ ՄԷԿԸ

Արմենակ շատ կը սիրէր շաքարը: Օր
չէր ըլլար որ բուռերով շաքար չուտէր. ծո-
ցերը, գրպանները շարունակ լեցուն էին
շաքարով: Մայրիկը, մեծ քոյրը՝ Սաթենիկ
յաճախ կը յանդիմանէին զինք իր շաքարի
մոլութեանը համար, բայց Արմենակ մտիկ
չէր ըներ, հայրիկէն թուզթի, մատիտի հա-
մար այրած զրամները շաքարի կուտար,
շատ անգամ ալ տան պահարանէն գաղտուկ
շաքար կը շորթէր, և վերջապէս միշտ գըր-
պանին մէջ շաքար ունենալու միջոցը կը
գտնէր:

Ապրիլի առաջին օրը Սաթենիկ խորհե-
ցաւ դաս մը տալ շաքարամոլ Արմենակին,
կանչեց զանի և ըսաւ:

— Արմենակ, գիտե՞ս, հօրեղբօրմէդ
նամակ առինք, քեզի համար տուփ մը շա-
քար նուէր զրկե՞ր է՞. հօրաքոյրիդ տունն է՞
տուփը, գնա՛, առ՛, բեր: †

— Արմենակ ուրախութեամբ թռաւ,
գնաց հօրաքրոջը տունը և ուղեց շաքարին
տուփը զոր հօրեղբայրը զրկե՞ր էր:

Հօրաքոյրը նախ զարմացաւ, բայց ան-

միջապէս յիշեց թէ այն օրը ապրիլ մէկ է, ուստի քթին տակէն ժպտելով ըսաւ :

— Շաքարին տոնփը... հան, երէկ իրիկուն մօրաքոյրդ առաւ, տարաւ ձեզի բերելու համար :

Արմենակ անմիջապէս թռաւ. գնաց մօրաքրոջ տունը և անհամբերութեամբ շաքարին տոնփը հարցուց զոր հօրեղբայրը զրկեք էր :

Մօրաքոյրը հասկցաւ խնդիրը և քմծիծաղով մը ըսաւ :

— Շաքարին տոնփը, հան, առտուն մօրեղբայրդ առաւ, տարաւ ձեզի բերելու համար :

Արմենակ շիտակ շունչն առաւ մօրեղբօրը տունը և հարցուց շաքարին տոնփը զոր հօրեղբայրը զրկեք էր :

Մօրեղբայրն եւս հասկցաւ խաղը և խնդալով ըսաւ :

— Շաքարին տոնփը... հան, քիչ մը առաջ մեր Զարեհին հետ ձեր տունը զրկեցի :

Արմենակ վազելով գնաց տուն և շիտակ Սաթենիկին զիմելով պահանջեց շաքարին տոնփը զոր բերէր էր Զարեհ : Յոգնութենէն կասկարմիր եղած, արիւն-քրտինք մտած էր ու կը հեւար :

— Պահարանը դրի տուփը, հիմա բերեմ, ըսաւ Սաթենիկ, և գնաց շաքարի պարապ գեղեցիկ տուփ մը գտաւ, թուղթիկաորի մը վրայ տող մը բան գրեց, դրաւ մէջը, և տուփը բերաւ, դրաւ Արմենակին առջեւ :

Արմենակին ուրախութիւնը չափ չունէր, յարձակեցաւ տուփին վրայ, բացաւ բերանը և... ինչ տեսնէ՛ աղէկ... :

Տուփին մէջ կար կտոր մը թուղթ որուն վրայ խոշոր տառերով գրուած էր :

«Ապրիլ մէկի խաղ, ի պատիժ շաքարամոլ Արմենակին» :

— Ինչ կ'ընեն Ապրիլ մէկին. ինչո՞ւ համար խաղեցին Արմենակը :



Հաւք
Եւզարթս

82. — ԹՌԶՈՒՆԻՆ ՄՏԱԾՈՒՄԸ



Ես կը բնակեի սաև մը մէջ փոքրիկ,
Նեղկուկ ու միևնակ
Աշխարհն ինձ համար էր կրս-կըզորիկ,
Պատերը ձերմակ:

Անկէ յետոյ ես այտես ըրի բաց
Բոյնիս մէջ պզտիկ,
Ըսի. աշխարհը յարդէն է շինած
Մայրիկս իմ գոհրիկ:

Օր մըն աչ բոյնես գոյսիկս հանած՝
Նայեցայ հոս հոն.
Տեսայ աշխարհը տերեւէ շինուած
Վրտան աչ՝ մեր բոյն:

Հիմա կը բոյնիմ շա՛հ հեռու տեղեր,
Տեղեր բարձր ու ցած,
Բայց թէ աշխարհը ի՞նչէն եմ շինեմ,
Դեռ չեմ հասկցած:

ԱՌԱՄ. — Ածան հաւը կրկուսն կ'ըրայ:



83. — ԿԱԹԻՂՆԵՐՈՒ ԾԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆԸ

Չուրի կաթիլները ձանձրացան ամայի
ու միօրինակ ծովուն վրայ և իրարու ըսին:
— Ի՞նչ լաւ կ'ըլլար որ վեր բարձրանա-
լինք, ելլէինք սա լեռան գլուխը, սա ամ-
պերուն մօտ, արեւին ու աստղերուն ջովի-
կը: Ինչքան կը փափաքէինք վերէն նայիլ
թէ ինչ կայ աշխարհի վրայ, տեսնել դաշ-
տեր, անտառներ, գեղեր ու քաղաքներ, մի,
ի՞նչ լաւ կ'ըլլար:

Արեւը լսեց վերէն կաթիլներուն փափա-
քը, իր տաքուկ ճառագայթները զրկեց ա-
նոնց և վեր կանչեց:

Կաթիլները կամաց կամաց տաքցան,
չոզի դարձան և իրարու ետեւէ սկսան վեր
բարձրանալ: Բարձրացան, բարձրացան,

անդադար բարձրացան ու մինչև ամպերուն մօտեցան :

— Շատ բարձրացանք , ըսաւ կաթիլներէն մին , ալ վարը բան մը տեսած չունիմ :

— Ես շատ յոգնեցայ բարձրանալով , ըսաւ ուրիշ կաթիլ մը , չեմ կրնար այստեղ առկախ կենալ , հանգչիլ կ'ուզեմ :

— Այստեղ շատ ցուրտ է , ըսին միւս կաթիլները , շատ դժուար է եղեր վերը ապրիլ :

— Այո , այո , ձայն տուին բոլոր կաթիլները միաբերան , ինչ լաւ կ'ըլլար որ առաջուան պէս նորէն վարն ըլլայինք :

Արեւը նորէն լսեց կաթիլներուն գանգատը և ցուրտ քամի դրկեց :

Գոլորշի-կաթիլները աւելի մտեցան , իրարու մօտեցան , քիչ քիչ խտացան ու ահա դարձան մուխ մուխ ամպեր :

Քամին սաստկացաւ . ամպ-կաթիլները ալ աւելի մտեցան ու ահա դարձան ջուրի կաթիլներ :

— Ի՞նչ լաւ եղաւ որ նորէն ջուր դարձանք , ըսին կաթիլները , և ուրախութեամբ զիրար բարեւելով հանդարտօրէն վար իջան :

— Ի՞նչ ազուոր անձրև , ըսին մար-

իկ , տեսնելով կաթիլներուն հանդարտ ջրը :

Կաթիլները խմբովին ինկան սարերու վայ , գլորեցան սարերէն վար , և իրարու շանալով հեղեղ կազմեցին :

Հեղեղն շտապով սկսաւ առաջ երթալ — նստառներու , ձորերու մէջէն , գնաց , գնաց , ջաւ դաշտը և միացաւ մեծ գետին :

Գետը՝ իր ջուրերուն հետ առաւ , տառաւ մեր կաթիլները և վերջապէս հասցուց Երեւնց մօր՝ մայր-ծովուն գիրկը :


— Բարի եկաք , իմ ձագո՛ւկներ , ըսաւ ծովը կաթիլներուն , և կարօտով ընդունեալաւ զանոնք իր ծոցին մէջ :

- Կաթիլները ի՞նչպէս շոգի կ'ըլլան :
- Ի՞նչ են ամպերը . շոգին և ամպերը ի՞նչպէս լուրի կը փոխուին :

ՀԱՆՅԵԼՈՒԿ 21. — Առանց մաղի կը մաղուիմ,
 Հողին մէջը կը շաղուիմ,
 Գետինն սակը կը բաղուիմ,
 Ծառին, բոյսին կուտամ ան,
 Սեւ հողը կը ներկեմ կանանչ :



84. — ՀՆԴԿԱՀԱԻՆ ՈՒ ՏՂԱԲԸ



Սա հնդկահա՛ւը տեսէք,
Որ վեր առած քիթը սէք
Շուրջը նայիլ չի կամիր.
Պարզած իր պոչն հովահար
Կը վազէ իբր այսահար
Բարկութենէն կասկարմիր:

Եւ սա տըղա՛քն ալ տեսէք,
Լեղապատառ, այնպէս հէք,
Որ մին միւսը շարկած վեր,
Վախով, դողով ու անզէն՝
Այնքան շուտ տուն կը վազեն
Որ լեզունին է կապուեր:

Կը հաջէ շունը հա՛ւ, հա՛ւ...
Տղաքներն ու հնդկահաւ
Քիչ մ'ետքը կը հանդարտին,

Ու պարտեզը քովէ քով՝
Կըրկըռնեցով ու երգով
Կ'եղբայրակցին վերստին:

*
*
*

Ասկէ առէք դուք օրինակ,
Մեծ ու պզտիկ շարունակ,
Երբոր կռուիք դուք, տղա՛ք,
Պահիկ մը վերջ պէտք է որ
Իրարու հետ հաշտ, աղուոր
Խօսիք, խնդաք ու խաղաք:

ԱՌԱՄ. — Միևչեւ որ հասը բարակնայ,
բարակին հոգին կ'ելլի:

+



85. — ԵՐԵՔ ՀՍԿԱՆԵՐ

Աշխարհիս վրայ կ'ապրին երեք ծերունի
հսկաներ: Տղաք, դուք շատ լաւ կը ճանչ-
նաք զանոնք:

Այս հսկաներէն մէկունն անուոնն է Հուր
պապուկ, միւսին անուոնն է Զուր պապուկ
մէկն ալ կը կոչուի Հով պապուկ:

Օր մը Հուր պապուկը բարկացաւ
կաս-կարմիր կտրեցաւ և յոխորտալով մը
ըսաւ:

— Իրաւ որ աշխարհի վրայ ինձմէ աւելի
գորաւորը չկայ: Ինձի դպչողը կը խանձեմ
կ'այրեմ: կրնամ ամբողջ քաղաքներ հրդե-
հել, ընդարձակ անտառներ մոխիր դարձնել
կրնամ լեռները պատռտել, կրնամ ամէնէն
ամուր մետաղները հայեցնել, շուր դարձը
նել: Ո՞վ կրնայ իմ կրակիս գորութեան
դիմանալ . . . :

Դեռ խօսքը բերանն էր՝ երբոր Զուր
պապուկը որ անկէ կ'անցնէր, ծիծաղեցաւ
և ուժով մը թքաւ Հուրին վրայ, և ան-
մեծխօսիկ Հուր պապուկը իսկոյն սմբեցաւ
մարեցաւ:

Այն ատեն Զուր պապուկը սկսաւ
հպարտանալ և ըսաւ:

— Իրաւ որ աշխարհի վրայ ինձմէ աւելի
գորաւորը չկայ: Ես կը մարեմ անոելի հըր-
դեհները. իմ հեղեղներուս հոսանքին ոչինչ
կրնայ դէմ կենալ: Ես կրնամ ապառաժ-
ները փրցնել, լեռները քակել ու առնել
տանիլ: Ես կրնամ ամբողջ գիւղեր, քաղաք-
ներ, աշխարհներ ողողել, իմ մէջս խեղդել:
Իսկ մեծ գետերու, լիճերու, ծովերու մէջ
իմ ուժս չափ չունի, իմ հզօր թիկունքիս
վրայ անազին շոգենաւերը շալկած՝ կը պը-
տըտցնեմ աշխարհէ աշխարհ . . . :

Այս պահուն Հով պապուկը՝ որ կը
քնանար, յանկարծ արթնցաւ և սկսաւ յօ-
րանջել: Զուրն իսկոյն ձայնը կտրեց և վա-
խէն սկսաւ դողդղալ: Հով պապուկը սկսաւ
փչել, և մերթ հազալ, փոնգտալ Զուրին
երեսն ի վեր: Զուրը յուզուեցաւ տակն ու
վրայ եղաւ և ալիքի անաբեկ շարժումներով
սկսաւ տարուբերիլ: +

Այն ատեն Հով պապուկն սկսաւ գո-
ռողանալ և ըսաւ:

— Իրաւոր աշխարհի վրայ ինձմէ աւելի
գորաւորը չկայ: Ո՞վ կրնայ դիմադրել իմ
անեղ շունչիս: Ես կրնամ անազին շէնքերը
փլցնել, ծառերը արմատէն խլել, կրնամ
ովկիրանոսները ալեկոծել, տակն ու վրայ

ընել, խոշոր նաւերը փետուրի պէս խաղ-
ցընել և դեռ որ մէկն ըսեմ: Մէկ խօսքով
ես կրնամ ամբողջ աշխարհը աւերակ դար-
ձընել:

— Ռըն է այս հսկաներուն ամէնէն ուժեղը:

— Մարդիկ ի՞նչ օգտակար բաներու կը գործածեն
այս ահարկու հսկաները (կրակը, ջուրը, հովը):

86. — Վ Ի Ճ Ա Կ Ի Ե Ր Գ

Ես պճրչիկ աղջիկ մ'եմ,
Եօթն աղբիւրի ջրիկ եմ,
Եօթը ծառի ճղիկ եմ,
Եօթը ծաղկի թերթիկ եմ,
Ես աղջիկն եմ, վիճկուրկն եմ:

Թմայրո, թմայրո, թրմպ, թմայրո...:

Ելէ՛ք, ելէ՛ք, աղջիկներ,
Երդի՛ք երդի՛ք ձէն տուէ՛ք,
Արեւն երդի՛ք մաղուեր է,
Գարնան արեւ ցաթեր է,
Ասօր վիճակ, վիճակուրկ,
Գանձ արեւը շո՛ւտ ելէ՛ք:

Թմայրո, թմայրո, թրմպ, թմայրո...:

Ես վիճակն եմ աղջիկն եմ,
Շաս շաս բարեւ բերեւ եմ,
Կարմիր կուժը լիք բարի,
Օղեւ, ապրջան, մասնի:

Թմայրո, թմայրո, թրմպ թմայրո...:

— Ե՛րբ կուգայ վիճակի տօնը, ի՞նչ կ'ընէք վիճակին:

87. — Շ Ա Հ Ո Ի Ա Ծ Ո Ս Կ Ի Ն

Աշոտ տասնըշորս տարեկան էր երբ թո-
ղուց դպրոցը գործի մտնելու համար: Հայ-
լը ըսաւ:

— Դէհ, գնա, գործ գտիր, աշխատէ,
փարա՛ վաստկէ ու տասնըհինգ օրէն մէկ ու-
կի բեր ինծի. այն ատեն պիտի գիտնամ թէ
դուն գործի մարդ պիտի ըլլաս, հարուստ
մարդ պիտի դառնաս:

Աշոտ շուկայ ելաւ, ասդին դարձաւ, ան-
դին դարձաւ և սպասեց որ մէկը գործ մը
յանձնէ իրեն, բայց ոչ ոք երեսը նայեցաւ,
ոչ ոք գործ մը յանձնեց իրեն: Տասնըհինգ
օրը կը լրանար և տակաւին Աշոտ հինգ փա-
րա շահած չէր: Ի՞նչ ըներ, ի՞նչպէս ներկա-
յանար հօրը պարապ ձեռքով:

Վերջին օրը Աշոտ գնաց մօրը , աղաչեց , պաղատեցաւ և մէկ ոսկի առաւ անկէ . յետոյ այդ ոսկին տարաւ և հօրը յանձնեց յաղթական կերպով :

Հայրը պարտէզին մէջ աւազանին քով նստեր էր : Ոսկին առաւ թէ ոչ , նետեց աւազանին մէջ : Աշոտ անտարբեր նայեցաւ հօրը առանց որ և է շարժումի : Հայրը ըսաւ :

— Դէհ , գնա , տասնըհինգ օրէն մէկ ոսկի ևս վաստկէ , բեր ինծի և այն ատեն պիտի համոզուիմ թէ դուն գործի մարդ պիտի ըլլաս , ճարպիկ մարդ պիտի դառնաս :

Աշոտ նորէն շուկայ ելաւ . ասդին դարձաւ , անդին դարձաւ , և նորէն սպասեց որ մէկը գործ մը յանձնէ իրեն , բայց ոչ ոք երեսը նայեցաւ , ոչ ոք գործ մը յանձնեց իրեն : Տասնըհինգ օրը լրացաւ գարձեալ և հինգ փարա չէր կրցած վաստկելի :

Աշոտ շատ կ'ամչնար հօրը ներկայանալու պարապ ձեռքով : Ուստի գնաց հօրեղբօրը , աղաչեց , պաղատեցաւ և մէկ ոսկի առաւ անկէ , յետոյ այս ոսկին տարաւ , հօրը յանձնեց յաղթական կերպով . սպասելով որ այս անգամ պիտի արժանանայ անոր գովեստին :

Հայրը դարձեալ նստեր էր աւազանին

քով և ոսկին առաւ թէ չէ , նետեց ջուրին մէջ : Աշոտ զարմանքով նայեցաւ հօրը առանց որ և է շարժումի : Հայրը ըսաւ :

— Դէհ , գնա , տասնըհինգ օրէն մէկ ոսկի եւս վաստկէ , բեր ինծի , և այն ատեն պիտի հաւատամ թէ դուն գործի մարդ պիտի ըլլաս . մեծ մարդ պիտի դառնաս :

Աշոտ գլխիկոր նորէն շուկայ ելաւ , բայց այս անգամ չսպասեց որ մէկը իրեն դիմէ : Ինք ասդին դիմեց , անդին դիմեց ու վերջապէս գործ մը գտաւ , և շարաչար աշխատելով շահեցաւ մէկ ոսկին :

Աշոտ կը գուրգուրար այդ ոսկիին վրայ որ իր աշխատութեան արդիւնքն էր , որ իր հալալ վաստակն էր : Աշոտ այդ ոսկին ևս տարաւ , յանձնեց հօրը որ նոյնպէս նստեր էր աւազանին քով :

Հայրը առաւ ոսկին , և երբ գայն եւս ջուրը նետելու համար ձեռքը կը վերցնէր , Աշոտ նետուեցաւ առաջ , բռնեց հօրը թեւէն և շթողուց որ նետէ :

— Ի՞նչ կ'ընես , հայր , ես այդ ոսկին շահելու համար ի՞նչքան աշխատանք , զրբտինք թափեր եմ , դուն մէկ շարժումով ջուրը կը նետես գայն :

Այն ատեն հայրը ուրախութեամբ ողջագուրեց Աշոտը և ըսաւ :

— Ապրիս , գաւակս , հիմա հաւատացի
 թէ այս ոսկին դուն քու աշխատութեամբդ
 վաստակեր ես . հիմա հաւատացի թէ դուն
 գործի մարդ ու մեծ մարդ պիտի դառնաս .
 ես գիտէի թէ առջի ոսկիները քու հալալ
 վաստակդ չէին , որովհետեւ բնաւ չէիր շար-
 ժեր երբ ես գանոնք ջուրը կը նետէի :

ԱՌԱՄ. — Գլորող քաղաք հիս չի բռներ :

ՇՈՒՏԱՍԵԼՈՒԿ. — Թագիկին տունը սանձին ծառք ,
 Տանձ կայ ծառք , ծառին ծայր :

88. — Օ Ր Օ Ր Ե Ր Գ

Օրօ՛ր , օրօ՛ր , աննրման ,
 Աննրման ու չկայ նրման .
 Ո՛չ մարդն է բերել նրման ,
 Ո՛չ արեւն , ո՛չ Լուսընկան :

Աղուոր ես աքերդ իվեր
 Երթամ , բերեմ խաղընկեր ,
 Երթամ լուսնկան բերեմ ,
 Լուսուն աստղը խաղընկեր :

Կարմիր վարդ ու լայն տերեւ ,
 Բացուեր ես մեր տան վերեւ .
 Քանի՛ կայ պաղչան տերեւ
 Ա՛յնքան կ'ուզեմ բեզի արեւ :

Ծոցիկըս պարտէզ ընեմ ,
 Քեզ մէջը մործիկ տնկեմ ,
 Աչքերս աղբիւր ընեմ
 Ունքերովս քեզ ջրեմ :



Օրօ՛ր , կապեմ կախօրրան
 Ծառէ ծառ , շուքերն ի վրան ,
 Ծառ ու շուքեր վրա՛յ եկէք ,
 Շուք արէք աղուորիս վրան :

Պիւլպիւլը պաղչան իջեր ,
 Վարդենուն թուփին թառեր ,
 Անուշիկ վարդին հոտէն
 Աղուորիս քունն է տարեր :

Օրօ՛ր, օրօ՛ր, քըններ ես ,
 Ծածկեր եմ, քրտըներ ես ,
 Շալ լաթիկըդ դէն դնեմ,
 Վարդի նման բացուեր ես :

Ապրիս դուն հօրով, մօրով,
 Հաց ուտես շուխտ աղբարով
 Դուն ապրիս հօրով, մօրով,
 Լգուի սրտիկդ արեւով :

Սրտիկդ արեւով լեցուի
 Մեր դռուին կարմիր խնձորով,
 Ո՛վ անցնի, վարդէդ առնէ
 Ո՛վ դառնայ՝ կարմիր խնձորէդ :

Օրօ՛ր, օրօ՛ր, եզներն են եկեր
 Եզներն են եկեր, լեռնէն են իջեր,
 Քեզի անուշ քնիկ են բերեր,
 Բերեր քու ծով ծով աչքերդ են լցեր.
 Անուշ քունով են քնացուցեր
 Քաղցրը կաթով են կշտացուցեր :

ՀԱՆՆԵԼՈՒԿ 22. — Ագի ունի, հոգի չունի :



89. — ՓՈՔՐԻԿ ՏՂԵԿՆ ՈՒ ՀՍԿԱՆ

Փոքրիկ գուարթ արարած մըն էր ան :
 Ամբողջ օրը կը պտըտէր երգելով և սուլե-
 լով : Միշտ ուրախ էր և գրեթէ չկար բան
 մը որ զինք կարենար տխրեցնել :

Օր մը այդ փոքրիկ տղեկը փափաքեցաւ
 պտոյտ մը ընել իրենց տունէն բաւական
 հեռու անտառի մը մէջ : Ուստի ուրախ
 գուարթ ճամբայ ելաւ, երգելով և սուլելով :
 Վերջապէս հասաւ վճիտ առուակի մը քով
 որ անտառին մէջէն կ'անցնէր, և շատ ծա-
 րաւած ըլլալով՝ ծռեցաւ որ ջուր խմէ : Բայց
 այդ պահուն ոտքը յանկարծ բանի մը կառ
 չեցաւ և այնտեղ փակաւ, մնաց : Քիչ վերջ
 մէկը եկաւ, զինք ուժգին բռնեց, վերցուց,
 և անս փոքրիկ տղեկը ինքզինք գտաւ խո-
 շոր, երկայնահասակ իր մէ հարիւրապատիկ
 մեծ հսկալի մը թաթերուն մէջ : Հսկան հա-
 ճոյքով իրեն նայեցաւ և զինք խոշոր տոպ-
 ռակի մը մէջ դնելով՝ առաւ տարաւ :

Խեղճ տղեկը բոլոր կրցածն ըրաւ տոպ-
 ռակէն փախչելու համար, բայց անօգուտ :
 Կը ճչէր, կը թապալտրկէր, տոպրակը ծակել
 կը փորձէր, բայց հսկան կը ծիծաղէր իր
 ճիգերուն վրայ և ճամբան կը շարունակէր :

Վերջապէս հսկան իր տունը հասաւ, — մութ տեղ մը, չորս կողմը բարձր պատերով, առանց ծառի և ծաղիկի: Երբոր ներս մտաւ, դուռը գոցեց և փոքրիկը դուրս հանեց տոպրակէն:

Խեղճ տղեկը հիմա կը խորհէր թէ մեռնելու ժամը մօտեցած է, որովհետեւ երբոր նայեցաւ, բոցավառ կրակ մը տեսաւ, և անոր առջև իրեն պէս ուրիշ երկու զոհեր կային որոնք հսկային ճաշին համար կը խորովուէին:

Հսկան, սակայն, չսպաննեց փոքրիկ տղեկը, բայց զայն բանտի մը մէջ փակեց: Բանտին չորս կողմը ձողերով փակուած էր և անոր մէջ միակ կերակուրը քիչ մը կերէ և գաւաթ մը ջուրէ կը բաղկանար: Փոքրիկը զուլիսը ձողերուն կը զարնէր, ետ և առաջ կը խոյանար, բայց ազատելու ճարը չկար:

Յաջորդ օրը հսկան եկաւ, աչքերը տրնկած՝ փոքրիկին նայեցաւ և տեսնելով որ կերէն բնաւ կերած չէր, զուլիսէն բռնեց և անկէ կտոր մը կոկորդէն վար թխմեց: Տղեկը անբան վախցած էր որ ուտելու և խմելու վրայ չէր իսկ կրնար խորհիլ: ✕

Մութին մէջ առանձին մնաց ուրիշ օր

մըն ալ և շատ տխուր օր մըն էր այդ իրեն համար: Խեղճ արարածը միտքը կը բերէր իր տունը, իր խնկերները, արեւին պայծառ լոյսը, ծառերը, ծաղիկները, և իր կերած այն շատ մը ազուր բաները, յետոյ կը ճչէր և կը ջանար ձողերուն մէջէն դուրս ելլել, ու կը վիրաւորուէր:

Հսկան դարձեալ եկաւ և ուզեց որ տղեկը երգէ, ինչպէս անտառին մէջ կ'երգէր. «Երգէ, երգէ», կ'ըսէր: Մայր ան շատ տխուր էր և բերանը չէր բացուէր: Հոգ երգելու տեղ չէր իրեն համար:

Վերջապէս հսկան բարկացաւ, և փոքրիկը դուրս հանեց որպէս զի անոր երգել տայ: Տղեկը ուժով մը ճչեց, շարժեցաւ, մաքառեցաւ ու յետոյ ինկաւ մեռաւ հսկային ձեռքին մէջ:

Ասիկա ճշմարիտ պատմութիւն մըն է, տղաք:

— Սյդ խեղճ տղեկը փոքրիկ թռչուն մըն էր և հսկան՝ անգութ տղայ մը:



90. — ԱՏԱՂՁԱԳՈՐԾՆԵՐ

Օճ, ընկե՛րներ, եղե՛նք ոսփի,
Առնե՛նք սղոց, կտրե՛նք սախսակ
Բաժնե՛նք շուսով զայն երկուփի,
Երևե՛նք անով փոփր աթոռակ.

Սի սոյ, սի սոյ, սի սոյ, սի սոյ . . . :

Պե՛տ է ֆերել, յղկել մեր փայտ,
Առնե՛նք քերիչ, յղկե՛նք զանի.
Զբուշանա՛նք, չկտրե՛նք մաս,
Ըլլա՛նք յարմար գործի, բանի.

Քըշ գրդ, ֆըշ գրդ, ֆըշ գրդ, ֆըշ գրդ . . . :

Հիմա զամե՛նք փայտերն իրար,
Մեր ուրագով թիֆ թաֆ, թաֆ թիֆ,
Կամե՛նք ամուր, զամե՛նք նաւսար,
Լաւ շինելու թափե՛նք մեր ձիգ.

Թիֆ թաֆ, թիֆ թաֆ, թիֆ թաֆ . . . :

— Որո՞նք են ատաղձագործին գործիքները :

— Ատաղձագործը ինչե՛ր կը շինէ :



91. — ԾԻԾԵՌՆԱԿԻՆ ԾՆՈՒՆԴԸ

Հրէաստանի Նազարէթ քաղաքին արևոտ
դաշտերուն մէջ Մանուկ Յիսուս շաբաթ օր
մը իր ընկերներուն հետ կը խաղար, առ-
ուակի մը եզերքը :

Ձեռքերը որ համակ բարութիւն էին և
սէր, առուակին շուրջը և եզերքի հողովը
կ'աշխատէին թրել ու շինել պտուղի թուղուն-
ներ որոնք յետոյ թեւատարած կը շարուէին
գետինը :

Այդ պահուն փարիսեցի մը անցաւ այն
տեղէն :

— Մեղաւոր տղայ, գոչեց, չե՞ս գիտեր
որ այսօր շաբաթ է, սուրբ օրով ի՞նչ կ'ը-
նես հող :

Ու մարդը իր ոտքերովը ուզեց կոխկըր-
տել, աւրել ցետէ թուղունները : Բայց Յի-
սուս թաթիկներովը իսկոյն ծափ զարկաւ
և կաւէ շինուած այդ թուղիկները յանկարծ
կենդանութիւն առին ու վեր թռան :

Ծիծեռնակները ծնած էին : Անոնք
թռան, բարձրացան մինչև այն տանիքը
որուն տակ կը բնակէր Յիսուս, այնտեղ
կառուցին իրենց բոյնը, և ամենուրեք հե-
տեւեցան Յիսուսի :

Ատեն անցնելէ վերջ՝ երբ Յիսուսը խաչելու համար Գողգոթա կը տանէին, հէք թռչունները թախծագին հետեւեցան անոր, թեւերնին ծոյլ ծոյլ ծփացնելով օդին մէջ և ատեն ատեն ցաւի ճիչեր արձակելով :

Յիսուս մեռնելու կ'երթար. արցունքին հետ՝ արիւնի կարմիր կայլակներ կը հոսէին փշապսակ ճակատէն ի վար :

Այն ատեն ծիծեռնակները իրարու ետևէ իրենց կտուցովը փետեցին պսակէն այն փուշերը որ Յիսուսի ճակատը կը ծակծրկէին :

Ժամերը անցան. Յետին հառաչանքէ մը վերջ՝ Յիսուս աւանդեց իր հոգին խաչին վրայ :

Երկիրը սասանեցաւ. ծիծեռնակները սրբորփացին ու իրենց թեւերը առին սուզի այն սև վերարկուն զոր անկէ ի վեր երբեք չկրցան վար ձգել իրենց վրայէն :

— Ծիծեռնակները ինչ գոյն ունին :
ՀԱՆՆԵԼՈՒԿ 23 . — Ծոցը ջուր ծովակ,
Գլուխը լեցուն կրակ :



92. ԱՅԾԸ

Հաստ ծառի մը բունին տակ
Նըւարդ և Արտակ,
Քոյր և եղբայր քովէ քով,
Խորունկ զարմանքով,
Մօրուեղ այժ մը կը դիտեն
Որ իրենց մօտէն
Կանանչ խոտերուն վրայ,
Արագ կը սուրայ :

Այժը ծուռիկ, անճուռի
Եղջիւրներ ունի,
Եւ կարճ պոչիկ մ'ալ որ վեր
Շիտակ է ցըցուեր,
Եւ չորս ալ ոտքեր ճկուն
Որոնց վրայ կանգուն
Կը կրէ ճերմակ ու սեւ
Մարմինն իր թեթեւ :

Տուն կը դառնան երբ զըւարթ
 Արտակ և Նըւարթ ,
 Կը փարին տաքուկ գիրկին
 Իրենց մայրիկին ,
 Եւ երկուքը մէկ բերան
 — Անո՛ւշ տեսարան —
 «Մայրիկ , կ'ըսեն , մենք այսօր
 Ձե՛նք ուզեր սալոր . . .

«Ոչ խաղալիք , ո՛չ շաքար
 Մեր գործին չեն դար ,
 Այսօր տեսանք մենք ճամբան
 Շատ աղուօր մէկ բան ,
 Եղջիւրներով , մօրուքով
 Չորս բարակ ոտքով
 Սատանայ մը որուն վեր
 Պոչիկն է ցըցուեր :

«Վրբայ կանանչ խոտերուն
 Սատանան սիրուն
 Հովուն տըւած իր մազեր ,
 Մայրիկ , կը վազէր . . .
 Իուն բռնել տուր անիկա ,
 Որ մեր տունը գայ ,
 Ու քոյր , եղբայր , զինքը մենք
 Սիրենք , խընամենք» :

ԱՌԱՅ.— Ուզան բերանը կրան կով մը կ'արժե:

93. — ԳԱՄԻՆ ՊԱՏՄ ՈՒԹԻՒՆԸ

Պզտիկ տղաք , կ'ուղէ՞ք որ ձեզի պատմեմ զլիսէս անցածները . ահաւասիկ , մտիկ ըրէք :

Ես առաջ երկաթի ա՛ագին կոշտ կտորի մէջ էի , հողին տակ : Հազարաւոր տարիներ հողին տակ մնացի և մտքէս չէր անցներ երբեք որ դուրս ելլեմ :

Օր մը բովազործ մը փորեց գետինը , գտաւ զիս հողին տակէն ու դուրս հանեց :

Յետոյ տարաւ գետը , քիչ մը լուաց և արեւը դրաւ որ չորնամ :

Ապա զրկեց ձուլարան մը ուր հրավառ փուռի մը մէջ նետեցին զիս :

Փուռը անքան տաք էր , այնքան տաք որ չզիմացայ . հալեցայ ու ջուր դարձայ :

Փուռին վրայէն ներս մտեր էի հաստատուն վիճակի մէջ . տակէն դուրս ելայ հեղուկ վիճակով :

Երբ պաղելով նորէն կարծրացայ , դարբնոց մը տարին զիս , ուր զըին հնոցը ու այրեցին , ծեծեցին , շարիկ շարիկ շարշարեցին զիս :

Կ'ըսէին թէ բոլոր այս բաները կ'ընէին

զիս մաքրելու համար : Վերջապէս մաքուր երկաթ եղայ, այնպէս որ երբ զիս տաքցընէին, կընայի կակղանայ և ուզուած ձեւը առնել :

Դարբինը զիս կաս-կարմիր ըրաւ և ինծի պէս ուրիշ քանի մը երկաթներու հետ սալին վրայ դնելով՝ ծեծեց մուրճով և վերածեց ձողի :

Յետոյ ուրիշ գործաւոր մը այն ձողին ծայրը սրելով, պզտիկ ծակի մը մէջ խոթեց, ուրկէ ուժով մեքենայ մը զիս քաշելով՝ երկնցուց :

Այսպէս՝ հետզհետէ իրարմէ աւելի նեղ տասներկու ծակերէ անցայ, հետզհետէ երկննալով ու բարակնալով : Երբ վերջին ծակէն անցայ, երկաթեայ թել եղած էի :

Բայց քաշելիքս դեռ չէր լմնցած . գամագործը իր ահագին մկրատով կտրեց զիս, զլխուս հարուած մը տուաւ և ծայրս սրեց . այն ատեն գամ եղայ :

Գլխէս շատ բան անցաւ, բայց գոհ եմ բախտէս, քանզի այսօր մարդոց համար բանի մը օգտակար եմ :


— Ուրկէ կը հանեն երկաթը :

— Ո՛վ երկաթը գամի կը վերածէ :

94. — ԴԱՐԲՆՈՅԻՆ Մէջ

94

9 205 9



Վարպէս ու աշկերտ կայնած դեմ դեմի՝
Կրակն եւ դրեւ ձողերն երկաթի.

Աշկերտ մ'աչ «փն՛ւմ, փն՛ւմ» կը փչէ փքոց,
Եւ վառարանէն կ'ելլեն ծուխ ու բոց :

Ծակն մուրճերով՝ կարմիր երկաթն
Պես պես գործիներ շոտով կը կոփեն.
Հո՛ն, սալին վրայ «բախր թիխր թախ»,
Կացին, բահ, բրրիչ, նաեւ գամ, ուրագ :

Հո՛ն, տե՛ս աշկերտ մը բռնած է ձեռքին
Յետանին վրայ դեռ գուռ մի կացին,
Շոտ կը դարձնեն անիւր «խըռ խուռ»,
Սըրելու համար գործիքն ամրակշռ :

Հոս աչ ուրիշ մը՝ հաստերկաթին ֆոյ,
Գրքին կը թափէ ժրջալոյ հեւֆոյ,
Կը զարնէ մուրճը ակփեղ «սակկասակ» .
Աստուած վարձատրէ իր ճիգերն ու ջանք :

— Որո՞նք են երկաթագործին գործիքները :
— Ի՞նչ գործիքներ կը շինէ երկաթագործը :
ԱՌԱԾ. — Երկաթը սաֆ սաֆ կը ծեծեն :

95. — ԹՈՉՈՒՆՆԵՐՈՒ ԹԱԳԱՒՈՐԸ


Երկինքի զանազան թռչունները երկար տարիներ իրարու հետ հաշտ կ'ապրէին, բայց անգամ մը պատահեցաւ որ զժտին և իրարու դէմ զանգատի ու բողոքի ձայներ արձակեն :

Գործերը այն վիճակին հասան որ ալ ամէն օր, ամէն ժամ վէճն ու կռիւը պակաս չէր իրենց մէջ :

Վերջապէս՝ կարգ-կանոնը վերստին հաստատելու համար թռչուններու հասարակութիւնը որոշեց թագաւոր մը ընտրել :

Ընտրութեան ժողովը տեղի ունեցաւ մեծ անտառի մը մէջ : Հոն էին կկուն, կաքաւը, արտոյտը, բուն, տատրակը, շիկա-

հաւը, հաւփայը, լորամարգին, անծեղը, ազոաւը, տարմահաւը, կտցարը, խայտիտը, բաղը, աղաւնին, սարեակը, ճնճղուկը,



տորգիկը, եկեանիկը և ուրիշ բազմաթիւ և բազմատեսակ թռչուններ :

Երկար վէճերէ յետոյ՝ սարեակը ժողովին նախագահ ընտրուեցաւ : Ան ելաւ

կաղնիի մը կատարը և սուլող ձայնով մը ըսաւ .

— Լնու կեցէք , և ամէն ոք թող ցոյց տայ իր ընտրելին :

— Ես , կառաչեց անձեզր , գեղեցիկ եմ և բաւական ալ խոշոր . կրնամ խօսիլ և ժողով կառավարել :

— Ես , գեղգեղեց անդիէն սոխակը , ոչ խոշոր եմ , ոչ գեղեցիկ , բայց տաղանդ ունիմ . ամէնմէն լաւ երգողն եմ բոլոր արարածներուն մէջ :

— Ես , ճուռոգեց ճնճողուկը , թէև լաւ չեմ երգեր , բայց յանդուգն ու ազմկարար եմ :

— Ե՛ս , հեծեց բուն , գիշերները մութին կը տեսնեմ , մինչդեռ միւս թռչունները չեն կրնար տեսնել :

— Ես , գոչեց ցինը , սուր կտուց և լաւ ճիրաններ ունիմ . կրնամ ինքզինքս յարգելի դարձնել :

— Ես , կանչեց տատրակը , քաղցրաբարոյ և հանդարտ եմ . եթէ ես ըլլամ թագաւորը , միշտ խաղաղութեան մէջ պիտի ապրիք և երջանիկ պիտի ըլլաք :

Բայց ասոնցմէ ոչ մէկուն համար ժողովը հաւանութիւն յայտնեց . հակառակը՝

ամէն ընտրելի կ'ընդունուէր ազմուկով , ծաղրանքով կամ բողբոջի ձայներով : Ժխորն ու իրարանցումը հետզհետէ կ'աւելնար :

Վերջապէս՝ նախագահը յաջողեցաւ ազմուկը հանդարտեցնել և գոչեց .

— Պարոններ , ընտրելիներէն ոչ մէկը ձայներու մեծամասնութեան չարժանացաւ : Դեռ խօսք ուզող կա՞մ , այս մասին :



Այդ պահուն յանկարծ ամէն կտուցներ և աչքեր դէպի երկինք դարձրացան : Սև կէտ մը կը նշմարուէր հեռուն , երկինքի կապոյտին վրայ : Այս կէտը հետզհետէ կը մեծնար : Քիչ յետոյ երեւցաւ հսկայ թռչուն մը , շողափայլ աչքերով , մացառուտ լիւ-

տուրներով, կոր կտուցով և ուժեղ ճիրաններով: Արծիւն էր այն:

— Ես, ըսաւ արծիւը, օդերու արքան եմ, ոչինչ ինծի կրնայ դիմադրել: Եթէ մէկը աւելի կարող է ձեզ կառավարել, թող խօսի:

Խորունկ լուսթիւն մը տիրեց ժողովին մէջ: Ամէնքը պապանձեցան, մնացին:

— Հակառակ խօսող չկայ, սուրեց նախագահը անուղղով, ուրեմն Նորին Վեհափառութիւն Արծիւը թագաւոր կը հռչակուի:

— Վերջապէս թագաւոր մը ունեցանք, ըսին միաբերան սազն ու հնդկահաւը:

— Եւ սքանչելի թագաւոր մը, գոչեց բազը իր բոլոր ուժով:

— Այո, այո, մրմնջեց ծերուկ կապիկ մը որ ծառի մը վրայէն ամէն ինչ տեսած էր, դուք ունեցաք թագաւոր մը որ պիտի ուտէ ձեզ՝ փախանակ պաշտպանելու:

Ամիս մը վերջ՝ կատարեալ անդորրութիւն կը տիրէր թռչուններու հասարակութեան մէջ: Ամէն վէճ ու կռիւ վերջացած էր, զի թագաւորը իր հպատակներուն կէսէն աւելին կերեր էր:

— Ի՞նչ թռչուններ գիտէք:

— Որո՞նք են գիշատիչ թռչունները, որն է անոնց ամէնէն հօրը:



96. — ՊԱՆԴՈՒԽՏԻՆ ԵՐԳԸ

Պանդուխտ է հոգիս, ես կարօտն ունիմ
Մեր հայրենիքի հպարտ լեռներուն,
Մեր հայրենիքի ծաղկած սարերուն.
Պանդուխտ է հոգիս, ես կարօտ ունիմ:

Պանդուխտ է հոգիս, ես կարօտն ունիմ
Մեր հայրենիքի արծաթ ջուրերուն,
Մեր հայրենիքի ժպտող աստղերուն.
Պանդուխտ է հոգիս, ես կարօտ ունիմ:

Պանդուխտ է հոգիս, ես կարօտն ունիմ
Մեր հայրենիքի ցած խրճիթներուն,
Մեր հայրենիքի ծիծեռնակներուն.
Պանդուխտ է հոգիս, ես կարօտ ունիմ:

Պանդուխտ է հոգիս, ես կարօտն ունիմ
Մեր հայրենիքի արշալոյսներուն,
Մեր հայրենիքի նոր զինուորներուն.
Պանդուխտ է հոգիս, ես կարօտ ունիմ:

ՀԱՆՅԼՈՒԿ 24. — Ո՞վ է այն որ կը քաղուի ապրելու

համար:

111
111
222

97. — ԱԳԱՀ ԿՕՇԿԱԿԱՐԸ

Իշխան մը ունէր մանչ զաւակ մը՝ գորշատ կը սիրէր և անոր համար ուզեց հոյակապ պալատ մը շինել տալ: Յատակագիծը շուտով պատրաստուեցաւ և վերակացու մը սկսաւ շտապով գնել հարկ եղած հողերը:

Պալատին շինութեան համար որոշուած տեղը կօշկակարի պատիկ խանութ մըն ալ կար որ հազար դրոշ կ'արժէր: Բայց կօշկակարը հասկցաւ որ անոր պէտք ունին և երբ վերակացուն եկաւ հարցուց թէ ինչ կուզէ խանութին, կօշկակարը պատասխանեց:

— Հազար ոսկի:

— Հազար ոսկի, խէնդ էք, ի՞նչ էք, այս ողորմելի խրճիթը յիսուն ոսկի ալ չ'ըներ:

— Կարելի է, պարոն, բայց ես ծախելու միտք չունիմ:

Վերակացուն շինութեան տնօրէնին գնաց: Ամէնքն ալ զայրացան կօշկակարին դէմ. ո՛չ, այս աստիճան չէին կրնար խաբուել: Բայց իշխանը անհամբեր կը սպասէր որ պալատին շինութեան սկսուի: Երկու օր յետոյ վերակացուն նորէն կօշկակարին գնաց և հաւանեցաւ այնչափազանց զինը վճարելու:

Կօշկակարը տեսնելով որ կը կակղանալին, մտածեց ա՛լ աւելի պահանջել:

— Շիտակը, Տէր իմ, երկու օր է որ մըտածեցի և կը տեսնեմ որ երկու հազար ոսկիէն պակաս չեմ կրնար տալ:

Այս անգամ բանակցութիւնը խզուեցաւ և որոշեցին կօշկակարին խանութը չը գնել: Երկու ամիս անցաւ. կօշկակարը կը նայէր որ եկող գնացող չկայ. բայց ինքնիրեն կ'ըսէր. «Ապահով եմ որ պիտի գան»:

Ճարտարապետները յատակագիծը փոխեցին, ուզեցին նոր ձև մը գտնել, բայց ի գուր. կօշկակարին խանութը անհրաժեշտ հարկաւոր էր որպէս զի պալատը գեղեցիկ ըլլայ: Եւ վերակացուն օր մը նորէն կօշկակարին գնաց ու պատրաստ էր երկու հազար ոսկին վճարել: Բայց կօշկակարը նորէն միտքը փոխեց էր:

— Տէր իմ, ըսաւ, վերջին գին չորս հազար ոսկի կ'ըլլայ:

Վերակացուն բարկացաւ. աղաչեց, համոզեց և մինչև երաբ հազար ոսկի տալու հաւանեցաւ:

— Ո՛չ, Տէր իմ, ըսաւ կօշկակարը, չորս հազարէն վար չըլլար:

Վերակացուն ձգեց գնաց: — «Նորէն կուգան», կ'ըսէր կօշկակարը ինքիրեն:

Իշխանը իմացաւ եղելութիւնն ու շատ
բարկացաւ: Հրամայեց որ յատակագիծը փո-
խեն և այն անպիտանին խանութը չգնեն:
Այնպէս ալ ըրին:

Ժամանակը կ'անցնէր, կօշկակարը կը
տեսնէր որ վերակացուն չէր գար: Ինքիրեն
ըսաւ. «Վախնամ չափը անցուցինք, պէտք
է իջնեմ»: Ուստի գնաց վերակացուն գտաւ
և ըսաւ որ երեք հազար ոսկին կ'ընդունէր:
Ճամբեցին զինք: Կօշկակարը կակղացաւ ու
ժամերով սպասեց որպէս զի վերակացուն
դուրս ելլելը տեսնէ:

— Տէր իմ, ըսաւ, երկու հազարի չէ՞ք
գներ:

— Գնա՛ բանդ:

Եւ կօշկակարը տեսնելով որ իր փառասի-
րական երազները օդը կ'ելլեն, կը թախան-
ձէր, հազար հինգ հարիւր ոսկիի կ'իջնէր:
Վերջապէս մինչև հազար ոսկիի իջաւ բայց
մերժուեցաւ:

Շատ ժամանակ անցաւ: Օր մը կօշկա-
կարը չքաւորութեան մէջ մնալով՝ վաթսուն
ոսկիի ծախեց այն խանութը որով յուսացե-
ր հարստանալ: Քանի մը ամիս ետքն ալ
սրտին ցաւէն խենդեցաւ և յիմարանոց տար-
ուեցաւ ուր մնաց մինչև մահը, շարունակ
երեւակայական հարստութեանց հաշիւներ
ընելով իր խանգարուած ուղեղին մէջ:

ՍՌՆԾ. — Նախ խորհե՛, ապա՛ գործե՛:

98. — ԱԳԱՐԱԿԱՊԱՆՈՒՀԻՆ

— Ո՛հ, ճի, ըսաւ, խեղճ, գեղջուկ կիկն,
Ի՛նչպէս հասնիմ ա՛յսֆան գործիկն.

Ազարակիկն մէջ աւ ո՛րֆան
Տեսակ տեսակ շատ գործեր կան:

— Ո՛հ, ո՛հ, ըսաւ խեղճ, գեղջուկ կիկն,
Ի՛նչպէս հասնիմ ա՛յսֆան գործիկն.
Նախ կանուխիկեկ կ'երթաւ առտուն
Կուտ ու գարի տալ հարեռուն:

— Ո՛հ, ո՛հ, ըսաւ խեղճ գեղջուկ կիկն,
Ի՛նչպէս հասնիմ ա՛յսֆան գործիկն,
Ե՛տք պէտք է որ հաց շաղուեմ,
Վառեմ թոնիրն ու մէջն եփեմ:

— Ո՛հ, ո՛հ, ըսաւ խեղճ, գեղջուկ կիկն,
Ի՛նչպէս հասնիմ ա՛յսֆան գործիկն.
Պէտք է հաւեր հորթուս համար
Ժողվեմ խոտեր թարմ ու դաշար:

— Ո՛հ, ո՛հ, ըսաւ խեղճ, գեղջուկ կիկն,
Ի՛նչպէս հասնիմ ա՛յսֆան գործիկն.
Օ՛ն, Ասիսաճաշը պատրաստեմ
Մարդիկս հիմա կուգան, վազե՛մ:

— Ո՛հ, ո՛հ, ըսաւ խեղճ, գեղջուկ կիճն,
Ի՛նչպէս հասնիմ ա՛յսքան գործփն.

Օճ, մեծարեմ, ահա՛ եկան —

Սա քարմ հացիկն ու սափուկ քան:

— Ո՛հ, ո՛հ, ըսաւ խեղճ, գեղջուկ կիճն,
Ի՛նչպէս հասնիմ ա՛յսքան գործփն.

Հաւերս ահա՛ ձու ածեր եմ,

Երբամ, առնեմ մեր հաւնոցէն:

— Ո՛հ, ո՛հ, ըսաւ խեղճ, գեղջուկ կիճն,
Ի՛նչպէս հասնիմ ա՛յսքան գործփն.

Լըսացարանն հիմա երբամ

Աղսոս յաթերս մափրեմ, յըսմ:

— Ո՛հ, ո՛հ, ըսաւ խեղճ, գեղջուկ կիճն,
Ի՛նչպէս հասնիմ ա՛յսքան գործփն.

Ահա՛ յաթերս ձիւն, ըսպիսակ,

Երբամ, փոքեմ արեւուն սակ:

— Ո՛հ, ո՛հ, ըսաւ խեղճ, գեղջուկ կիճն,
Ի՛նչպէս հասնիմ ա՛յսքան գործփն.

Վա՛յ, դեռ գործերս չեմ յըմնցեր,

Սէ՛ս հասաւ մթին գիշեր:

ՀԱՆՅԵԼՈՒԿ 25. — Ասդիճ ֆուլիմ, անդիճ ֆուլիմ,
էկն ընեմ նստիմ:

99. — ՀԱՅԵԼԻՆ, ԿԱՊԵՐՏՆ ՈՒ ՍՐՈՒԱԿԸ

Ժամանակին իշխան մը կար որ ունէր
աղջիկ մը շատ գեղեցիկ, լուսնկայի պէս
գեղեցիկ: Այս աղջկան անունն էր Գոհարիկ
և անոր գեղեցկութեան համբաւը տարած-
ուած էր ամէն կողմ:

Գոհարիկ երբոր հարսնցու եղաւ, գրացի
երկիրներէն երեք երիտասարդ և կտրիճ իշ-
խանագուններ եկան և հարսնութեան ուզե-
ցին Գոհարիկը իր հօրմէն:

Իշխանագունները երեքն ալ աննման
կտրիճներ էին, ծառահասակ ու գեղանի:
Դժուար էր ընտրութիւն մը ընել անոնց
միջև: Իշխանը մտածեց, երկար մտածեց
ու վերջապէս ըսաւ.

— Ով պատուական իշխանագուններ,
դուք երեքդ ալ քաջ և ազնուական երիտա-
սարգներ էք, ես չեմ կրնար ձեզմէ մին կամ
միւսն ընտրել. ձեզի մէկ տարի ժամանակ
կուտամ. գնացէք, և մէկ տարիէն ձեզմէ
որը որ աշխարհի ամէնէն հագուազիւս և
հրաշայի առարկան կարող ըլլայ նուէր բե-
րել աղջկանս, թող անորն ըլլայ Գոհարիկը:

Իշխանագունները հաւանեցան և մեկ-
նեցան հեռաւոր երկիրներ, փնտռել, գտնե-

լու համար ուզուած հրաշալի առարկան :
Թափառեցան քաղաքէ քաղաք, երկիրէ երկիր
և վերջապէս ձեռք անցուցին մէյմէկ հրաշալի
առարկայ :

Հրացաւ մէկ տարին և իշխանագուն-
ները վերադարձին իրարու հանդիպեցան
ճամբուն վրայ : Անոնցմէ երկուքը շատ ու-
րախ էին, բայց մէկը շատ տրտում կ'երե-
ւէր : Անոնք հարցուցին անոր իր տխրու-
թեան պատճառը :

— Ո՛հ, մի հարցնէք, ըսաւ ան, այն գե-
ղեցիկ իշխանուհին որուն համար երեքս
տարի մըն է կը թափառինք աշխարհէ աշ-
խարհ, հիմա մահամերձ հիւանդ է և մենք
մինչև որ հասնինք, ան արդէն մեռած պի-
տի ըլլայ :

— Ինչէ՞ն գիտես որ այդպէս է, հարցու-
ցին երկու իշխանագունները այսպիսով :

Տրտում իշխանագունը պատասխանեց :

— Այն առարկան գոր ես ձեռք անցու-
ցի իշխանուհին նուէր տանելու համար,
հրաշալի մոգական հայելի մըն է, այդ հայե-
լին ցոյց կուտայ ինչ որ կ'անցնի կը դառ-
նայ աշխարհի ամէն կողմը : Քիչ առաջ նա-
յեցայ հայելիիս մէջ և տեսայ իշխանուհին
այդպէս մահամերձ վիճակի մէջ :

— Ո՛հ, եթէ կարելի ըլլար անմիջապէս

քովը հասնիլ, ըսաւ միւս երկու իշխանա-
գուններէն մին, ես կրնայի գինք բուժել . ես
ձեռք անցուցած եմ հրաշալի ամենաբոյժ
սրուակ մը, ամէնէն ծանր և մահամերձ հի-
ւանդն իսկ եթէ կաթիլ մը առնէ սրուակին
դեղաշուրէն, վայրկենապէս կեանք ու կեն-
դանութիւն կ'ստանայ :

Դեռ երեք օրուան ճամբայ հեռու էին
իշխանին պալատէն . ի՞նչպէս կրնային անմի-
ջապէս հասնիլ հոն : Յանկարծ միւս իշխա-
նագունն ալ ըսաւ .

— Կեցէք, բարեկամներ, իմ ձեռք բե-
րած առարկաս ալ հրաշալի թռչող կապերտ
մըն է որ իր վրայ նստողները վայրկենապէս
կրնայ փոխադրել ուր որ ուզէ : Եկէք, նըս-
տինք կապերտիս վրայ և անմիջապէս հաս-
նինք իշխանուհին քով :

— Աճապարենք ուրեմն, ըսին ամենքը
միաբերան :

Հրաշալի կապերտին տէրը հանեց գայն,
փռեց գետինը, և երբոր երեքը միասին բազ-
մեցան անոր վրայ, բարձրաձայն գոչեց .

— Օն, թռի՛ր, կապերտս, թռի՛ր, և մեզ
տար Գեղանի Գոհարիկին պալատը :

Կապերտը փայլակի արագութեամբ թը-
ռաւ, սուրաց օդին մէջէն, և անմիջապէս

100. ԳԱՐՈՒՆՆ ՈՒ ԱՄԱՌԸ

Ես հարս մ'ու փեսայ
 Դաշտին մէջ տեսայ . . .
 Ամառն ու Գարուն
 Զուարթ պատարուն,
 Մըտած թեւ թեւի,
 Քայլով նազելի,
 Շարժով բարեձեւ,
 Կուտային բարեւ,
 Ծաղկին ու բոյսին.
 Այս զոյգ ամուսին՝
 Մէկը ունէր բոյր,
 Միւսն ալ հրրապոյր.
 Ես հարս մ'ու փեսայ
 Դաշտին մէջ տեսայ:

Ես հարս մ'ու փեսայ
 Արտին մէջ տեսայ . . .
 Մայիսն էր նոր հարս,
 Յարգարած իր վարս,
 Ծաղկով, նարօտով . . .
 Յունիսն հոգեթով
 Գլխուն չուրջ պըսակ
 Կապած ճոխ բուսակ,
 Ափով լիառատ

Աշխարհ-արարատ
 Կը սըփռէր ցորեն . . .
 Սարէն թէ ձորէն .
 Ես հարս մ'ու փեսայ
 Արտին մէջ տեսայ:

101. — ՃՆՃՂՈՒԿՆ ՈՒ ՈՐԲԵՐԸ

Մանուկ հինգ տարեկան էր և Մանուշ
 վեց, երբոր իրենց մայրը մեռաւ: Խորդ մայր
 մը եկաւ տուն որ իրեն հետ բերած էր չորս
 տարեկան տղեկ մը:

Խորդ մայրը չար էր. Մանուկն ու Մա-
 նուշը կուգէր զրկել և ամէն բարիք կը կա-
 մենար իր տղային: Բայց հայրերնին շատ
 կը սիրէր Մանուկն ու Մանուշը և չէր թո-
 ղուր որ անոնք զրկուին:

Չար կինը մտածեց որ նախ հայրերնին
 հեռացնէ տունէն, ապա որբերը կորսնցնէ:
 Սերմնցու ցորենը գաղտուկ կը խաշէր և
 մարդը՝ առանց գիտնալու, կը տանէր կը
 ցանէր խաշած ցորենները: Այսպէս գնաց
 մէկ երկու տարի: Յորենները չէին բուս-
 ներ և մարդը ցորեն գնելով՝ պարտքի տակ
 ինկաւ և ելաւ գնաց պանդխտութեան:

Խորդ մայրը մինակ մնալով աճէն օր
եղով ճմուռ կը կերցէր իր տղային, իսկ
որբերուն՝ խաշած հատիկ։ Օր մըն ալ միտքը
զրաւ որբերն առնել տանիլ գետը՝ լողցնե-
լու համար և այն տեղ շուրին տալ, խեղ-
զել։ Այդ օրը՝ Մանուկն ու Մանուշը խա-
շատ հատիկն առեր, նստեր էին տանիքը,
ու կուտէին։ Տեսան որ ճնճողուկ մը կ'ելլէ
կ'իջնէ ու ճռուողելով՝ բան մը կ'ըսէ։ Մա-
նուկ ուզեց քարով զարնել. բայց Մանուշը
արգիլեց։ Ականջ դրին որ ճնճողուկն այսպէս
կ'ըսէր.

Ճիւ, ճիւ, ճիւ

Այ որբուկներ, որբուկներ,
ինձի հատիկ մը տուէք,
Հատիկն առնեմ ու տանիմ,
Տամ ձագերուս որ ուտեն.

Ես ալ ձեզի փոխարէն՝
Խրատ մը տամ օգտակար։

Քոյր ու եղբայր քանի մը հատիկ ձգե-
ցին ճնճողուկին։ Ճնճողուկը դարձաւ ու ը-
սաւ.

Ճիւ, ճիւ, ճիւ

Այ, որբուկներ, որբուկներ
Փախէք, փախէք զէպի լեռ,
Խորդ մայրն այսօր ձեզ պիտի

Գետը տանի, շուրին տալ,
Փախէք, փախէք, շուտ փախէք։

Ճնճողուկն առաւ հատիկներն ու թռաւ։
Քիչ վերջ՝ խորդ մայրն եկաւ ու ըսաւ։

— Ելէք, ձեզ գետը տանիմ, լողցնեմ։

— Դուն գնա, մենք հիմա կուգանք, ը-
սին որբերը և իրենք փախան լեռ։

Այնտեղ թափառեցան ասդին անդին ու
պուրակի մը մէջ մտան. հոն իրենց մեռած
մօր սորվեցուցած աղօթքն ըրին ու իրարու
փաթթուելով քնացան։ Իսկ խորդ մայրը եր-
բոր նայեցաւ որբերը չկան, շուզեց անգամ
կանոնք փնտռել։

Առտուն արեւցաթէն առաջ՝ ճնճողուկն
եկեր էր։ Որբերն արթնցան և լսեցին որ
ճնճողուկը կ'ըսէր։

— Ճիւ, ճիւ, ճիւ, որբեր, բարի որ-
բեր, եկէք, հատիկ կերէք։

Որբերն ուրախութեամբ վազեցին ճրնճ-
ղուկին ետեւէն և տեսան որ պառաւ մա-
միկ մը պտուկով խաշած հատիկ լեցուց
ծառի մը տակ ու գնաց։ Փոքրիկ թռչուն-
ներ ժողվուեցան ուտելու. որբերն ալ ա-
նոնց սեղանակից եղան։

Պառաւ մամիկը ամէն առտու կը բերէր
պտուկով հատիկը և այդ տեղ կը թափէր։

Մամիկն այնպէս կը հաւատար թէ այն փոք-
րիկ թռչունները իր մեռած պատիկ զաւակ-
ներուն հոգիներն էին և անոնցմէ մէկն ալ
իր թոռնիկը : Որբերը երկար ժամանակ կե-
րան այդ հատիկը և ապրեցան մանրիկ թռ-
չուններու հետ : Իսկ բարի ճնճղուկը գրեթէ
ամէն օր կ'այցելէր իրենց :

Օր մը իշխանին որդին որսի ելեր էր ,
մոլորեր լեռնէ լեռ՝ և եկեր այդ պուրակն
ինկեր էր : Իշխանագունը այնտեղ գտաւ
Մանուկն ու Մանուշը , զանոնք առաւ , ի-
րեն հետ տարաւ իր գոգեակը և իրեն հոգե-
զաւակ ըրաւ : Բոլոր պալատականները աչ-
քի լոյսի պէս կը սիրէին այս բարի որբերը ,
բայց անոնք ուրախ չէին :

— Ի՞նչ ցաւ ունիք , ձեզի պակաս բան
մը կայ , նեղութիւն մը պատճառող կայ ,
հարցուց իշխանը որբերուն :

Ասոնք ալ ըսին թէ կարօտը կը քաշէին
իրենց սիրեցեալ հօր , կարօտը կը քաշէին
իրենց բարի ճնճղուկին :

Իշխանագունը մարդ զրկեց , գտնել ու
բերել տուաւ որբերուն հայրը և վար զրաւ
զղեակին մէջ : Մանուկն ու Մանուշը ու-
րախութեամբ գրկուեցան իրենց հօրը հետ
և ալ գոհ ու զուարթ կ'ապրէին : Բայց ճրնճ-
ղուկը ինչպէս գտնէին : Ան ալ ինքիրեն ե-

կաւ , պատուհանէն ներս մտաւ ու կանչեց :
Ճիւլ , ճիւլ , ճիւլ , ճիւլ

Բարի որբուկներ , դուք օրհնեալ լինիք ,
Քանզի ձագերուս դուք հատիկ տուիք ,
Աստուած ալ ձեզի տուաւ շատ բարիք :
Ա՛յ ապրեցէք դուք յաւէտ երջանիկ :

Մնաք բարձով , մնաք բարձով . . . :
Ճնճղուկն այս ըսաւ ու թռաւ երկինք :
Հրեշտակ էր , ինչ էր , չհասկցուեցաւ :

102. — Պ Ա Ր Ե Ր Գ

Հո՛ փ-հո՛ փ. հո՛ փ-հո՛ փ. հո՛ փ-շա-շա.
Այս մեր երգը թո՛ղ ըլլայ .

Երկնից քակ
Կապուսակ ,

Կանաւի խոտերուն վրայ
Թո՛ղ մեր ձայնն ուրախ թրթռայ .

Եւ մեր ֆոյ
Հաճոյֆով՝

Մեր ծընողիկն հաճեցի
Մեզ դիտե աջն ու փայլի :

Հո՛ փ-հո՛ փ. հո՛ փ-հո՛ փ. հո՛ փ-շա-շա.
Այս մեր երգը թո՛ղ ըլլայ .



Ժիր, արթուն,
Եռանդուն,

Երբ մեր սիրքը բորբոսի
Տըւած ուժով մենք մենքի
Այսպէս մենք
Պար բռնենք.

Եւ միաբան, զըւարթ յար,
Դասնա՛նք, դառնա՛նք անդադար:

Հո՛ փ-հո՛ փ, հո՛ փ-հո՛ փ, հո՛ փ-լա-լա.
Այս մեր երգը թո՛ղ ըլլայ.

Քաջողջիկ
Մանց աղջիկ՝

Երբ թափելով սաք ֆրժիք
Մեր դասերուն կ'աշխատենք,

Պէ՛տ է որ
Մենք աղուոր

Դադարի ժամուն՝ ասանկ
Կասարեմք խաղ, զքօսանք:

Հո՛ փ-հո՛ փ, հո՛ փ-հո՛ փ, հո՛ փ-լա-լա
Այս մեր երգը թո՛ղ ըլլայ.

Միևչեւ որ
Զօրաւոր

Հնչէ մայնը զանգակին,
Եւ ամենքս ալ ժպտագին.

Լուռ բերան
Դասարան

Երբանք դեմքով գոհունակ,
Գրեմք, կարդանք շարունակ:

103. — ՀԵԶԻԿՆ ՈՒ ԴԵԻԸ

Կար ու չկար, ժամանակին խեղճուկ
որք տղայ մը կար որ մայր մը միայն ունէր:
Անունն էր Հեզիկ:

Այնչափ աղքատ էր որ նոյն իսկ չէր
կրնար ապրեցնել իր մայրը. ուստի որոշեց
պանդխտութեան ելլել, գործ գտնելու, ապ-
րուստ ճարելու համար:

Առտու մը կանուխ մայր ու տղայ լա-
լագին համբուրուեցան և Հեզիկ գաւազան
մը ձեռքը, պատիկ պարկ մը կոնակը, ճամ-
բայ ելաւ :

Շատ գնաց, քիչ գնաց, հասաւ աղբիւրի
մը քով : Յոգնած դադրած՝ նստաւ աղբիւ-
րին գլուխը և սրտին խորէն երկար օֆ մը
արձակեց :

Յանկարծ ջուրին աչքերը յուզուեցան
և աղբիւրին մէջէն ճերմակ մօրուքով ծե-
րունի մը ելաւ, տնկուեցաւ Հեզիկին գէմ :

— Ինչո՞ւ կանչեցիր զիս, ի՞նչ կ'ուզես
ինձմէ, հարցուց ծերունին :

— Ես քեզ չկանչեցի, ըսաւ տղան սար-
սափահար :

— Ի՞նչպէս չկանչեցիր, չէ՞ որ քիչ մը
առաջ օֆ կանչեցիր, իմ անունս Օֆ-պապա
է. ըսէ նայիմ, ո՞վ ես դուն, ի՞նչ կ'ուզես,
ո՞ւր կ'երթաս :

— Ես խեղճ, աղքատ որբ տղայ մըն
եմ. պանդխտութեան ելայ, գործ գտնելու
կ'երթամ :

— Ի՞նչ է արհեստդ :

— Ես արհեստ չունիմ :

— Առանց արհեստի ի՞նչ գործ պիտի
կրնաս ընել, քանի որ դուն աղքատ որբ

տղայ մըն ես, կը խղճամ վրագ, քիչ մը
ժամանակ կեցիր քովս, ես քեզի սորվեցնեմ
արհեստ մը. անկէ յետոյ գնա՛ ուր որ կ'ու-
զես, և կը յաջողիս ամէն գործի մէջ :

Հեզիկ շնորհակալութեամբ ընդունեց
Օֆ-պապային առաջարկը և կեցաւ անոր
քով : Օֆ-պապան ունէր հրաշալի արուեստ
մը. անանկ որ կրնար ուզած ատենը փոխ-
ուիլ անասունի, թռչունի, ծառի, բոյսի,
պտուղի և ուրիշ ինչ բանի որ ուզէ, և
ամէնէն պատիկ ծակերէն իսկ անցնիլ, դառ-
նայ : Բարի ծերունին վեց ամսուան մէջ
կատարելապէս սորվեցուց Հեզիկին իր ար-
ուեստին բոլոր գաղտնիքները և երբոր տե-
սաւ թէ այ վարպետին արժանի աշակերտ
եղած է, ճամբայ տուաւ անոր ըսելով :

— Տղաս, գնա՛, Աստուած հետդ ըլլայ,
բայց չըլլայ որ դէպի չարը գործածես սոր-
ված արհեստդ :

Հեզիկ երախտագէտ սրտով համբուրեց
Օֆ-պապային ձեռքերը և հեռացաւ : Օֆ-
պապան ալ աներեւոյթ եղաւ կրկին աղ-
բիւրին ջուրերուն մէջ :

Շատ գնաց, քիչ գնաց, հասաւ անծա-
նօթ գիւղ մը ուր գարմանքով տեսաւ թէ
բոլոր ընտանի կենդանիները այնքան նիհար

են, այնքան նիհար որ կաշի մը ու ոսկոր մըն են մնացեր : Պատճառը հարցուց գիւղացիներուն որ ըսին թէ այդ երկրին մէջ կը բնակի զարհուրելի դև մը որ բոլոր արօտները գրաւած է և բնաւ անասուն չի մօտեցներ որ արածին :

Հեզիկ գիւղացիներէն խնդրեց որ ինք ըլլայ գեղին հովիւր և ապահովուց զանոնք թէ ինք պիտի կրնայ արօտները ազատել դէին ձեռքէն : Գեղացիները պահ մը վարանելէ յետոյ՝ յօժարեցան և անոր յանձնեցին գեղին նախիրը :

Հետեւեալ օրը Հեզիկ նախիրը տարաւ կափ-կանանչ արօտավայր մը և անհոգ կերպով թող տուաւ որ այնտեղ արածին : Յանկարծ անդիէն դեւը եկաւ Փշալով, Փշֆշալով : Հսկայ հրէշ մըն էր անարկու կերպարանքով : Ճակտին վրայ կար միակ աչք մը որ հնոցի պէս կը վառէր, ունեզերէն ալտոտ շունչը կ'ելլէր ծխանի նման և լայն բերանը կը բացուէր խորունկ անդունդի մը պէս :

Դեւը տղան տեսաւ թէ չէ, աչքերէն կրակ ցայտեցնելով՝ վրան վազեց բերանը բացած : Հովիւր ակնթարթի մը մէջ անեղ առիւծի մը փոխուեցաւ և խոյացաւ դեւին վրայ :

Ժամերով կռուեցան իրարու հետ և վերջապէս դեւը շնչասպառ փախաւ գնաց :

Առիւծը դարձեալ հովիւ եղաւ և նախիրը մինչև իրիկուն հանգիստ արածելէ յետոյ՝ իրիկունն ապահով տարաւ գեղը : Գեղացիները շատ զարմացան հովիւին ողջ առողջ և նախիրին կուշտուկուռ վերագարձը տեսնելով :

Յաջորդ օրը Հեզիկ հօտը տարաւ ուրիշ արօտավայր մը : Հոն ալ դեւը եկաւ և այս անգամ տղան փոխուեցաւ կատաղի վագրի մը : Նորէն ժամերով կռուեցան և դեւը յոգնելով՝ փախուստ տուաւ ի վերջոյ :

Երրորդ օրը դարձեալ նոյն տեսարանը : Հովիւն այս անգամ փոխուեցաւ հզօր վիշապի մը և նորէն կռուեցան ժամերով աւելի կատաղօրէն : Վերջապէս դեւը ուժասպառ ինկաւ և այն պահուն որ վիշապը վերջին հարուածով մը պիտի սատկեցնէր զանի, դեւը յանկարծ տատրակի մը փոխուեցաւ ու թռաւ դէպի վեր :

Վիշապը անմիջապէս սրաթօռիչ բազէ մը եղաւ և սլացաւ տատրակին ետեւէն : Ան թռաւ, ինք սլացաւ և վերջապէս հասաւ տատրակին և երբ իր հուժկու մագիլները պիտի մխէր անոր փորը, տատրակը փոխուեցաւ կարմիր խնձորի մը և վերէն վար ինկաւ զողը թագաւորին որ այդ պահուն իր պարտէզին մէջ նստեր էր :

Թագաւորը զարմանքով ձեռքը առաւ այս երկնառաք խնձորը և երբ մատներովը զայն կը շոյէր կը շօշափէր, բազէն վերադարձաւ իր հովիւի կերպարանքին և տընկուեցաւ Թագաւորին առջև:

— Թագաւորն ապրած ըլլայ, ըսաւ, կը խնդրեմ որ այդ խնձորը ինձի տաս:

Եւ երբ Թագաւորը զժկամակութիւն կը ցուցնէր, հովիւը յարեց.

— Այդ խնձորին տեսքէն մի խաբուիր, ատիկա զգուելի դե մըն է որ կրնայ շատ փորձանքներ բերել զխուղ:

Թագաւորն այս խօսքը լսեց թէ չէ, խնձորը վերցուց անդին նետեց սոսկումով: Խնձորն իսկոյն փոխուեցաւ մուկի որ սկսաւ ծակէ ծակ փախչիլ արագօրէն: Հովիւն ալ կատու եղաւ և սկսաւ հալածել մուկը:

Մուկը նեղուած՝ բուռ մը մեզու դարձաւ և սկսաւ պտուտքիլ օդին մէջ կատուն ալ արտոյտի փոխուեցաւ և մեզուները մէկիկ մէկիկ սկսաւ ուտել:

Մեզուները յանկարծ զարի դարձան, Թափեցան գետին և խոտերուն մէջ կորսուեցան: Արտոյտն ալ իսկոյն փոխուեցաւ խուճը մը վառեակներու որոնք ակնթարթի

մը մէջ գետնէն ժողկեցին կերան զարիները: Եւ խաղը վերջացաւ:

Թագաւորը որուն աչքին առջև կը պատահէր այս հրաշալի խաղը, մինչդեռ զարմանքէ զարմանք կը գլորէր, հովիւ Հեզիկ գեղանի երիտասարդ մը դարձած՝ յաղթական կանգնեցաւ Թագաւորին առջև:

Հեզիկ պատմեց Թագաւորին բոլոր պատահածները: Թագաւորը հիացաւ մնաց երիտասարդին գեղեցկութեան, բարութեան և հրաշալի արուեստին վրայ, զանի շատ սիրեց, իր պալատն առաւ և որոշեց իր գեղեցիկ աղջիկը անոր կնութեան տալ:

Մարդ ուղարկելով՝ բերել տուին նաև Հեզիկին խեղճ մայրը և քառասուն օր, քառասուն գիշեր հարանիք ըրին:

Այս կերպով Հեզիկ փեսայ եղաւ Թագաւորին ու երջանիկ կեանք անցուց:



104. — ԱՐՁԱԿՈՒՐԴ

Եկէ՛ք , տղա՛ք , երթանք լեռ , ձոր ,
Վաղե՛նք , ցատքե՛նք , խաղանք գնդակ ,
Ու շատ ու շատ ընենք կատակ
Արձակուրդի ցնծալից օր :

Կը պսպրղան հովիտ , ծոր ծոր ,
Ա՛խ , սա Յուլիան ի՛նչ աղուոր է ,
Որ մանաւանդ մեզ կը բերէ
Արձակուրդի ցնծալից օր :

Ծառե՛րն ելլենք , ու տանձ , խնձոր
Քաղենք առատ և անխրնայ ,
Քանզի շուտով կը վերջանայ
Արձակուրդի ցնծալից օր :

Եկէ՛ք , տղա՛ք , ելլենք լեռ , ձոր ,
Խաղանք , խնդանք , ու դպրոցէ
Ողջա՛տ՝ գոչե՛նք . « կեցցէ՛ , կեցցէ՛
Արձակուրդի ցնծալից օր » :

Վ Ե Ր Ձ

Յ Ա Ն Կ

	Էջ
1. — Մեծ մանչը . (ոտանաւոր) . Յ . Գ .	5
2. — Յիսուսին նուէր . Ս . Դ .	6
3. — Պզտիկ , պզտիկ . (ոտան .) Ժողովրդական	7
4. — Երեք շողիկները . հետեւողութիւն	7
5. — Կանաչաւէտ դաշտին վրայ . (ոտան .)	9
6. — Ի՛նչպէս կը գրեն կատուն . Յ . Գ .	11
7. — Թիթեռնիկն ու մեղուն . (ոտան .)	13
8. — Արութիկն ու իր կապան . Ժողովրդական Յ . Գ .	14
9. — Պառաւիճ սագերը	15
10. — Փոքրիկ սնափառը . (ոտան .)	16
11. — Աքաղաղին ընտանիքը	17
12. — Հաւ-մայրիկը . (ոտան .) Ա . Փանոսեան	19
13. — Խաղասէր աղջիկները . Յ . Գ .	20
14. — Խուսափուկ լուսնկան . (ոտան .) Ռ . Որբերեան	22
15. — Փոքրիկ հերոսը . հետեւողութիւն . Յ . Գ .	23
16. — Պուպրիկը . (ոտան .) Ժողովրդական . Մ . Յ .	25
17. — Լեզուի խաղեր . Յ . Գ .	25
18. — Տերեւներուն մահը . հետեւողութիւն . Յ . Գ .	28
19. — Տղան ու թռչունը . (ոտան .)	29
20. — Թանկագին խոտը . քարզմ .	30
21. — Փոքրիկ հրեշտակը . (ոտան .)	31
22. — Հալածական գայլը	32

23.— Աստուծոյ աչքերը. (ոտան.) Ա. Կ. Պետիկեան	33
24.— Գիրքը	34
25.— Որբին պահանջը. (ոտան.) Մ. Մամիկոնեան	37
26.— Կարկառանը	38
27.— Մանկական նուագահանդէս. (ոտան.)	40
28.— Խելացի Համբիկ	42
29.— Ծառերուն գանգատը. (ոտան.) Ղ. Աղայեան	43
30.— Քաղաքավար տղան	45
31.— Թիթեռնիկին հարսնիքը. հետեւողութիւն	46
32.— Կաչաղակն ու ագռաւը. (ոտան.) Հ. Հայրապետ.	49
33.— Պղտիկ գիտունը. հետեւողութիւն	50
34.— Իշուկս. (ոտան.) Սասկան Վրդայս.	52
35.— Մատենմատը. հետեւողութիւն	54
36.— Ջուրին երգը. (ոտան.)	56
37.— Հոճան և իր էջը. ժողովրդական. Յ. Գ.	57
38.— Թոմարու Մինէ. (ոտան.) Ն. Կ.	59
39.— Բարութիւն և գեղեցկութիւն	60
40.— Զմեռուան գալը. (ոտան.) Ա. Իսահակեան	61
41.— Աքաղաղը, էջը և առիւծը. քարգւլ.	62
42.— Կոչկակարը. (ոտան.) Ս. Դ.	64
43.— Փոքրիկ աղջիկն ու հայելին	65
44.— Հայկական կաղանդ. (ոտան.) Յ. Գ.	66
45.— Զարխօսիկ Պաղաօն. ժողովրդ. Յ. Գ.	67
46.— Լինէի. (ոտան.) Պաղասաւր Դպիր	69
47.— Ժիր Զապէլը	70
48.— Փոքրիկ զինուորը. (ոտան.) Յ. Գ.	72

49.— Ծաղիկներուն երազը. Մ. Թաւափայեան	73
50.— Ծնունդի երգ. (ոտան.) Մերուժան	75
51.— Զո՛վ ընտրեց շունը. հետեւողութիւն	76
52.— Շունը. (ոտան.) Ս. Դ.	78
53.— Մանուկն ու արձագանգը. քարգւլ.	80
54.— Կենդանի պուպրիկը. (ոտան.) Ակիւրիկ	81
55.— Շողիկն ու Փայլիկը. Դ. Դեմիրջեան	82
56.— Զինէ Ճարգը. (ոտան.)	86
57.— Զինագուռը	87
58.— Բարեկենդան. (ոտան.) Յ. Գ.	88
59.— Գարունին հրաւերը. նմանողութիւն	89
60.— Այ ի՛նչ կ'ուզենք. (ոտան.)	92
61.— Մարգարիտին սերմը	93
62.— Հայկական Զափկ. (ոտան.) Մ. Ասատուր	96
63.— Պոչաւոր սուտեր. նմանող.	97
64.— Մանուկին իղձը. (ոտան.) Գր. Արմուճի	99
65.— Բերնէ բերան. հետեւողութիւն. Յ. Գ.	100
66.— Մեղուն ու ճանճը. (ոտան.)	102
67.— Տանձենին և դրուժը	104
68.— Առուկը. (ոտան.) Ս. Դ.	105
69.— Թիթեռնիկին զրոյցը. հետեւողութիւն. Յ. Գ.	107
70.— Իմ գառնուկս. (ոտան.) Ա. Փ.	108
71.— Երեք ընկերներ. հետեւողութիւն	110
72.— Զորս նուէրներ. (ոտան.) Ռ. Ո.	113
73.— Անճման գործակիցներ. հետեւող. Յ. Գ.	114
74.— Մանուկը՝ ժամացոյցին. (ոտան.) Ռ. Ո.	115

էջ

73

75

76

78

80

81

82

86

87

88

89

92

93

96

97

99

100

102

104

105

107

108

110

113

114

115

	էջ
75.— Միութեան ուժը. քարգւ.	117
76.— Մրջիւնն ու տղան. (ոտան.) Յ. Յարութիւնեան	118
77.— Գեղացին ու սատանան. ժողովրդական Յ. Գ.	119
78.— Ընկոյղը. (ոտան.) Ս. Գ.	121
79.— Մկրատով կը հնձեն. ժողովրդ. Յ. Գ.	122
80.— Լեւոնիկը. (ոտան.) Կ. Ոսկեան	123
81.— Ապրիլի մէկը Յ. Գ.	125
82.— Թռչունին մտածումը. (ոտան.) Յ. Թումանեան	128
83.— Կաթիլներու ճամբորդութիւնը. հեւեռոյ.	129
84.— Հնդկահաւն ու տղաքը. (ոտան.) Ա. Փանոսեան	132
85.— Երեք հսկաներ. Յ. Գ.	134
86.— Վիճակի երգ. (ոտան.)	136
87.— Շահուած ոսկին. ժողովրդ Յ. Գ.	137
88.— Օրորերգ. (ոտան.) ժողովրդ.	140
89.— Փոքրիկ տղեկն ու հսկան. քարգւ.	143
90.— Ատաղձագործներ. (ոտան.)	146
91.— Ծիծեռնակին ծնունդը. Լեւոնոյ. Ա. Թեոդիկ	147
92.— Այծը. (ոտան.) Ա. Փանոսեան	149
93.— Գամին պատմութիւնը. հեւեռոյ.	151
94.— Դարբնոցին մէջ. (ոտան.) Կ. Տեւիտեան	153
95.— Թռչուններուն թագաւորը. քարգւ.	154
96.— Պանդուխտին երգը. (ոտան.)	159
97.— Ագահ կօշկակարը	160
98.— Ագարակապանուհին. (ոտան.) Ս. Հայեպեան	163
99.— Հայելին, կապերան ու սրուակը. ժղր. Յ. Գ.	165

	էջ
100.— Գարունն ու ամառը. (ոտան.) Մ. Ասատուր	170
101.— Ժնճղուկն ու որբերը. ժողովրդ.	171
102.— Պարերգ (ոտան.) Գ. Ապստոգեան	175
103.— Հեզիկն ու դեւը. ժողովրդ. Յ. Գ.	177
104.— Արձակուրդ. (ոտան.) Ա. Գ. Պետիկեան	184

104

184



219

ՅԱՆԿ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐՈՒ

Հանելուկ	Թիւ	Գլուխի մագ
»	1	Գլուխի մագ
»	2	Բոյր
»	3	Խղունջ
»	4	Այլ
»	5	Թուղթ
»	6	Ասեղ
»	7	Երկինք եւ աստեր
»	8	Բերան եւ լեզու
»	9	Ականջ
»	10	Կառքի չորս անիւները
»	11	Համաարին պատրոյզը
»	12	Ծուխ եւ ծխան
»	13	Արձապան
»	14	Զիւն
»	15	Խաւար
»	16	Լեզու
»	17	Գէտ
»	18	Արեւ
»	19	Ժամացոյց
»	20	Ընկոյզ
»	21	Անձրեւ
»	22	Տապալ
»	23	Կղզակ
»	24	Կրակ
»	25	Աւել

հայ



2018 3378

« Ազգային գրադարան



NL0062480

